

Օ Ր Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ·

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑԻ·

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 3.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն·

Թուրանդոթ, Ս. Նազարեանցի . . . . 169—232.
Ջէմս Ուաթ, Գ. Նահապետեանցի . . . . 233—247.
Նամակ առ Հրատարակողը, Թէոդորոս Լալազարեանցի . . . . 247—250.
Մի քանի խօսք խորագիմայութեան վերայ, Ս. Նազարեանցի . . . . . . 251—253.
Մահացուցակ Աննա տիկնոջ Փանեանց . . . . 254—256.

ՄՈՍԿՎԱ,

Imprimerie Gratscheff et C°.

1859.

ՄԱՐՏ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

—

ԹՈՒՐԱՆԴՕԹ,

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆԱԶՆՈՒՀԻՆ։

(Շիլլեր, գերմանական բանաստեղծի գործերից։)

Այս գործը լինելով եղերերգական կատակերգութիւն (Տրագիկօ-կօմեդիա), որ մշակել է Շիլլեր բանաստեղծը հետևելով սկզբնական իտալացի հեղինակին, Գոցցի անունով, հարկաւոր է ընթերցողին նախ և յառաջ ծանօթանալ այս անձներին, որ հանդէս են դուրս գալիս և խօսումեն, այսինքն·

ԱԼԹՈՒՄ, *մի առասպելական կայսր Չինաստանի։*

ԹՈՒՐԱՆԴՕԹ, *նորա դուստրը։*

ԱԴԵԼՄԱ, *մի թաթար իշխանազն աղջիկ, նորա աղախինը։*

ՍԵԼԻՄԱ, *մի այլ աղախին Թուրանդօթի։*

ՍՔԻՐԻՆԱ, *Սելիմայի մայրը։*

ԲԱՐԱՔ, *նորա ամուսին այրը, յառաջուց պալատական տնտես։*

ԽԱԼԱՖ, *արքայազն Հաշտարխանու։*

ԻՍՄԱՅԷԼ, *ուղեկիցը Սամարկանդու թագաւորազնի։*

ՏԱՐՏԱԼԻԱ, տէրութեան մինիստր:
ՊԱՆՏԱԼՕՆ, տէրութեան դիւանապետ:
ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ, ներքինապետ:
ԲՐԻԳԵԼԼԱ, պահապանների գլխաւորը:
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔԸ դիւանի:
ԾԱՌԱՅՔ ԵՒ ԱՂԱԽԻՆՔ կանանոցի:

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ·

Տեսարանի տեղը է Պեկինի քաղաքագաւիթը, հանդիպահայեաց դէպ ի քաղաքի դարպասների մինը, որի վերայ ցցուած են երկաթի գաւազաններ, և սոցա վերայ կարգով հաստատած են որպէս դիմակներ, խուղած գլուխներ շատ, տաճկական ձևով փունջ փունջ արած մազերը, այնպէս, որ այդ դիմակները կարող էին երևել որպէս զարդարանք:

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ·

Իշխանազն Խալաֆը, թաթարեան ձևով, մի փոքր խորթաբար զգեստաւորված, դուրս է գալիս մի տանից: Նորանից յետոյ իսկոյն Բարաքը վերադառնալով քաղաքից:

ԽԱԼԱՖ·

Շնորհակալ եմ ձեզանից, աստուածներ. և Պեկինումը կարողացայ ես մի պատուական հոգի գտանել:

ԲԱՐԱՔ·

(Պարսիկ զգեստով հանդէս է գալիս, տեսանումէ Նորան և զարմացած յետ է քարշվում·)

Աչքերս ուղի՞ղ են տեսանում· արքայազն Խալա՞ֆն է դա· Մի՞թէ կենդանի է դեռ ևս:

Խալաֆը (ճանաչեց Նորան)·

Բարա՛ք, դո՞ւ ես:

ԽԱԼԱՖ·

·Քեզ գտանո՞ւմեմ այս տեղ· զարմանք:

ԲԱՐԱՔ·

Ձեզ վերստի՞ն տեսանումեմ կենդանի·
Եւ այս տեղ Պեկինի մէ՞ջ:

ԽԱԼԱՓ.

Լուռ կաց, մի՛ մատնիր ինձ.
Թէ մեր մեծ, Լամա աստուածը կը սիրես, ասա՛,
Ի՛նչ բերուածքով այս տեղ ես դու։

ԲԱՐԱՔ.

Աստուածների խնամատարութեամբը, պիտոյ է մտածել ինձ,
Թէ յաջողվել է ինձ այս տեղ հանդիպել ձեզ.
Այն ձախորդութեան օրին, երբ որ ես տեսայ,
Թէ մեր ազգերը փախչումէին և Թիֆլիզի բռնաւորը
Անընդդիմանալի ներս էր մտանում մեր Թագաւորութեան մէջ,
Յետ փախայ ես, չարաչար վիրաւորված դէպ ի Հաշտարխան.
Այս տեղ լսեցի ես, Թէ դուք և Թագաւոր Թիմուրը, ձեր հայրը,
Կռուի մէջ կորուստ է գտել։ Իմ ցաւս պատմում չեմ ձեզ.
Ամենայն բան կորած էր իմ աչքումը. անզգայացած շտապեցի
Ես դէպ ի պալատը, ձեր Թագուհի մայր Էլմասը փրկելու.
Բայց զուր եղան իմ բոլոր ջանադրութիւնքը։
Յաղթողը արդէն ներս էր մտանում Հաշտարխանի մէջ.
Եւ յուսահատութեան մէջ շտապեցի ես դուրս գալ դարպասներից։
Աշխարհից աշխարհ Թափառեցայ ես որպէս փախստական,
Արդէն երեք տարի այս տեղ այն տեղ պատսպարան որոնելով,
Մինչև վերջումը կարողացայ հասանել Պեկինին։
Այս տեղ, անունս Հասան դնելով, յաջողվեցաւ ինձ
Հաւատարիմ ծառայութեամբ մի այրի կնոջ շնորհ
Գտանել, և նա դարձաւ իմ ամուսնակից կին.
Նա չգիտէ իմ ազգատոհմը. նա ինձ համարումէ Պարսիկ.
Այս տեղ ապրումեմ Թէպէտ աննշան ու չքաւոր,
Իմ առաջին վիճակից յետոյ, բայց շատ ու շատ հարուստ
Այս րոպէիս, որովհետև արքայազն Խալաֆը,
Իմ Թագաւորի որդին, որ մեծացրել եմ ես,
Որ ես ամբողջ տարիներ, արտասուած եմ որպէս մեռած,
Կրկին տեսանումեմ. բայց ի՛նչպէս կենդանի էր նա,
Ի՛նչ դիպուածով այս տեղ Պեկինումը։

ԽԱԼԱՓ.

Իմ անունս մի՛ տուր։ Այն ձախորդ կռուից յետոյ
Հաշտարխանի մօտ, որ հանեց մեր ձեռքից Թագաւորութիւնը,
Շտապեցի ես իմ հօր մօտ դէպ ի պալատը.
Շուտով ժողովեցինք մեք առաւել Թանգագին բաները,
Ինչ որ պատուական քարերից ձեռք ընկաւ, և փախանք.

Շինական հանդերձով փաթաթված թափառեցանք
Մեք, թագաւորը և Էլմասը, իմ մայրը,
Անապատների ու ապառաժ սարերի միջով։
Աստուած իմ, ի՜նչ նեղութեան տարած չենք. Կովկասի
Ոտքումը մի վայրենի ժողովուրդ, Մալանդրինքը կողոպտեցին
Մեր գանձերը, մեզ մնաց միայն մեր մի գլուխ կեանքը։
Մեզ պիտոյ էր պատերազմել սովի տանջանքների հետ
Եւ ամենայն թշուառութեան բազմօրինակ տառապանքի։
Հայրս կրումէի երբեմն, և երբեմն մայրս
Իմ ուսերի վերայ, մի քաղցր ու ախորժ բեռն.
Հազիւ ընդդիմացայ ես իմ հօր կատաղի յուսահատութեանը,
Որ նա սուրը չքարշէր իւր կեանքի վերայ.
Հազիւ կարողացայ պահել մայրս, որ ցաւից մաշված,
Գետին չկործանվէր։ Այսպէս հասանք վերջապէս
Նայք, Թաթարների քաղաքին, և այս տեղ
Մզկիթների դրանը ստիպուած էի աղաչել մի մուրացկան,
Որ մի փոքր հաց տայ ինձ, սիրելի ծնողներիս կեանքը պահպանելու.
—Մի՛ նոր անբաղդութիւն. մեր անգութ թշնամին,
Թիֆլիզի խանը, բռնաւորական ախտից չհաւատալով
Համբաւին, թէ մեք մեռած էինք,
Հրամայել էր ամենայն աշխարհներում հալածել մեզ։
Մեզանից յառաջ արձակվել էր արդէն նորա հրամանը,
Որ բոլոր նորա իշխանութեանը ենթարկված թագաւորների վերայ
Հարկ ու պարտք էր դրել նայել մեր քամակից։
Շուտ փախչելով միայն, կարող էինք մեք
Նորա որոնողների հսկողութենից ազատվել. —
Ո՜հ, ո՛ւր պիտոյ է թաքչէր մի աթոռից վայր ընկած թագաւոր։

ԲԱՐԱՔ.

Մի՛ պատմիր աւելի. ձեր խօսքերը ճեղքումեն իմ սիրտը.
Մի մեծ իշխան, այդպիսի թշուառութեան մէջ։
Ասացէ՛ք միայն, կենդանի՞ է դեռ ևս իմ տէրը,
կենդանի՞ է Էլմասը, իմ թագուհին։

ԽԱԼԱՖ.

Նոքա կենդանի են.
Եւ իմացած կացիր, Բարաք, որ նեղութեան մէջ միայն
Ստուգվումէ հայակապ հոգիների ազնուութիւնը։
—Մեք եկանք Կարաղանների աշխարհը։
Այն տեղ, Քէյկօբադ թագաւորի այգիներումը

Պիտոյ էր ինձ յանձն առնուլ ծառայական պաշտօններ,
իմ անձը պաշտպանելու դառնապէս սովամահ լինելուց։
Ինձ տեսաւ այն տեղ Ադելման, Թագաւորի դուստրը.
Իմ դրութիւնը շարժեց Նորա սիրտը. երեւումէր, Թէ Նորա սիրտը
Աւելի քաղցր ախտերով, քան Թէ միայն ցաւակցութեամբ
Ձգտումէր դէպ ի օտարական այգեպանը։
Սրատես է սէրը. երբէք կարող չէր Նա հաւատալ,
Թէ ես այն պաշտօնի մէջ, որի մէջ ինձ տեսանումէր, ծնած էի.
—Բայց չգիտեմ, ի՛նչ չար աստղի կարողութիւն
Կորազանների Թագաւոր Քէյկօբադին կուրացրեց,
Պատերազմ բանալ հզօր Ալթումի, Չինէացոց մեծ խանի հետ։
Ժողովուրդը պատմումէր դորա մասին շատ խորթ բաներ.
Ինչ որ ես կարող եմ ասել, այս է. յաղթվեցաւ
Քէյկօբադը, Նորա բոլոր ազգատոհմը բնաջինջ եղաւ.
Նոյն իսկ Ադելման, Թագաւորի միւս եօթն աղջիկներով
Խեղդամահ արվեցան մի գետի մէջ։
--Բայց մեք փախանք մի այլ աշխարհ.
Այսպէս երկար Թափառելուց յետոյ, վերջումը
Հասանք մեք Բերլաս քաղաքին—ի՛նչ է մնում ինձ ասելու.
Չորս տարի, հասուցանումէի ծնողներիս կերակուր,
Ընչին օրական վարձով բեռն կրելով։

ԲԱՐԱՔ.

Բաւական է, որքայազն։ Թո՛ղ մոռանանք Թշուառութիւնը.
Որովհետեւ այժմ տեսանումեմ ձեզ պատերազմական զարդարանքով
Եւ քաջազնական փառահեղութեան մէջ։ Ասացէ՛ք, ի՛նչպէս եղաւ
Բաղդի յաջող դարձուածը դէպ ի ձեզ։

ԽԱԼԱՓ.

Յաջող դիպուա՞ծը դէպ ի մեզ. լսի՛ր.
Բերլասի խանի ազնիւ բաղէն, որ շատ Թանգագին
Էր Նորա աչքումը, փախել էր.
Ես գտայ Նորան և բերեցի ինքս Թագաւորին.
Նա հարցրեց իմ անունը. ես յայտնեցի Նորան,
Թէ մի Թշուառական էի, որ կերակրումէր
Իւր ծնողքը բեռնակրութեամբ։
Ապա հրամայեց խանը իմ հայրը և մայրը
Պահպանել անկելանոցումը։

(Նա մի րոպէ դադարումէ.)

Ուրա՛ք, այն տե՞ղ,
Ամենամեծ թշուառութեան օթեւանումը,
Այն տե՞ղ է քո թագաւորը — քո թագուհին։
Եւ այն տեղ ապահով չէ, և այն տեղ դեռ ես վտանգի մէջ,
Մի՛ գուցէ ճանաչվէր և սպանվէր։

ԲԱՐԱՔ.

Աստուած իմ.

ԽԱԼԱՓ.

Կայսրը հրամայեց մատուցանել ինձ այս արծաթի քսակը,
Մի գեղեցիկ ձի և այս, քաջ տղամարդի հանդերձը։
Իմ ծերունի ծնողներին ասացի ես. բարեաւ մնացէք.
Ես գնումեմ, ձայն տուեցի, իմ դրութիւնս բարւոքելու,
Ապա թէ ո՛չ, կը վերջացնեմ այս ողբալի կեանքը.
Ի՛նչքան աշխատեցին նոքա յետ պահել ինձ,
Բայց որովհետեւ հաստատ մնացի ես, ապա
Ուղեկից եղան ինձ. Աստուած մի՛ արասցէ, որ
Նոքա ուրացած լինէին իւրեանց ծնողական գութը, և
Ցաւակից սրտով չլինէին հետեւած իմ քամակից.
Այս տեղ եմ այժմ Պեկինումը, ամենեին անծանօթ,
Հարիւրաւոր մղոններով հեռի իմ հայրենիքից.
Ես եկայ այս տեղ հաստատ կամքով, որ մեծ խանին
Չինաստանի ծառայեմ որպէս զինուոր,
Եւ եթէ բաղդը կը շնորհէր ինձ,
Մի քաջագործութեամբ բարւոքեմ իմ դրութիւնը։
—Չգիտեմ, ի՛նչ տօնախմբութիւն էր, որ քաղաքը
Լցուցանումէ օտարականներով, որ ո՛չ մի քարվանսարայ
Օթեւան չտուեց ինձ։ — Այն տեղ, այն չնչին խուղի մէջ
Մի կին բարեսրտութեամբ օթեւան տուեց ինձ։

ԲԱՐԱՔ.

Արքայազն, դա իմ կինս է։

ԽԱԼԱՓ.

Քո կի՞նը.
Երանի՛ տուր քո բաղդին, որ մի քաղցրասիրտ կին
Տուել է քեզ ամուսնակից։

(Նա պարզումէ ձեռքը դէպ ի նա.)

Այժմ բարեաւ մնա։
Ես երթումեմ դէպ ի քաղաք. սիրտս դրդումէ ինձ

Տեսանել այն տօնախմբութիւնը, որ այդքան մարդիկ
Ժողովել էր այն տեղ։ Ապա յանդիման կը լինիմ ես
Մեծ խանին և կը խնդրեմ նորանից շնորհ ցուցանել
Եւ թոյլ տալ ինձ ծառայել նորա զօրքի մէջ։
(Նա կամենումէ հրաժարվիլ, բայց Բարաքը յետ է պահում նորան․)

ԲԱՐԱՔ․

Մնացէք, արքայազն, ու՞ր էք կամենում գնալ — Մի՞թէ կամիք
Դուք ականատես լինել մի անողորմ տեսարանի․
Իմացած լինիք, ազնիւ արքայազն, դուք եկած էք այս տեղ,
Մի անլսելի գործերի հանդիսարան։

ԽԱԼԱՖ․

Ընդէ՞ր․ ի՞նչ ես մտածում դու։

ԲԱՐԱՔ․

Ի՞նչպէս, մի՞թէ չգիտէք դուք,
Որ Թուրանդօթը, կայսրի մի հատ դուստրը
Բոլոր տէրութիւնը ցաւի ու արտասուքի մէջ է ընկղմել․

ԽԱԼԱՖ․

Այո․ վաղուց արդէն Կարազանների աշխարհումը
Լսած եմ մի այդպիսի բան — և խօսք էր լինում,
Թէ Քէյկօբադ թագաւորի որդին մի անսովոր,
Ողբալի կերպով Պեկինումը կորուստ է գտել —
Եւ թէ այս բանը վառել է այն պատերազմի կրակը,
Որ վերջացաւ նորա թագաւորութեան կործանմամբը։
Բայց մի մի բաներ հաւատում ու շատախօսումէ յիմար ամբոխը,
Որի վերայ խելացին ծիծաղումէ — Այս պատճառով
Ասա դու ինձ, ի՞նչպէս է բանի իսկութիւնը․

ԲԱՐԱՔ․

Մեծ խանի մի հատ դուստր Թուրանդօթը
Իւր խելքով ու գեղեցկութեամբ գովասանված,
Որ ո՛չ մի պատկերահանի գրիչ կարող չէ հասանել նորան,
Թէև նորա շատ պատկերները շրջումէին աշխարհիս մէջ,
Այդ աղջիկը ունի իւր մէջ մի այնպիսի մեծամտութիւն,
Այնպիսի ատելութիւն դէպ ի ամուսնութեան լծակցութիւնը,
Որ ամենամեծ թագաւորները զուր էին ջանացել
Ստանալ դորա հարսնութիւնը։ —

ԽԱԼԱՖ·

Այդ հին առասպելը

Լսած եմ արդէն քէյկօբադի պալատումը,
Եւ ծիծաղել եմ դորա վերայ — բայց դու խօսքդ յառաջ տար։

ԲԱՐԱՔ·

Դա առասպել չէ։ Շատ անգամ արդէն կամեցած է
խանը նորան, որ իւր թագաւորութեան մի հատ ժառանգն էր,
Ամուսնացնել մեծ թագաւորների որդիների մինի հետ։
Բայց միշտ ընդդիմացած է հպարտ դուստրը·
Եւ ափսոս, շատ կոյր է խանի հայրական սէրը,
քան թէ կը համարձակվէր նա ստիպանք գործ դնել։
Շատ և ծանր պատերազմեր յարուցել է նա արդէն
իւր հօր վերայ, և թէպէտ սա մինչև այժմ յաղթող
է գտնվել ամենայն կռուի մէջ, բայց նա ծերունի է
Եւ անժառանգ դողդոջում դէպ ի գերեզման։
Այս պատճառով հայրը միանգամ ծանրութեամբ մտածելով
Ասաց նորան այս խիստ խօսքերը· «Կամակոր աղաւնի,
Ցանձն առ միանգամ հարսնանալ մի փեսայի,
Ապա թէ ոչ, հնարաստեղծիր մի այլ ճանապարհ
Ազատելու տէրութիւնը այս անվերջ պատերազմերից։
Պատճառ, ծեր եմ ես· անչափ շատ թագաւորներ,
Թշնամիք ունիմ որ մերժել է քո հպարտութիւնը։
Ուրեմն ասա դու ինձ մի հնար, որով կարող էի ես
Ազատել իմ անձը այս անվերջ երթևեկութեններից,
Եւ յետոյ ապրիր դու, կամ մեռիր, ինչպէս հաճոյ է քեզ։»
Այս ծանր խօսքերից դղրդեցաւ հպարտ աղջկայ սիրտը,
Եւ ղուր էր նորա աշխատութիւնը ազատել իւր անձը։
Արտասուքի հնարները և աղաչանքի կարողութիւնը
Գործ դրեց նա բոլորովին, հօր սիրտը շարժելու·
Բայց անողոքելի մնաց խանը — վերջապէս
Խնդրում նա իւր վատաբաղդ ծնողից,
Խնդրում — լսի՛ր, ի՞նչ է խնդրում այն փուրիան։

ԽԱԼԱՖ·

Ես լսած եմ այդ բանը· այդ անալի առասպելի վերայ
Արդէն շատ անգամ ծիծաղել եմ — լսի՛ր, գուցէ՛ տեղեակ եմ դորան·
Նա պահանջում իւր հօրից մի հրովարտակ,
Թէ ամենայն թագաւորացն երիտասարդի
Թոյլ տուած էր խնդրել նորա հարսնութիւնը·

Բայց դորա պայմանը լինելու էր այսպէս·
Դիւանի հրապարակի մէջ, կայսրի առաջև·
Նորա բոլոր խորհրդականների առաջև կամէր նա
Երեք առակ մէջ բերել։ Եթէ սորանց կը մեկնէ
Հարսնախօսը, ապա թող ստանայ իւր հարսնութիւնը,
Եւ դորա հետ միասին թագ ու թագաւորութիւնը։
Բայց եթէ չկարողացաւ մեկնել, այնուհետև պիտոյ է
կայսրը իւր աստուածներով երդումն ուտէ, թէ պարտական է
Անբաղդ երիտասարդի գլուխը կտրել տալ։ —
Ասա՛, այսպէս չէ՞· այժմ աւարտիր դու
Քո առասպելը, եթէ ձանձրացած չէիր։

ԲԱՐԱՔ·

Իմ առասպե՞լս· Աստուած տար· —Թէպէտ կայսրը
Նախ և յառաջ ընդդէմ՝ էր դորան· բայց այն օձ աղջիկը
կարողացաւ երբեմն փայփայողական խնդրանքով, երբեմն
Խորամանգ ճարտարախօսութեամբ որսալ այն աչարկու
Օրէնքը իւր թոյլ ծեր հօր ձեռքից։
Եւ ի՛նչ մի ծանր բան էր· խօսումէր աղջիկը չար խորամանգութեամբ·
Ո՛չ մի թագաւորազն երկրի վերայ լինելու էր այնքան խելագար,
Որ համարձակվէր իւր գլուխը դնել այդպիսի արիւնոտ գործի մէջ·
Ուրեմն հարսնախօսերի բազմութիւնը կը հեռանայ երկիւղից,
Եւ ես կ'ապրեմ խաղաղութեամբ· բայց եթէ կամէր
Մի երիտասարդ այդպէս խելագարվիլ, ապա թող յանձն առնու
Նա վտանգը, և իմ հայրը անմեղադրելի էր,
Լցուցանելով իւր սուրբ օրինադրութիւնը·
Երդումով հաստատվեցաւ այն անբնական օրէնքը
Եւ հրատարակվեցաւ բոլոր աշխարհների մէջ։

(Խալաֆը շարժումէ գլուխը·)

—Նրանի՛ թէ պատմած լինէի ես առասպել միայն,
Եւ կարողանայի ասել· բոլորը մի երազ էր·

ԽԱԼԱՓ·

Որովհետև դու պատմումես այդ բանը, հաւատումեմ՝ այդ օրէնքը·
Բայց անտարակոյս, ո՛չ մի թագաւորազն կարող չէր լինել այնքան
Խելագար, որ իւր գլուխը այդպիսի վտանգի տակ դնէր։

ԲԱՐԱՔ·

(Մատով ցուցանումէ քաղաքի դարպասը·)

Տեսէ՛ք, արքայազն·
Այդ բոլոր գլուխները, որ այն տեղ դարպասների վերայ
Տեսանվում են, թագաւորազնների գլուխներ են,
Որ լինելով այնքան խելագար, յանձն առան վտանգը,
Եւ ողբալի կերպով աւարտեցին իւրեանց կեանքը,
Որովհետև այս Սֆինքսի առակները
Չկարողացան մեկնել։

ԽԱԼԱՓ·

Սարսափելի տեսարան·
Մի՛ թէ կար աշխարհի վերայ մի այնպիսի տխմար ոք,
Որ իւր գլուխը վտանգի տակ դնէր մի անգութ կնոջ համար։

ԲԱՐԱՔ·

Ոչ· մի՛ ասա այդպէս· ով որ միայն նորա պատկերը
Տեսած էր, որ ամենայն տեղ ցոյց են տալիս միմեանց·
Զգում էր իւր անձը ըմբռնված մի այնպիսի կախարդական զօրութենից,
Որ նա կուրօրէն վազում էր դէպ ի մահ,
Այն աստուածեղէն գեղեցկատիպը ստանալու համար։

ԽԱԼԱՓ·

Հա, որ և իցէ անմիտ երիտասարդ։

ԲԱՐԱՔ·

Ո՛չ· և ամենախոհեմ մարդը·
Այսօր մեծ բազմութիւն հաւաքվել է այս տեղ,
Որովհետև Սամարկանդի թագաւորազը, այն
Ամենախելացի տղամարդը, որ տեսված էր աշխարհում,
Պիտոյ է գլխատվի։ Խանը մեծ տրտմութեան մէջ է,
որ պէտք է լցուցանէր մի սարսափելի պարտականութիւն·
Բայց անմեղկելի ցնծում է այն հպարտ գեղեցիկ աղջիկը։
(Լսում են հեռուից մեղմաձայն թմբուկների շառաչիւն·)
Լսեցէ՛ք, լսեցէ՛ք· այդ անորոշ թմբկաձայնը
Ծանուցանում է, թէ կատարվում է մահու հարուածը·
Չկամենալով ականատես լինել դորան, հեռացայ ես քաղաքից։

ԽԱԼԱՓ·

Բարաք, դու պատմում ես ինձ անլսելի բաներ·
Ի՛նչպէս, մի՛ թէ կարող էր բնութիւնը մի կանացի
Արարած, ինչպէս այդ Թուրանդօթն է, ծնուցանել,
Այդպէս բոլորովին անման սիրուց ու մարդկութենից։

ԲԱՐԱՔ.

Իմ կինս ունի մի դուստր, որ հարեմումը ծառայում է
Որպէս աղախին, և մեզ անհաւատալի բաներ է պատմում
Իւր գեղեցիկ Թագուհու մասին։
Մի անգութ գազան է այդ Թուրանդօթը,
Բայց դէպ ի տղամարդիկը միայն, որ խնդրում են
Նորա հարսնութիւնը։ Սակայն քաղցրասիրտ է նա
Դէպ ի ամենքեան։ Հպարտութիւնը մի հատ արատն է,
Որ ապականում է նորա պարծանքը։

ԽԱԼԱՖ.

Դժոխքը, ամենախորին վիրապի կոկորդը կուլ տայ
Այդ անճոռնի արարածքը բնութեան,
Որ սառն ու անգութ սիրում են իւրեանց անձը միայն.
Եթէ լինէի ես նորա հայրը, ապա կրակի
Կերակուր պիտոյ է անէի այդ աղջիկը։

ԲԱՐԱՔ.

Ահա գալիս է Իսմայէլը, բարեկամը
Թագաւորազնի, որ այժմ կորուսել է իւր կեանքը.
Նա գալիս է արտասուելով — Իսմայէլը։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Իսմայէլը դարձուցանում է դէմքը դէպ ի վերոյիշեալքը.

ԻՍՄԱՅԷԼ.

(Պարզում է ձեռքը դէպ ի Բարաքը սաստիկ արտասուելով.)
Նա կենդանի էր,
Մահու հարուածը կատարուեցաւ.
Ո՜հ. ինչու չընկաւ դա այս գլխիս վերայ։

ԲԱՐԱՔ.

Ամենողորմ Աստուած. բայց ընդէ՞ր թոյլ տուեցիք
Դուք, որ Թագաւորազնը դիւանի մէջ վտանգի տակ
Զգէ իւր կեանքը։

ԻՍՄԱՅԷԼ.

Իմ անբաղդութիւնս դեռ արժանի է նախատինքի։
Զգուշացնելով զգուշացրել եմ, խնդրել ու աղաչել եմ,
Ինչպէս իմ սիրտը, ինչպէս իմ պարտականութիւնը ուսուցել է ինձ.
Բայց ի զուր. բարեկամի ձայնին ականջ չդրեց նա.
Աստուածների կարողութիւնը խլեց ու տարաւ նորան։

ԲԱՐԱՔ․

Հանգստացէ՛ք։

ԻՍՄԱՅԷԼ․

Հանգստանա՞լ․ երբէք, երբէք կարող չեմ․
Ես տեսայ նորա մահու կատարածը․ նորա ընկերակիցն
Էի ես նորա կեանքի վերջին րոպէումը,
Եւ նորա հրաժարական խօսքերը ցցուեցան
Որպէս սուր դաշնակներ իմ սրտի խորքի մէջ․
«Մի՛ լար» ասաց նա․ «յօժար և ուրախ մեռանում եմ ես,
«Որովհետև կարող չեմ ստանալ իմ սրտի քաղցր սիրածը։
«Թող իմ Թանգագին հայրը ներէ ինձ,
«Որ ես առանց հրաժարական ողջունի բաժանվեցայ նորանից․
«Ո՛հ, երբէք թոյլ տուած լինելու չէր նա կատարել
«Այս մահաբեր ճանապարհորդութիւնը․
«Ցո՛յց տուր նորան այս պատկերը։

(Նա դուրս է հանում ծոցիցը մի փոքրիկ պատկեր․)

«Եթէ այս գեղեցկութիւնը տեսանէր նա,
«Ապա անմեղադիր կ՚առնէր իւր որդին։»
Այնուհետև բարձրաձայն հառաչելով
Սեղմեց նա իւր շրթունքի վերայ կրկին ու կրկին
Համբուրելով այս ատելի պատկերը, որպէս թէ
կարող չէր, մեռանելով իսկ, բաժանվիլ դորանից․
Ապա ծունր է խոնարհեցնում նա — և մի հարուածով —
Դեռ ևս դողումէ ուղեղը ոսկրներիս մէջ —
Տեսայ ես արիւնի ցայտելը, տեսայ ես նորա մարմնի
Բաժանվիլը գլխից, և նորա պատուական գլուխը դահճի ձեռքում․

(Նա սաստկութեամբ զարկումէ պատկերը գետնին․)

Ատելի, յաւիտեան նզովեալ պատկեր,
Կաց դու այդ տեղ, ոտնակոխ եղած, փոշու մէջ․
Ախ, թէ կարողանայի նոյն իսկ աղջիկը, այն անգութ գազանը
Այս ոտքիս տակ այնպէս ջարդուփշուր առնել, ինչպէս քեզ․
Որ քո անշունչ մարմինը բերէի իմ Թագաւորիս․
Ո՛չ․ Սամարկանդը պիտոյ է միւս ևս չտեսանէ ինձ․
Դէպ ի մի անապատ կամիմ փախչել ես, և այն տեղ,
Ուր ո՛չ մի մարդու ականջ լսելու չէր իմ ձայնը,
Յաւիտեան արտասուել իմ նազելի Թագաւորազնը։

(Նա հեռանումէ․)

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

ԽԱԼԱՖ ԵՒ ԲԱՐԱՔ.

ԲԱՐԱՔԸ (*մի փոքր միջոցից յետոյ.*)

Արքայազն Խալաֆ, լսեցի՞ք այժմ։

ԽԱԼԱՖ.

Ես կանգնած եմ այս տեղ,
Մեծ խառնակութեան, զարհուրանքի և հիացքի մէջ.
Բայց ի՛նչպէս կարող է այդ անշունչ պատկերը,
Մի նկարչի գործ, յառաջացնել այդպիսի կախարդութիւն։
(Նա կամենում է բարձրացնել պատկերը գետնից)

ԲԱՐԱՔ.

(Շտապով մօտենում է դէպ ի նա և յետ է քաշում նորան.)
Ի՛նչ էք անում դուք — ով մեծ աստուածք.

ԽԱԼԱՖԸ (*ժպտելով*).

Ի՛նչ կայ. մի պատկեր է,
Որ բարձրացնում եմ գետնից։ Կամէի միայն
քննել դորան. այդ սատակիչ գեղեցկութիւնը.
(Նա ձեռքը մխում է դէպ ի պատկերը և գետնից բարձրացնում է նորան).

ԲԱՐԱՔ (*յետ պահելով նորան*).

Աւելի բարի էր ձեզ, Մեդուզայի գլուխը,
Քան թէ այդ մահացուցիչ կերպարանքը տեսանել.
Կորչի՛, կորչի դա. ես չեմ կարող այդ բանը թոյլ տալ.

ԽԱԼԱՖ.

Դու խոհեմ չես։ Եթէ դու այդքան թուլասիրտ ես զգում քեզ,
Ես այդպէս չեմ։ Կին մարդու գեղեցկութիւնը երբէք
Գրաւել չէ իմ աչքը և ոչ րոպէական միջոցներով,
Ուր մնաց, որ տիրապետէր իմ սրտին։ Եւ ինչ որ
Մի կենդանի գեղեցկութիւն երբէք կարողացած չէ,
Այդ բանը պիտոյ է ներգործէին մեռած գրչի խաղե՞ր.
Անօգուտ հոգս էր, Բարաք — ես ուրիշ բան
Ունէի սրտիս վերայ քան թէ սիրու յիմարական խաղը։
(Նա կամենում է աչք ածել պատկերի վերայ.)

ԲԱՐԱՔ.

Այնու ամենայնիւ, իմ արքայազն, ես զգուշացնում եմ ձեզ —
Մի՛ արէք այդ բանը։

ԽԱԼԱՓ (*անհամբերութեամբ.*)

Դահիճը տանի քեզ, ով պարզամիտ, դու վիրաւորում ես ինձ.

(*խեթկում է նորան, նայում է պատկերի վերայ, և ընկնում է հիացքի մէջ։ Մի փոքր միջոցից յետոյ*).

Այս ի՛նչ եմ տեսանում ես։

ԲԱՐԱՔ.

(*կցում է ձեռքերը յուսահատութեան մէջ*).

Վա՜յ ինձ. ի՛նչ անբաղդութիւն......

ԽԱԼԱՓ.

(*ջերմութեամբ բռնում է նորա ձեռքից*).

Ո՛վ Բարաք.....

(*կամենում է խօսել, բայց կրկին նայում է պատկերի վերայ և քննում է նորան հիացութեամբ*)։

ԲԱՐԱՔԸ (*ինքը իւր մէջ*).

Վկայ եղէք, աստուածներ—ես պարտական չեմ.
Ես չկարողացայ խափանել դորան։

ԽԱԼԱՓ.

Ո՛վ Բարաք.

— Այս նազելի աչքերի մէջ, այս քաղցր
կերպարանքի մէջ, այս հեզ նայեացքի մէջ
կարող չէ բնակել այն կոշտ սիրտը, որ ասում ես դու։

ԲԱՐԱՔ.

Վա՜յ ինձ անբաղդիս. ի՛նչ եմ լսում ես. անթուելի անգամ
Աւելի գեղեցիկ, քան թէ ցուցանում է այս պատկերը,
Է նոյն ինքն Թուրանդօթը. նկարչի ճարտարութիւնը
Երբէք կարողացած չէ նորա բոլոր չքնաղութիւնը դուրս բերել.
Եւ ոչ ևս նորա սրտի հպարտութիւնը և անգթութիւնը
Կարող է որ և իցէ խօսք, որ և իցէ լեզու պատմել։
Ո՜վ. բա՛ց ձգեցէք ձեզանից այդ թշուառ,
Անիծեալ պատկերը. թո՛ղ ձեր աչքը մահաթոյն
Զծծէ այդ սատակիչ կերպարանքից։

ԽԱԼԱՓ.

Կորի՛ր դու. զուր ես աշխատում ահ ձգել իմ վերայ.
— Այս ի՛նչ երկնային քաղցրութիւն է,
Այս ի՛նչ ջերմ, կրակոտ շրթունք են,
Սիրու աստուածուհու աչքեր. ի՛նչ երանութիւն,
Այդ զարմանագեղ աղջիկը ստանալ իւր հարսն։

(Նա կորած է հիացման մէջ, նկատելով այն պատկերը· յանկարծ դարձուցանում է դէմքը դէպ ի Բարաք և ըմբռնում է նորա ձեռքը)։

Բարաք· մի՛ մատնիր ինձ — Այժմ, կամ երբէք ոչ·
Այս է րոպէն փորձելու իմ բաղդի յաջողութիւնը·
Ինչո՞ւ խնայել այս կեանքը, որ ատելի է ինձ·
— Ինձ պարտ է մի անգամով ձեռք բերել
Աշխարհի ամենասիրուն կինը և նորա հետ մի կայսերութիւն,
կամ թէ այս ատեցած կեանքը մի անգամով կորուսանել։
Ամենագեղեցիկ արարած դու, իմ բաղդի առհաւատչեայ,
Իմ քաղցր յոյս դու· մի նոր զոհ պատրաստ է քո համար,
Եւ համարձակվում է յառաջ գալ դէպ ի ահարկու փորձը։
Ողորմած եղիր իմ վերայ· — բայց, Բարաք, ասա՛ ինձ,
Կը տեսանե՞մ ես դիւանումը, յառաջ քան թէ կը մեռանէի,
Այս հրապուրիչ գեղեցկութեան նոյն իսկ գաղափարը։

(Այս միջոցիս տեսանումեն մի դաշիճ վեր ելանելով քաղաքի դարպասի վերայ և մի նոր գլուխ տնկելով այն տեղ։ — Առաջին ձայնը խանգարված թմբուկների զուգակից է այս գործողութեանը։)

ԲԱՐԱՔ·

Ո՜հ, տեսէ՛ք, տեսէ՛ք, պատուական թագաւորազն, և զարհուրեցէք·
Այս է այն վատաբաղդ երիտասարդի գլուխը,
Թէ ինչպէս սառած աչքերով նայում է ձեզ·
Նոյն ձեռքը, որ սորան տնկեցին այն տեղ, սպասումեն ձեզ։
Ո՜վ· յետ դարձէք, յետ դարձէք։ Անկարելի է
Այդ մատակ առիւծի առակները մեկնել·
Հոգուս աչքով տեսանումեմ ահա ձեր պատուական գլուխը,
Որպէս զգուշացուցիչ օրինակ բոլոր երիտասարդների համար,
Այս ահարկու շարքումը բարձրանալով։

ԽԱԼԱՖ·

(Որ դարպասի վերայ տնկած գլուխը մտախոհութեամբ և կարեկցութեամբ քննած էր)·

Կորած երիտասարդ· ո՛ր խաւար զօրութիւնը
Խլում տանում է ինձ անհասկանալի ու անընդդիմանալի,
Դէպ ի քո մահապատճառ ընկերակցութիւնը։
Ի՛նչ օգուտ քո արտասուքից, Բարաք։ Մի՛ թէ դու
Արդէն միանգամ չէիր արտասուել ինձ որպէս մեռած·
Արի, արի· մի՛ յայտնիր ոչ մի մարդու, թէ ով էի ես·
Ո՛վ գիտէ· գուցէ թէ երկնային Տեսչութիւնը շատ համարելով
Իմ տառապանքը մինչև այժմ, օրհնէ իմ ձեռնարկութիւնը·

Եւ իմ չքաւոր ծնողներին մխիթարութիւն պատրաստէ։
Եթէ ոչ. ապա ի՛նչ ունի կորուսանելու մի թշուառական.
Քո սիրու փոխարէնը կը հատուցանեմ քեզ. բարեաւ մնա։
(Նա կամի գնալ, բայց Բարաքը յետ է պահում նորան. այս միջոցիս
տանից գալիս է Սկիրինան, Բարաքի կինը)։

ԲԱՐԱՔ.

Ո՛չ. երբեք ոչ. արի՛, օգնի՛ր ինձ, իմ կին.
Մի՛ թողուր նորան գնալ — նա գնումէ. նա կորած է.
Պատուական օտարականը գնումէ, նա համարձակվումէ
Այն Փուրիայի առակները մեկնել։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

(Սկիրինան խօսումէ առաջիններին հետ.)

ՍԿԻՐԻՆԱ (նորա ճանապարհը կտրումէ).

Վա՛յ ինձ, ի՛նչ եմ լսում ես. չէ՞ք դուք իմ հիւրը.
Ի՛նչ բան այդ նուրբ պատանին դրդումէ դէպ ի մահ։

ԽԱԼԱՓ.

Ո՛հա, իմ բարի մայր, այս աստուածեղէն պատկերը
Գանչումէ ինձ դէպ ի իմ ճակատագիրը։

ՍԿԻՐԻՆԱ.

Վա՜յ ինձ.
Ի՛նչպէս այդ դժոխային պատկերը ընկաւ նորա ձեռքը։

ԲԱՐԱՔ.

Մի՛ լոկ դիպուածով։

ԽԱԼԱՓ (որ մտանումէ երկուքի մէջ).

Ո՛վ Հասան, բարի կին դու.
Որպէս փոխարէն ձեր հիւրասիրութեան, պահեցէ՛ք
Իմ ձին. և այս քսակը առէ՛ք ձեզ.
Դա իմ բոլոր հարստութիւնն է — Ես, — ես կարօտ
Չեմ այսուհետեւ ոչինչ բանի — պատճառ, կամ յետ կը դառնամ ես
Որպէս կայսր — կամ — երբեք ոչ։
— Եթէ հաճոյ է ձեզ, ապա վըհեցէ՛ք դորա մի մասը
Մշտնջենաւոր աստուածներին, և բաժանեցէ՛ք աղքատներին,
Որ նոքա յաջողութիւն մաղթեն իմ վերայ։
Բարեաւ մնացէք — ինձ պէտք է հանդէպ գնալ իմ ճակատագրին.

(Նա շտապումէ դէպ ի քաղաք).

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

ԲԱՐԱՔ ԵՒ ՍԿԻՐԻՆԱ·

ԲԱՐԱՔ (*կամենում է հետևել նորան*)·

Իմ տէր, իմ անբաղդ տէր։ Բայց անօգուտ է· նա գնում է·
Նա չէ լսում ինձ։

ՍԿԻՐԻՆԱՆ (*հետաքրքրութեամբ*)·

Քո տէ՞րը· ուրեմն դու ճանաչում ես նորան·
Ասա ուրեմն, ո՞վ է այդ ազնուամիտ երիտասարդը,
Որ նուիրում է իւր անձը մահու։

ԲԱՐԱՔ·

Թո՛ղ այդ հարցասիրութիւնը·
Նա ծնած է մի այնպիսի բարձր իմացականութեամբ,
Որ ես երկբայում չեմ ամենևին նորա յաջողութեան մասին։
— Արի՛, Սկիրինա· այս բոլոր ոսկին, և մեր բոլոր սեփականը
Զոհենք ֆօհի աստուածին և բաժանենք չքաւորներին·
Թո՛ղ սոքա վերուղղեն նորա համար աղօթք ու պաղատանք
Եւ ծունկերը մաշեն չոքելով սեղանների առաջև,
Մինչև մարդասիրելով աստուածները կը լսեն նոցա աղաչանքը։

(*Նոքա գնումեն տուն*)։

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ·

(*Մի մեծ դահլիճ դիւանի, երկու դարպասով, որոնց մինը տանում է դէպ ի կայսրի սենեակները, միւսը դէպ ի կայսերազն Թուրանդօթի առանձնարանը։*)

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ·

Թրուֆֆալդին — Ներքինապետը ծանր կերպարանքով կանգնած է հանդէսի մէջ տեղումը և հրամաններ է տալիս իւր սևամորթ մարդերին, որ զբաղված էին դահլիճը կարգի դնելով·

Նորանից յետոյ իսկոյն երևում է Բրիգելլան։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ձեռնարկեցէ՛ք գործին, շարժվեցէ՛ք տեղերիցդ· իսկոյն
Կը հաւաքվի դիւանը — օթոցները ձգեցէ՛ք,

Աթոռը դրեցէ՛ք։ Այս տեղ աջակողմումը
Պիտոյ է բազմի Նորին կայսերական Մեծութիւնը,
Ձախակողմումը — իմ նազելի, բարձրապատիւ կայսերադուստրը։

ԲՐԻԳԵԼԼԱ·

(Գալիս է և զարմանալով նայումէ իւր չորս կողմը)·
Խնդրեմ, ասացէ՛ք ինձ· ի՛նչ նոր բան կայ,
Որ այսպէս շտապով զարդարումեն դիւանը։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

(Առանց լսելու նոցա, ասումէ սեւամորթ մարդերին։)
Ութ նստարանք այն տեղ պարոն ուսումնականների համար·
Նոքա թէպէտ չունէին այս տեղ շատ բան ուսուցանելու,
Բայց պիտոյ է նոցա, ուր մի ուսումնական բան կայ,
Իւրեանց երկար մօրուքներով ներկայ գտնվիլ։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Ասացէ՛ք վերջապէս·
Ինչու՛ համար, ի՛նչ խորհուրդ ունի այս բոլորը։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ինչու համա՞ր, ինչ խորհրդո՞վ· որովհետև Նորին Մեծութիւնը
Եւ իմ սիրուն թագուհին, այն ուսումնականների և
Քաջափայլութենների հետ իսկոյն հաւաքվելու են դիւանումը։
Յայտնվել է մի նոր, առոյգ թագաւորազն երիտասարդ·
Նորա գլուխը քոր է գալիս, կամի նորան կարճացնել։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Ի՛նչ ես ասում· դեռ ևս երեք ժամ չկայ, որ վերջին
Գլուխը կացնի տակ վերջացաւ։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Այո, փառք Աստուծոյ· ինչպէս ցանկալի
Էր, լաւ են գնում գործերը։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Եւ այդ բանի վերայ կարող էք դուք ծաղր անել, վատթար դու·
Դուք ուրախ էիք այդ բարբարոս արիւնհեղութեան վերայ։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ինչու համար ուրախալի չէր ինձ այդ բանը· դորանից
Մի քանի հատիկ ցորեան լինումէր իմ կտուցի մէջ, երբ որ մի նոր մարդ
Մեծ ճանապարհ կտրելով գալիս էր — պատճառ, ամենայն անգամ,
Երբ որ իմ վեհապատիւ աղջիկ թագուհին նաւելով անցանումէր

Հարսանիքի ստորածովեայ ապառաժի մօտից,
Հարեմումը բաժանվումեն հարսանիքի բլիթներ·
Այսպէս է կարգը, և մեք պահպանումենք դորան·
Ինչքան շատ գլուխներ, այնքան շատ տօնի օրեր։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Դորքա շատ պիղծ և վատթար մտածութիւնք են,
Այնպէս սև, ինչպէս ձեր երեսի դիմակը·
Արդէն կարելի է կարդալ ձեր երեսի վերայ,
Որ դուք կէս մարդ էք, մի կեղտոտ ներքինի·
Մի մարդ, այսինքն մի ազամորդի, որ անարատ է,
Ունի իւր մէջ մարդկային սիրտ և զգումէ գութ։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ի՛նչ ես խօսում, ի՛նչ գութ·
Ոչ ով ստիպում չէ թագաւորազները իւրեանց վիզը
Բերել պեկին· ոչ ով հրաւիրում չէ նորանց այս տեղ·
Եթէ հաճոյ է նոցա յանձն առնուլ այդպիսի խելագարութիւն,
Թող ապա շահվին· քաղաքի դարպասի վերայ արիւնոտ գլուխներով
Գրած է շատ ընթերցանելի, թէ ի՛նչ կարելի էր այս տեղ ստանալ·
Մեք ոչ մինից չէնք խլում նորա գլուխը, եթէ բերել էր իւր հետ մի
գլուխ·
Բայց վաղուց իւր գլուխը կորուսել էր նա, որ գնումէ նորան այս տեղ։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Հիանալի՜ մտածութիւն· ընտիր իշխանազներին,
Որ մեծարումէին նորան խնդրելով նորա հարսնութիւնը,
Երեք առակ առաջարկել, և եթէ նոցանից մինը
Չկարողացաւ մեկնել դորանց, մորթել նորան։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ամենևին ոչ, բարեկամ։ Դա մի փառաւոր,
Գերազանց մտածութիւն է· հարսնախօսել կարող է ամեն մարդ,
Ոչինչ այնքան հեշտ չէ, քան թէ ման գալ հարսն որոնելու։
Կարելի է ապրել օտարի ծախքով և ուտել խմել
Ձրի իւր ապագայ աների տանը·
Եւ որ և իցէ կրտսեր որդի և շրջմոլիկ իշխան,
Որ իւր բոլոր կալուածքը կրումէր իւր հետ
Ճանապարհի պարկի մէջ, ապրումէ միայն անգիւտ որոնելով·
Այս տեղ մի այլ բան եղած չէ, քան թէ մի մեծ
Հիւրանոց թագաւորազների և վտանգախնդիր մարդերի,
Որ կամէին հարսնախօսել կայսրի հարուստ դուստրը·

Պատճառ, և ամենաչնչին մարդը կարծումէ իւր անձը արժանի,
Պարզելու ձեռքերը դէպ ի ամենասիրուն աղջիկը․
Սա մի ազատ կոմեդիա էր,
Ուր ամենայն մարդ գալիս է, մինչև իմ Թագուհին
Մի ընտիր ճանապարհ մտածեց, տունը քսանևչորս ժամի մէջ
Իստակելու։ — Մի այլ Թագուհի իւր հարսնախօսքը
Ուղարկած կը լինէր դէպ ի արիւնոտ ծանր վտանգներ,
Կռուելու հսկաների հետ, Բաղդատի Խալիֆի երեք սեղանատալքը
Դուրս քարշելու քաղաքավարութեամբ, երբ նա նստած էր հացի։
Կամ թէ գնալ բերել պար եկող ջուրը և երգեցող ծառը
Եւ Թռչունը, որ խօսումէր մարդկային լեզու։
Բայց ոչ մինը դորանից չկամի Թագուհին․ Նորան հաճոյ էին
Միայն առակներ, երեք սիրուն, բարեյարմար հարցմունք․
Դորանց մեկնելու համար կարելի է վայելչապէս ու մաքրապէս
Նստել տաք սենեկի մէջ և կօշիկը թաց լինելու չէ․
Սուրը հարկաւոր չէր դուրս քարշել պատենից,
Բայց հանճարը, սրամտութիւնը պիտոյ է հանդէս գայ։
— Բրիգելլա, մեր Թագուհին խելօք է․ Նա գիտէ, թէ
Ի՛նչպէս պիտոյ էր թափել վիզը տխմարների ձեռքից։

ԲՐԻԳԵԼԼԱ․

Կարող էր մի մարդ լինել առաքինի տղամարդ
Եւ պատուական ամուսին, այնու ամենայնիւ չիմանալ
Այն սրածայր խօսքերը, առակները մեկնաբանել։

ՏՐՈՒՖԱԼԴԻՆ․

Ահա տեսանումես դու, ընկեր, ինչպէս բարի ու անարատ
Էր մեր իշխանազնուհու գիտողութիւնը իւր փեսայացուի հետ,
Որ նա մեկնելի առակները տալիս է հարսանիքից յառաջ․
Յետոյ լինելու էր աւելի վատ․ եթէ փեսայացուն այժմ
Չմեկնէ նորանց, ապա հեշտ ու շուտ մի խրատական
Հարուածով կ'աւարտվի գործը։
Բայց ով որ չէ կարող մեկնել այն սրածայր, փշոտ
Առակները, որ կինը իւր մարդուն տալիս է ամուսնութեան մէջ,
Նա կորած պրծած էր արդէն։

ԲՐԻԳԵԼԼԱ․

Դուք յիմար էք․ ձեր հետ կարելի չէ խօսել․
— Թո՛ղ դոքա լինէին առակներ, ցաւ չունի,
Որովհետև Թուրանդօթը կատաղի կերպով սիրումէ
Ցուցանել իւր սրամտութիւնը․ — բայց մի՛ թէ

Անպատճառ հարկաւոր էր նորան գլխատել տալ,
Այն թագաւորայիները, որ չէին այնքան համճարեղ
Նորա առակները մեկնելու համար — Այդ ամենեին
Բարբարոսական, խելագար և անմիտ գործ է։
Ո՛ր տեղ լսված է, որ կտրումեն մարդերի գլուխ,
Որովհետև դոցա հասկացողութիւնը դժուար էր։

ԹՐՈՒՔՔԱԼԴԻՆ․

Ի՛նչպէս ապա, աշխարհի գլուխ դու, պիտոյ էր թագուհուն
Պահպանել իւր անձը խելագարների երեսից, որ կարծումէին իւրեանց
խելքը․
Եթէ ոչ մի վտանգ չկար այդ բանի մէջ,
Բաց ի միանգամ խայտառակելուց իւր անձը դիւանի մէջ․
Եթէ վտանգը պիտոյ է վերջանար անարգութեամբ միայն,
Առանց վնասի հասանելու․ այնուհետև ամեն մարդ կը վազէ սառցի
վերայ։
Ով կը վախենար առակներից․ դոքա էին իսկապէս, որ
Միշտ մեծ յօժարութեամբ կամէին լսել մարդիկ․
Այդ կը լինէր գործ գնել մի հրապուրիչ քաղցրութիւն
փոխանակ մի զարհուրեցուցիչ խրտուիլակի։
Եւ եթէ անտես առնելով թագաւորայն աղջկայ
Անձը և նորա ճոխ արծաթը, կամէին տանը մնալ,
Ապա առակների աղագաւ գալու էին․
Պատճառ, ուղիղը խօսելով, ամեն մարդու համար իւր համճարը
Եւ սրամտութիւնը աւելի սիրելի է, քան թէ մի շատ սիրուն կին։

ԲՐԻԳԵԼԼԱ․

Նայց ի՛նչ օգուտ այդ բոլոր խաղարկութենից,
Եթէ ոչ, որ նա պիտոյ է պառաւ աղջիկ մնայ․
Ո՛չ մի տղամարդ, որ սիրումէր իւր խաղաղութիւնը,
Եւ խելքը տեղումն էր, վեր կ՚առնուր այդպիսի ծակող
Ասեղնաբարձ։

ԹՐՈՒՔՔԱԼԴԻՆ․

Ամենամեծ վատաբաղդութիւնը, անամուսին մնալու։
(Հեռուից լսումեն ոտքերի ձայն․)

ԲՐԻԳԵԼԼԱ․

Կայսրը գալիս է։

ԹՐՈՒՔՔԱԼԴԻՆ․

Գնացէ՛ք ձեր կերակրատունը․
Ես երթումեմ իմ թագուհին բերելու այս տեղ։
(Հեռանումեն դէպ ի զանազան կողմ․)

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Մի բազմութիւն զինուորների և Նուազածուների· ապա ութ ուսումնականք, իմաստակաբար զգեստաւորված· յետոյ Պանտալօն և Տարտալիա, երկուքը ևս յատկացուցիչ դիմակներով· Վերջումը մեծ խան Ալթումը, չինէական ոճով, մի փոքր չափազանց զարդարված։ Պանտալօնը և Տարտալիան տեղ են բռնում կայսերական աթոռի հանդէպ, ութ ուսումնականքը նստումեն յետնակողմումը, միւս ուղեկիցքը այն կողմումը, ուր դրած է կայսերական աթոռը։ Երբ որ կայսրը ներս է մտանում, բոլորեքեան ճակատի վերայ ցած են ընկնում դէպ ի գետին և մնումեն այս դրութեան մէջ, մինչև նա բազմումէ իւր աթոռի վերայ։ Ուսումնականքը իւրեանց աթոռների վերայ հանգստանումեն· երբ որ Պանտալօնը նշանացի է առնում, իսկոյն լռումէ նուագածութիւնը։

ԱԼԹՈՒՄ·

Ե՞րբ, հաւատարիմ ծառայք, կը վերջանայ իմ տառապանքը·
Հազիւ թէ Սամարկանդու աղնիւ թագաւորազը
Թաղած է, մեր արտասուքը դեռ ևս թափվումեն·
Եւ ահա մօտենումէ մի նոր մարդազոհութիւն,
Իմ արիւնաթաթաւ սիրտը կրկին վիրաւորելու·
Անգութ դուստր դու, իմ տանջանքիս համար ծնած·
Ի՞նչ օգուտ, որ ես այս րոպէիս անիծումեմ,
Որովհետև այն բարբարոսական օրէնքը
Կնքել եմ ես երդումն ուտելով ահաւոր Ֆոհիովը·
Ես կարող չեմ քակտել իմ երդումը· իմ դուստրս
Չկամի դէպ ի գութ շարժվիլ, և հարսնախօսքը երկիւղ
Չունին· ոչ մի տեղ ճար չկայ իմ անբաղդութեան համար։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Ա՜խ, ձերդ Մեծութիւն· ի՞նչ ճար կարելի է գտանել այս տեղ·
Այն տեղ, ուր ես ծնած եմ քրիստոնեաների աշխարհումը,
Իմ սիրելի հայրենական Վենետիկի մէջ,
Ո՛չ ոք երդում չէ ուտում այդպիսի սպանողական օրէնքով·
Այն տեղ անծանօթ են յիմարական հրովարտակներ·
Այն տեղ ո՛չ մի օրինակ ու դիպուած եղած չէ,
Որ տղամարդիկը խելացնորվէին մի փոքրիկ պատկերի վերայ,
Եւ իւրեանց վիզը վտանգի տակ դնէին իւրեանց սիրած աղջկայ համար·

Ոչ մի կնամարդ չէ ծնանում մեր մէջ
Որպէս այդ քարասիրտ տիկինը, որ բոլոր տղամարդերի
Վերայ դնէր մի այդպիսի ծանր հարկ — Աստուած փրկէ.
Այդ բանը երազում չենք մտաբերած ։ Երբ որ ես
Դեռ ևս իմ հայրենիքումն էի, իմ մանկութեան օրերումը,
Ցառաջ քան թէ այն պատուաւոր գործը, ինչպէս յայտնի է ձեզ,
Դուրս քշեց ինձ, և իմ բաղդաւոր աստղը
Բերեց ինձ իմ կայսրի պալատը, այս տեղ, ուր ես,
Որպէս դիւանապետ երջանիկ եմ այժմ.
Այն ժամանակը ոչինչ չգիտէի ես Չինաստանի մասին,
Բայց միայն, թէ մի ընտիր ճար էր դողցուցի ընդդէմ ։
Բայց այժմ հիացած եմ չափից դուրս,
Որ գտանումեմ այս տեղ այնպիսի զարմանալի սովորութիւնք,
Այնքան զարմանալի երդմունք և օրէնքներ.
Եւ այնպիսի զարմանալի կանայք ու տղամարդիկ.
Եթէ պատմէի այս բաները Եւրոպայի մէջ,
Նոքա քթերի տակ կը ծիծաղէին իմ վերայ.

ԱԼԹՈՒՄ.

Տարտալիա, տեսա՞ծ էք դուք այն նոր վտանգախնդիրը ։

ՏԱՐՏԱԼԻԱ.

Այո, ձերդ Մեծութիւն. նա բնակումէ
Կայսերական ամրոցի կողմնաշէնքումը, ուր սովորաբար
Օթևան են տալիս օտարական եկաւոր իշխանազներին ։
Խելքս յափշտակված է ինձանից նորա քաղցր կերպարանքի
Վերայ և նորա քաջատոհմական ձևերից ։
Անչափ ցաւելի է այդ ծաղկափթիթ պատանին,
Որ պիտոյ էր նորան տանել դէպ ի զոհարան ։
Սիրտս պատառվումէ. մի այդպիսի սիրուն թագաւորազն.....
Ես այրված եմ նորա սիրով ։ Արդարև, իմ բոլոր
Կեանքի մէջ տեսած չեմ այդպէս նազելի մանուկ ։

ԱԼԹՈՒՄ.

Թշուառ օրէնք, նզովա՛ծ երդումն.
— Զոհերը մատուցա՞ծ են արդէն Փօհի աստուածին,
Որ նա այդ անբաղդին պարգևէ իւր լոյսը,
Այս առակների խորհուրդը մեկնելու համար.
Ոհ, միշտ այս յոյսին տեղիք եմ տալիս ես ։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Ձերդ Մեծութիւն, ոչինչ զոհեր խնայած չենք·
Երեք հարիւր պարարտ եզներ մորթել ենք
Տիեն աստուածին, երեք հարիւր ձիանք Արեգակին,
Եւ լուսնին երեք հարիւր խոզ։

ԱԼԹՈՒՄ·

Ուրեմն կանչեցէք նորան իմ առաջեւ·
(կայսրը ուղեկիցների մի մասը հեռացնում է·)
— Աշխատեցէ՛ք հրաժարեցնել նորան իւր դիտաւորութենից,
Եւ դուք, ուսումնական ճրագներդ իմ դիւանի,
Եկէք օգնելու ինձ, խօսքը վեր կալէք իմ փոխանակ,
Թոյլ մի՛ տուէք, որ պակասեն ձեր պատճառները,
Եթէ ցաւը կապելու էր իմ լեզուն։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Ձերդ Մեծութիւն·
Մեք մեր հին հանճարեղութիւնը չենք խնայելու,
Որ մեք երկար տարիներով ստացած ենք·
Բայց ի՞նչ օգուտ· մեք քարոզումենք ու մաշումենք
Մեր թոքերը, բայց նա թողումէ իւր գլուխը կտրել
Որպէս մի հաւի գլուխ։

ՏԱՐՏԱԼԻԱ·

Եթէ թոյլ կը տաք ինձ խօսել, պարոն դիւանապետ Պանտալօն·
Ես նկատած եմ սրամտութիւն և հասկացողութիւն նորա մէջ·
Ո՛վ գիտէ· — Բայց ես չկամիմ ամենևին յուսահատվիլ։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Այս օձ աղջկայ առակները պէտք է մեկնէ՞ նա։
Ոչ· և ո՛չ երբէք։

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Առաջինքը· Խալաֆ (պահապաններով մտնում է և ծունր է իջուցանում կայսրի առաջև, ձեռքը դրած ճակատի վերայ)։

ԱԼԹՈՒՄ·

(Մի փոքր միջոց նորա վերայ նայելուց յետոյ·)
Վե՛ր կացիր, անխոհեմ երիտասարդ·
(Խալաֆը վեր է կենում և ազնիւ քաղաքավարութեամբ գնում է կանգնում դիւանի մէջ տեղումը։)

— Գրաւի՛չ կերպարանք․ ազնի՛ւ պատշաճաւորութիւն․․․․․
Ինչպէս ալէկոծվումէ սիրտս․ — Խօսիր, ո՛վ անբաղդ․
Ո՛վ ես դու, ի՛նչ աշխարհում ծնած ես դու։

ԽԱԼԱՓ․

(Մի րոպէ դժուարութեան մէջ, լուռ է մնում, ապա գլուխ տալով ազնուապէս․)

Թագաւոր, թո՛յլ տուր ինձ, որ իմ անունս չյիշեմ։

ԱԼԹՈՒՄ․

Ի՛նչպէս․ ի՛նչ երեսով համարձակվումես
Դու, անծանօթ, անանուն օտարական,
Հարսնախօսել մեր կայսերական դուստրը։

ԽԱԼԱՓ․

Ես թագաւորական արիւնից եմ, մի թագաւորազն․
Եթէ բաղդը կը դատապարտէ ինձ դէպ ի մահ,
Այնուհետև կը յայտնվի իմ անունը, իմ ազգը, իմ հայրենիքը,
Ցառաջ քան թէ կը մեռանէի ես․ որ աշխարհը
Իմանայ, թէ ոչ անարժանապէս համարձակվել եմ
Խնդրել զուգաւորութիւն քո աղջկայ հետ։
Այժմ թող բարեհաճի կայսրի ողորմութիւնը
Անյայտ թողուլ իմ անձը։

ԱԼԹՈՒՄ․

Ի՛նչ ազնուամտութիւն
Նորա խօսքերի մէջ․ ի՛նչպէս ցաւումեմ նորա վերայ․
— Բայց ի՛նչպէս կը լինի, եթէ դու առակները մեկնեցիր,
Եւ այնու ամենայնիւ արժանաւոր տոհմից չէիր։

ԽԱԼԱՓ․

Օրէնքը,
Թագաւոր, գրած է միայն իշխանազնների համար․
Թող պարգևէ բաղդը, որ յաղթող լինիմ ես,
Այնուհետև, եթէ իշխանական տոհմից չէի ես․
Թող իմ գլուխը ցած ընկնելով լինի փոխարէն իմ
Ցանդգնութեանս․ և անգերեզման մնան իմ ոսկերքս
Ագռաւների կերակուր և վայրենի գազանների։
Արդէն մի հոգի բնակումէ այս քաղաքումս,
Որ կարող էր վկայել իմ աստիճանը և անունը․
Այժմ թող բարեհաճի կայսրի ողորմութիւնը
Անյայտ թողուլ իմ անձը։

ԱԼԹՈՒՄ·

Բարի՛ է· Թող լինի։
Քո հայեացքի և խօսքերի ազնուութեանը,
Նազելի երիտասարդ դու, կարող չեմ ոչ իմ հաւատը
Եւ ո՛չ իմ շնորհը ուրանալ·—բայց թո՛ղ յօժարի քո սիրտը
Համակատար լինել մի կայսրի, որ բարձր նստած իւր աթոռի
Վերայ աղաչում է քեզ· «Հեռացի՛ր, հեռացիր վտանգից
Որին կուրացած կամիս դու հանդէպ վազել։
Ձեռք վեր առ, և պահանջիր իմ թագաւորութեան կէսը։
Այնպէս բարեխօս է քո համար իմ սիրտը փորիս մէջ;
Որ ես խոստանում եմ քեզ իմ աթոռից հաւասար բաժին,
Եւ առանց իմ աղջկայ հարսնութեանը։
Արի՛ · մի՛ ստիպիր ինձ բռնակալ լինել·
Արդէն բաւական ծանր բեռն են իմ վերայ ազգերի անէծքը,
Արիւնը թագաւորազների, որ ես մորթել եմ·
Ուրեմն, եթէ քո յատուկ անբաղդութիւնը չէ շարժում
Քո սիրտը, թո՛ղ իմ անբաղդութիւնը շարժէ քո գութը։
Ազատի՛ր ինձ այն ցաւից, որ պիտոյ է կրեմ արտասուելով քո դին,
Անիծելով իմ դուստրը և ինձ ինքս, որ ծնուցել է
Այն կորստաբեր աղջիկը, այն պատիժ պատուհասը
Աշխարհի վերայ, իմ արտասուքի դառն աղբիւրը։»

ԽԱԼԱՖ·

Հանգստացի՛ր, տէր իմ։ Յայտնի է երկնային Տեսչութեանը,
Թէ ի՛նչպէս խորին սրտով ցաւում եմ ես ձեր վերայ·
Ոչ· երբէք ոչ, մի այդպիսի գթասիրտ հօրից
Ժառանգած է Թուրանդօթը մի անողորմ սիրտ·
Դու անպարտ ես· ապա թէ ոչ, պիտոյ է յանցանք լինէր
Իւր զաւակը սիրել և այն աստուածեղէն կերպարանքը,
Որ զմայլեցնում է մեզ և խելքը գլխից թռցնում է,
Պարգևած լինել աշխարհին։ — Քո վեհանձնութիւնը
Պահիր մի աւելի բաղդաւորի համար։ Ես արժանի չեմ,
Տէր, քո թագաւորութիւնը բաժանել քո հետ·
Կամ աստուածների վճիռ ու խորհուրդը այնպէս է,
Որ ես այն երկնաքաղաքացի թագուհուն փեսայանալով
Բաղդաւորվիմ — կամ թէ վերջացնեմ այս կեանքը,
Որ ծանրութիւն է ինձ առանց նորան·
Մահու բօթ, կամ թէ Թուրանդօթ·
Մի երրորդ բան չկայ իմ համար։

ՊԱՆՏԱԼՕՆ․

Սիրելի Թագաւորաղն, խնդրեմ ասել ինձ, արդեօք դուք
Նկատե՞լ էք այն գլուխները քաղաքի դարպասի վերայ․
Աւելի բան չեմ ասում․ ի՛նչ է դրդում ձեզ, ո՛վ տէր,
Հեռաւոր աշխարհներից գալ այս տեղ, և ձեր գլուխը,
Իսկոյն, ինչպէս ձիուց ցած էիք իջած, կտրել տալ․
Տիկին Թուրանդօթը, լաւ իմացէք, կը ոլորէ ձեր համար
Երեք փոքրիկ առակ, որոնց վերայ Ցունաստանի եօթն իմաստունքը
Եօթանասուն թարգմանիչների հետ միասին, ամբողջ տարիներ,
Անօգուտ ծամած են իւրեանց եղունգները մտածելով․
Մեք ինքներս, այսպիսի ծեր պրակտիկոսք և գրքերի վերայ
Ճերմակացած, դժուարանումենք այս առակների խորութիւնը քննելու․
Դոքա չեն հասարակ առակներ, ինչպէս զոր օրինակ այս․

«Այն ի՛նչ բան է, որ չէր նորա համար, որ տեսած էր նորան․
«Ով որ նորան կարօտ է, արծաթ չէ վճարում նորա համար․
«Ով որ նորան շինումէ, չկամի ինքը լցուցանել նորան,
«Ով որ բնակումէ նորա մէջ, իւր կամքով չէ․»

Ո՛չ, նորա առակները ամենևին նոր ձևած են․
Եւ անիծեալ դժուար կոտրելի ընկուզներ են․
Եւ եթէ նոցա պատասխանը մի բարի բաղդով
Դրած չլինէր թղթի վերայ, որ կնքած յանձնումէին
Պարոն ուսումնականներին, ապա սոքա իւրեանց բոլոր հանճարովը,
Կարող չէին մի դարու մէջ վերահասու լինել նորան․
Այս պատճառով, դեռաբոյս պատանի դու, հեռացիր խաղաղութեամբ,
Դուք ցաւելի էք ինձ, դուք այնքան մանկահասակ էք․
Եւ ափսոս էին ձեր գեղեցիկ մազերը․
Բայց եթէ կամակորվէք ձեր դիտաւորութեան վերայ,
Այնուհետև այգեպանի բողկը աւելի ամուր էր հողի մէջ,
Քան թէ ձեր գլուխը ձեր ուսերի վերայ․

ԽԱԼԱՓ․

Դուք խօսումէք անօգուտ բաներ, բարի ծերունի․
Մահու բօթ, կամ թէ Թուրանդօթ․

ՏԱՐՏԱԼԻԱ (կակազելով)․

Թու․․․․․Թուրանդօթ․
Աստուած իմ, այդ ի՛նչ կամակորութիւն է և կուրութիւն․
Այս տեղ խաղում՝ չեն ընկուզներով, պարոն,

Եւ ոչ շագանակներով· այս տեղ վէճը գլխի վերայ է,
Գլխի վերայ — մտածեցէ՛ք։ Ես չկամիմ ոչինչ պատճառ
Ցառաջ բերել, եթէ ոչ, այն մի պատճառը·
Դա մի փոքր բան չէ· գլխի, գլխի վերայ է խնդիրը·
Նորին կայսերական Մեծութիւնը, իւր թագաւորական աթոռից
Խոնարհումէ, հայրաբար զգուշացնելու ձեզ և հրաժարեցնելու· —
Երեք հարիւր ձի մորթած են արեգակին, երեք հարիւր եզն
Ամենաբարձրեալ երկնային աստուածին, երեք հարիւր կով
Աստղներին, և Լուսնին — երեք հարիւր խոզ։
Եւ դուք այդքան գոռոզամիտ և ապերախտ էք,
Որ կամիք տրտմեցնել կայսերական սիրտը։
Եթէ աշխարհի վերայ չլինէր մի այլ տիկին,
Քան թէ այս Թուրանդօթը, այնու ամենայնիւ
Մեծ թեթևամտութիւն էր ձեր կողմից······
Խնդրեմ չքարկանալ իմ վերայ, մանուկ պարոն,
Բայց, յայտնի է Աստուածուն, որ սէրն ու
Կարեկցութիւնն է, որ տալիս է ինձ այսպէս
Ազատապէս խօսել։ Գլուխը կորուսանել, գիտէ՞ք,
Թէ ի՞նչ ասել է։ Անկարելի է։ —

ԽԱԼԱՓ·

Այդպէս անօգուտ բաներ խօսել·······
Ձեր խօսուածքը անօգուտ է ինձ, պարոն վարժապետ·
Ինձ՝ մահու բօթ, կամ թէ Թուրանդօթ։

ԱԼԹՈՒՄ·

Ուրեմն ստացի՛ր դու, ինչ որ կամենումես·
Կորուսիր քեզ, և կործանի՛ր ինձ յուսահատութեան մէջ։
(Դէպ ի պահապանքը)·
Գնացէ՛ք, գանչեցէ՛ք այս տեղ իմ դուստրը։
(Պահապանքը դուրս են գնում·)
Նա կարող է այսօր զմայլվիլ երկրորդ զոհաբերութեան վերայ։

ԽԱԼԱՓ·

(Դէմքը դարձուցած դէպ ի դուռը, մտքի սաստիկ ալէկոծութեան մէջ·)
Ա՜հա գալիս է նա· ես պիտոյ է տեսանեմ նորան·
Երկնայի՛ն պետութիւնք,
Այս է այն խորհրդաւոր րոպէն··· ո՜վ, ամրապնդեցէ՛ք իմ սիրտը,
Որ տեսութեան րոպէն չխառնակէ ինձ,
Հոգու պայծառութիւնը չպատէ գիշերային մթութեամբ։
Ես ո՜չ մի զօրութենից երկիւղ չունիմ, բաց ի գեղեցկութեան·

Ո՛վ աստուածք· պարգևեցէ՛ք, որ ես ինքս չուրանամ իմ անձը·
Դուք տեսանումէք, ահա դողդոջումէ իմ հոգին· ակնկալութիւնը
Դղրդումէ իմ ոսկերքը և ճնշումէ իմ սիրտը կուրծքիս մէջ։
Իմաստուն դատաւորք դիւանի, դատաւորք իմ օրերի վերայ,
Մի՛ մեղադրէք ինձ պատժելի ամբարհաւաճութեան պատճառով,
Ափսոսացէ՛ք ինձ, արտասուեցէ՛ք այս թշուառականը·
Այս տեղ չունիմ ես ոչ ընտրելու և ո՛չ կամենալու բան.
Անընդդիմանալի ստիպանքով խլումէ տանումէ ինձ սիրտս,
Դա աւելի կարող է, քան թէ ես։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Լսումեն մի հանդիսաւոր ընթացք· Թրուֆֆալդինը հանդէս է գալիս Թուրը ուսի վերայ, սեւամորթ ծառայքը նորա հետեւից, ապա մի քանի աղախինք, որ երգումեն թմբուկների հետ։ Սոցանից յետոյ երեւումեն Ադելմա և Սելիմա, առաջինը թաթարական զգեստով, երկուքը եւս քօղաւորված։ Սելիման կրումէ ձեռքին մի աման, նորա մէջ կնքած թղթեր։ Թրուֆֆալդինը և նորա սեւամորթ ծառայքը անց կենալու միջոցին, ճակատի վերայ ցած են ընկնում կայսրի առաջև և իսկոյն վեր են կենում· աղախինքը ծունր են իջուցանում, ձեռքը դրած ճակատի վերայ։ Վերջումը երեւումէ Թուրանդօթը քօղարկած, ճոխ չինէական հագուստով, օգոստափառ և հպարտ դէմքով։ Խորհրդականքը և ուսումնականքը նորա առաջև ցած են ընկնում երեսի վերայ։ Ալթումը վեր է կենում, թագաւորազն աղջիկը, ձեռքը ճակատի վերայ դրած, գլուխ է տալիս ճիշդ շարժողութեամբ, յետոյ վեր է ելանում դէպ ի իւր աթոռը և բազմումէ նորա վերայ։ Սելիման և Ադելման տեղ են բռնում նորա երկու կողմումը, և վերջինը, նայեցողներին աւելի մօտ։ Թրուֆֆալդինը վեր է կալնում Սելիմայից ամանը և ծիծաղելի արարողութեամբք բաժանումէ տոմսակները այն ութ ուսումնականների մէջ։ Յետոյ հեռանումէ նա նոյնպէս գլուխ տալով, ինչպէս առաջին անգամը և հանդիսաւոր ընթացքը վերջանումէ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

(Մի երկար միջոցից յետոյ·)

Ո՞վ է դա, որ միւսանգամ յանդգնումէ մտածել,
Թէ, այսքան ողբալի, զգուշացուցիչ խրատներից յետոյ,

կարող էր միջամուխ լինել իմ խորին առակների մէջ․
Որ իւր յատուկ կեանքին թշնամի, գալիս է շատացնելու
Մահու զոհերի թիւը։

ԱԼԹՈՒՄ․

(Ցուցանում է դէպ ի Խալաֆը, որ հիացած կանգնել է դիւանի մէջ։)
Սա է ահա, իմ դուստր — այո՛ արժանի է նա,
Որ դու յօժարակամ ընտրէիր քեզ ամուսին,
Առանց ենթարկելու նորան այն ահաւոր փորձին,
Առանց նոր ցաւ պատրաստելու այս աշխարհին,
Նոր կսկիծ ու մրմունջ, հայրական սրտին։

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

(Երբ որ նա մի քանի ժամանակ քննելով նայել էր նորա վերայ, ասում է Սելիմային․)
Երկնայի՞ն պետութիւնք․․․․․․․
Ի՛նչպէս քանդվում է սիրտս, Սելիմա։

ՍԵԼԻՄԱ․

Ի՞նչ է պատահել քեզ, Թագուհի։

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

Ո՛չ ոք մինչև այժմ
Երևած չէ դիւանումը, որ կարողացած լինէր շարժել
Այս սիրտը։ Սա տեղեակ է այդ ճարտարութեանը։

ՍԵԼԻՄԱ․

Ուրեմն կ՚առաջարկես դու երեք հեշտեաւ մեկնելի առակ, և
Այդպէս կը վերջանայ մեծամտութիւնը։

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

Այդ ի՞նչ ես խօսում դու, յանդուգն աղջիկ․
Ապա իմ պատիւը ո՞ւր կը մնայ։

ԱԴԵԼՄԱ․

(Այս խօսակցութեան միջոցին քննելով նայել էր թագաւորազնի վերայ, և շատ հիացած խօսումէր իւր մէջ․)
Արդեօք մի խաբէական երազի մէ՞ջ եմ։ Այս ի՛նչ բան է,
Աստուածք, որ տեսանումեմ․ նա՛ է, այն գեղեցիկ պատանին է,
Որ ես իմ հայր Քէյկօբադի պալատումը տեսած եմ որպէս
Հասարակ ծառայ — նա իշխանազն էր, մի թագաւորի որդի․
Դորա մասին վկայումէր իմ սիրտը․ ով, իմ գուշակութիւնը
Զուր չէ եղել։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Արքայազն դու, դեռ ևս ժամանակ կայ· հրաժարվեցէ՛ք
Ձեր դիտաւորութենից,—հրաժարվեցէ՛ք, հեռացէ՛ք դիւանից·
Աստուծուն յայտնի է, որ սուտ են ասում այն լեզուները,
Որ բամբասումեն ինձ խստասրտութեան և անգթութեան պատճառով։
—Ես անգութ չեմ։ Ես կամիմ միայն ազատութեամբ ապրել,
Չկամիմ օտարի սեփականը լինել· այս իրաւունքը,
Որ ամենաստորին մարդուն իւր մօր փորումը տնկակից է,
Կամիմ պահպանել ես, մի կայսերական դուստր։
Ես բոլոր Ասիայի մէջ տեսանումեմ կինը անպատվութեան մէջ,
Եւ դատապարտված դէպ ի ստրկութեան լուծը·
Եւ կամիմ վրէժխնդիր լինել իմ վշտացուցած սեռի համար
Այս հպարտ տղամարդերի ազգից, որ ոչ մի նախապատվութիւն
Թոյլ կնամարդից, չէ ստացել քան թէ կոպիտ ուժեղութիւն։
Որպէս զէնք տուել է ինձ բնութիւնը հնարագէտ հանճար
Եւ սրամտութիւն պահպանելու իմ ազատութիւնը։
— Ես չկամիմ միանգամ գործ ունենալ տղամարդի հետ·
Ես ատումեմ նորան, ես արհամարհումեմ նորա մեծամտութիւնը·
Դէպ ի ամենայն պատուական բան, ագահութեամբ ձեռք է պարզում նա։
Ինչ որ ախորժելի է նորա զգայականութեանը, կամի նա ձեռք բերել·
Եթէ բնութիւնը զարդարել է ինձ գեղեցկութեան ձիրքով,
Պարգևատրել է ինձ իմացականութիւն — ապա ինչու համար ազնիւ բանը
Այս աշխարհի վերայ վիճակվել է այն բաղդին,
Որ միայն գրգռէ որսորդի վայրենի ցանկութիւնը,
Մինչ անարգ բանը իւր անարգութեան մէջ
Խաղաղութեամբ պատսպարումէ իւր անձը։
Մի՞թէ գեղեցկութիւնը պիտոյ է կողոպուտ լինի մինի համար·
Նա ազատ է, ինչպէս արեգակը, այն աշխարհապայծառ լուսաւորը
Երկնակամարի վերայ, որ լինելով լուսաւորութեան աղբիւր և ամենայն աչքի ուրախութիւն,
Այնու ամենայնիւ ոչ ոքի ստրուկ ու արծաթագին ծառայ չէ։

ԽԱԼԱՓ·

Այդպիսի վսեմազգա՛ց սիրտ, այդպիսի հազուագի՜տ ազնուութիւն հոգու
Այս աստուածեղէն կերպարանքի մէջ։ Ով կարող է մեղադրել
Այն երիտասարդին, որ իւր կեանքը այդպիսի մրցանակի համար

Պատրաստ էր վտանգի տակ դնել։ — Վաճառականը
Չնչին ստացուածներ ձեռք բերելու, համարձակւում
Իւր նաւ ու մարդիկը մի վայրենի տարրի հաւատալ.
Քաջ տղամարդը վազում փառքի ստուերական պատկերի քամակից
Մահու արիւնոտ դաշտի միջով — և մի՛ թէ գեղեցկութիւնը միայն
Պիտոյ է ստացվէր առանց վտանգի. գեղեցկութիւնը, որ
Բոլոր բարութեններից առաջինն ու ամենաբարձրն էր.
Ուրեմն ես չեմ մեղադրում ձեզ ոչինչ անգթութեան պատճառով,
Բայց և դուք մի՛ ասէք այս երիտասարդին յանդուգն,
Եւ մի՛ ատէք նորան, որովհետև նա վառված սրտով
Համարձակւում ձգտել դէպ ի անգինը.
Դուք ինքներդ որոշել էք նորա արժէքը
Որով կարելի էր ստանալ նորան. — ասպարէզը
Բա՛ց է արժանաւորի համար — ես թագաւորազն եմ,
Ես ունիմ մի կեանք այդ վտանգի տակ դնելու.
Թէպէտ ոչ բաղդաւոր կեանք, բայց դա իմ բոլոր ունեցածն է,
Եւ եթէ ունենայի դորան հազարապատիկ, և այն կը տայի քեզ։

ՍԵԼԻՄԱ (մեղմաբար ասում Թուրանդօթին).

Լսո՛ւմէք, թագուհի. թէ աստուածները կը սիրէք,
Երեք հեշտ մեկնելի առակներ. նա արժանի է։

ԱԴԵԼՄԱ.

Ի՛նչպէս ազնիւ, ի՛նչպէս սիրարժան տղամարդ է.
Երանի՛ թէ լինէր նա իմս։ Եթէ այն ժամանակը
Իմացած լինէի, թէ նա թագաւորական ցեղից է,
Երբ որ դեռ ևս վայելում էի ես քաղցր ազատութիւնը.
— Ո՜հ, որպիսի սիրով վառվում իմ սիրտը,
Այն րոպէից, երբ որ ես գիտեմ նորան ինձ հաւասարատոհմ.
— Քաջալերվի՛ր, քաջալերվի՛ր, իմ սիրտ,
Ես դեռ ևս կը ստանամ նորան։

(Ասում դէպ ի Թուրանդօթը.)

Իշխանուհի, դուք այլեկոծվումէք, դուք լուռ էք.
Մտածեցէ՛ք ձեր պարծանքը,
Այս տեղ բանը ձեր պատուի վերայ է։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

Եւ նա միայն գրաւեց իմ սիրտը դէպ ի կարեկցութիւն.
Ո՛չ. Թուրանդօթ, դու պարտական ես ինքդ քեզ յաղթել.
— Յանդուգն դու, արի՛ ասպարէզ, պատրաստ կացիր։

ԱԼԹՈՒՄ․

Իշխանա՛ղն, դուք դեռ և՛ս հաստա՞տ էք ձեր խորհրդի վերայ։

ԽԱԼԱՓ․

Տէր Թագաւոր, ես կրկնումեմ․
Մահու բօԹ, կամ Թէ Թուրանդօթ․
(Պանտալօնը և Տարտալիան ցուցանումեն մի անհամբեր կերպարանք․)

ԱԼԹՈՒՄ․

Որեմն կարդացէ՛ք
Այն արիւնոտ հրովարտակը․ Թող լսէ նա և դողայ։

(Տարտալիան դուրս է հանում օրինագիրքը ծոցից, համբուրումէ նորան, դնումէ նորան կուրծքի վերայ, ապա ճակատի վերայ, յետոյ տալիս է Պանտալօնին։)

ՊԱՆՏԱԼՕՆ․

(Ընդունումէ օրինագիրքը, ճակատի վերայ ցած ընկնելով դէպ ի գետին, վեր է կենում և ապա կարդումէ բարձր ձայնով)․

« Ամենայն իշխանազն կարող է խնդրել Թուրանդօթի հարսնուԹիւնը,
« Բայց Թագուհին նախապէս առաջարկումէ նորան երեք առակ․
« ԵԹէ սա չկարողացաւ մեկնել նորանց, մեռանելու է կացնի տակ,
« Եւ նորա գլուխը հանդիսով կը տարվի դէպ ի Պեկինի դարպասը․
« Բայց եԹէ մեկնեց առակները, կը ստանայ իւր հարսը։
« Այսպէս է ասում օրէնքը․ մեք երդվումենք արեգակովը։ »

(կարդալով գիրքը հանդէսի մէջ, դնումէ նորան կուրծքի ու ճակատի վերայ և մատուցանումէ Տարտալիային, որ ճակատի վերայ ցած է ընկնում դէպ ի գետին, ընդունումէ գիրքը և ներկայացնումէ ԱլԹումին)։

ԱԼԹՈՒՄ․

(Բարձրացնումէ աջ ձեռքը և դնումէ գրքի վերայ․)

Ո՛վ արիւնոտ օրէնք․ դու իմ տանջանք ու ցաւ․
Երդվումեմ ես Ֆօհի աստուածի գլխովը,
Դու պիտոյ է կատարվիս։

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

(Վեր կենալով և հանդիսաբար արտասանելով)․

«Այն ծառը, որի վերայ մահկանացուների մանուկները ծաղկելով
ԹառամՓումեն․ բայց ինքը շատ հին է, այնու ամենայնիւ միշտ նոր ինորոյ
Դալար ու կանաչ։ Նա մի կողմումը դարձուցանումէ իւր ճիւղերը
Դէպ ի լոյս, բայց ածուխի պէս սև է նորա միւս կողմը և
Չէ տեսանում արեգակը։

Նա գոյացնում է նոր օղեր,
Քանի անգամ որ նա ծաղկում է.
Ամենայն բանի հնութիւն ցուցանում է
Նա մարդերին։ Նորա դալար կեղևի վերայ
Հեշտ կարելի էր դրոշմել մի անուն,
Որ անհետանում և անտեսանելի է լինում,
Եթէ այն դալար կեղևը ցամաքում և գունատվում է.
Ուրեմն ասա դու ինձ, կարո՞ղ ես հասկանալ,
Թէ ի՛նչ բան նմանում էր այս ծառին։»

(Նա կրկին բազմում է).

ԽԱԼԱՓ.

(Երբ որ նա մի քանի ժամանակ մտախոհութեան մէջ, դէպ ի վեր էր նայել, գլուխ է տալիս իշխանուհուն և խօսում է).

Շատ բաղդաւոր է, Թագուհի, ձեր ծառան,
Եթէ չեն սպասում նորան աւելի մութն առակներ.
Այդ հին ծառը, որ միշտ նորոգվում է,
Որի վերայ մարդիկը ծաղկումեն և թառամումեն,
Եւ որի տերևքը մի կողմումը որոնումեն արևը
Եւ միւս կողմումը փախչումեն նորանից,
Որի կեղևի վերայ գրվում է այս և այն ինչ անուն,
Որ տևում է այնքան երկար միայն, ինչքան նա կանաչ էր.
Այդ ծառը — Տ ա ր ի ն է իւր օրերով ու գիշերներով։

ՊԱՆՏԱԼՕՆԸ (ուրախանալով).

Տարտալիա, յայտնված է առակի խորհուրդը։

ՏԱՐՏԱԼԻԱ.

Մի մազ ևս դուրս չմնաց։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՆԵՐԸ

(բացումեն իւրեանց փակած տոմսակները).

Շատ լաւ, շատ լաւ, շատ լաւ. Տարին, տարին, տարին է. արդարև տարին է։

(Նուագարանքը իսկոյն թնդումեն)։

ԱԼԹՈՒՄԸ (ուրախանալով).

Աստուածների շնորհը լինի քո վերայ, իմ որդի,
Եւ օգնական լինի քեզ մեկնելու միւս առակները։

ՍԵԼԻՄԱ (կողմնակի).

Երկնայի՛ն տեսչութիւն, պաշտպանի՛ր նորան։

ԱԴԵԼՄԱՆ

(Դէմքը դարձուցանելով դէպ ի հանդիսականքը).

Երկնայի՛ն տեսչութիւն, պաշտպանի՛ր նորան։
Թող մի՛ տար, որ այն անգութը
Հարսնանայ սորան և զրկվի իր սիրողից։

ԹՈՒՐԱՆԴՕԹԸ (զայրացած իր մէջ).

Մի՞թէ պիտոյ է յաղթող լինի նա.
Ցափշտակէ ինձանից իմ փառքը.
Ո՛չ. երդումն եմ ուտում աստուածներովը։

(Դէպ ի Խալաֆը).

Ինքնաբաւական տխմար,
Մի՛ ցնծացիր այդպէս շուտով. խելքդ ժողովի՛ր և մեկնի՛ր։

(Միւսանգամ տեղից բարձրանում է նա և յառաջ է տանում խօսքը հանդիսաւոր ոճով).

«Գիտե՞ս արդեօք այն քնքուշ պատկերը,
Որ ինքն իւրեան լուսափայլ է.
Ամեն ժամում մի այլ բան է,
Եւ միշտ դալար նոր ու ամբողջ,
Շատ նեղ տեղում ամփոփվում է.
Շատ փոքր աման իւր մէջ նորան բոլորում է.
Բայց ամեն մեծ բան, որ քեզ շարժում է,
Ճանաչում ես դու այդ պատկերով միայն։

Նու կարող ես դու ասել ինձ այն բիւրեղը (կրիստալը),
Որին ոչ մի ազնիւ քար հաւասար չէ.
Նա լուսաւորում է առանց այրելու,
Բոլոր տիեզերքը ներս է ծծում իւր մէջ,
Նոյն իսկ երկինքը պատկերանում է նորա հրաշալի
Օղի մէջ, այնու ամենայնիւ շատ անգամ ինչ որ
Նա իւրեանից դուրս է փայլեցնում, աւելի գեղեցիկ է,
քան թէ ինչ որ ինքը ներս է ընդունում իւր մէջ։»

ԽԱԼԱՖ.

(Մի փոքր մտախոհութենից յետոյ գլուխ տալով դէպ ի իշխանուհին, խօսում է).

Մի՛ բարկացէք, վսեմափառ գեղեցկուհի, որ ես յանդգնում եմ Ձեր առակները մեկնել։—Այդ քնքուշ պատկերը, որ ամենափոքր Ամանի մէջ ամփոփվելով, ցուցանում է մեզ անչափելի մեծը.

Եւ այն բիւրեղը, որի մէջ ցոլանում է այդ պատկերը,
Որ և մի աւելի գեղեցիկ բան դուրս է շողեցնում իւր միջից.
Դա Աչքն է, որի մէջ օրինակվում է աշխարհը.
Քո աչքն է, երբ որ դա սիրով նայում է իմ վերայ:»

ՊԱՆՏԱԼՕՆԸ

(վեր է թռչում ուրախութեամբ).

Տարտալիա, հոգիս վկայ է, որ թօփով զարկեց նպատակին:

ՏԱՐՏԱԼԻԱ.

Զարկեց ու ճեղքեց միջից, կեանքս վկայ է:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՆԵՐԸ

(Բացել են կնքած տոմսակները).

Շատ լաւ, շատ լաւ, շատ լաւ: Աչքը, աչքը,
Արդարև աչքն է:

(Նուագարանքը սկսում են հնչել):

ԱԼԹՈՒՄ.

Ի՛նչ անակնունելի բաղդ. ողորմա՜ծ աստուածք,
Շնորհեցէ՛ք նորան հասնել և վերջին նպատակին:

ՍԵԼԻՄԱՆ (կողմնակի).

Նրանի՛ թէ այս լինէր վերջինը:

ԱԴԵԼՄԱ.

(Դէպ ի հանդիսականքը).

Վայ ինձ, թագաւորազնը կը յաղթէ.
Նորա սէրը կորած է իմ համար:

(Դէպ ի Թուրանդօթը).

Իշխանազնուհի, ձեր պարծանքը կորած է.
Կարո՞ղ էք դուք համբերել դորան:
Ձեր բոլոր առաջին յաղթութիւնքը կուլ կը տայ մի լոկ բոպէ:

ԹՈՒՐԱՆԴՕԹ

(վեր է կենում սաստիկ բարկութեան մէջ).

Մինչև կը լինէր այդ բանը,
Թո՛ղ յառաջուց կործանվի աշխարհը:
Ցանդուգն երիտասարդ, իմացի՛ր,
Որ ես այնքան ևս աւելի ատում եմ քեզ,
Ինչքան աւելի յոյս ունիս դու յաղթել ինձ
Եւ ստանալ իմ հարսնութիւնը:
Մի՛ սպասիր վերջին առակին. փախի՛ր,
Հեռացի՛ր դիւանից, փրկի՛ր քո հոգին.

ԽԱԼԱՖ.

Ձեր ատելութիւնն է միայն, պաշտելի իշխանազնուհի,
Որ ահ ու դող է ձգում իմ վերայ։
Թո՛ղ այս գլուխը գլորվի հողի մէջ,
Եթէ արժանի չէր շարժելու ձեր սիրտը։

ԱԼԹՈՒՄ.

Թո՛ղ քո դիտաւորութիւնը, սիրելի որդի, մի՛ փորձիր աստուածքը,
Որ երկու անգամ ողորմած եղան դէպ ի քեզ.
Դեռ ևս կարող ես դու քո փրկված կեանքը,
Պատուով պսակված դուրս տանել դիւանից։
Անօգուտ են քեզ այն երկու յաղթութիւնքը,
Եթէ երրորդը, վճռողականը չյաջողվի քեզ։—
    Ինչքան մօտ սարի ծայրին,
    Այնքան վտանգաւոր է կործանումը։
— Ու դու, իմ դուստր, բաւականացի՛ր.
Դադարի՛ր նորանոր առակներ յառաջ բերել.
Նա գործ է կատարել, ինչպէս ոչ մի այլ իշխանազն
Նորանից յառաջ. տո՛ւր նորան քո հարսնութիւնը։
Նա արժանի՛ է նորան, և վերջացրու փորձողութիւնը։

(Սելիման ցուցանումէ աղաչաւոր, Ադելման սպառնագին կերպարանք դէպ ի Թուրանդօթը)։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

Նորա՞ն տալ իմ հարսնութիւնը.
փորձողութիւնը կարճացնե՞լ։
Ո՛չ, երեք փորձ ասած է օրէնքի մէջ.
Թո՛ղ կատարէ սա իւր ընթացքը։

ԽԱԼԱՖ.

Թո՛ղ կատարէ դա իւր ընթացքը.
Իմ բաղդս դրած է աստուածների ձեռքում.
Մահու բօթ, կամ թէ Թուրանդօթ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

Ուրեմն մահ, մահ. լսո՞ւմես դու։

(Նա բարձրանումէ տեղից և սկսումէ երրորդ անգամ հանդիսաբար խօսել).

«Ի՞նչպէս է այն բանի անունը, որ յարգումեն սակաւ մարդիկ.
Բայց դա զարդարումէ ամենայն կայսրի ձեռքը.

Դա շինած է վնասելու համար․ շատ առաւել
Մօտ է սրին․ ոչինչ արիւն չէ թափում,
Այնու ամենայնիւ պատճառում հազար վէրքեր․
Ոչ ոքի կողոպտում չէ նա, բայց շինում հարուստ․
Նա յաղթել է բոլոր աշխարհին․
Նա շինում կեանքը հեզ ու խաղաղ․
Ամենամեծ թագաւորութիւնքը նա է հիմնարկել,
Ամենահին քաղաքները նա է շինել,
Բայց նա երբէք պատերազմ չէ յառաջացուցել․
Եւ երանի այն ժողովրդին, որ իւր անձը հաւատում նորան ։» —

Օտարական դու, եթէ կարող չես գուշակել այդ բանը,
Ապա հեռացի՛ր այս ծաղկափթիթ աշխարհներից ։
(Վերջին խօսքերը ասելով, պատառում նա երեսից դիմակը ։)
Նայի՛ր այս տեղ և տէր կաց քո սրտի վերայ ։
Մեռի՛ր, կամ թէ տուր այն բանի անունը ։

ԽԱԼԱՓ․

(Զմայլված վարագուրում աչքը ձեռքով)․

Ո՛վ երկնային լուսափայլութիւն,
Ո՛վ կուրացուցիչ գեղեցկութիւն․․․․․

ԱԼԹՈՒՄ․

Աստուած․ նա շփոթվում,
Խելքը թռչում նորա վերայից ։
Սրտապնդվի՛ր, իմ որդի,
Ժողովի՛ր զգայութիւնքդ ։

ՍԵԼԻՄԱՆ (իւր համար)․

Դողում իմ սիրտը ։

ԱԴԵԼՄԱ (դէպ ի հանդիսականքը)․

Իմն ես դու, նազելի՛ օտարական․
Ես կը փրկեմ քեզ․ սէրը կ՚ուսուցանէ ինձ այդ ։

ՊԱՆՏԱԼՕՆԸ (ասում Խալաֆին)․

Աստուծոյ համար մի՛ շփոթվէք,
Ժողովեցէք ձեր ուշը, քաջալերվեցէ՛ք,
Սիրելի իշխանազն․ վա՜յ, վայ, երկիւղ ունիմ,
Մի՛ գուցէ անբաղդանայ նա ։

ՏԱՐՏԱԼԻԱ (ծանրութեամբ իւր մէջ)․

Եթէ պատշաճը թոյլ տար, մեք ինքեանքս կ՚երթայինք
Դէպ ի կերակրատուն քացախի շիշը բերելու ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

(Որ անդադար աչքով նայել էր իշխանուհու վերայ, որ դեռ ևս ուշաբարձութեան մէջ էր).

Ա՛ յանդուգն երիտասարդ,
Դու կամէիր քո կորուստը, ա՛ռ ահա։

ԽԱԼԱՖ.

(Ժողովելով իւր ուշը և խաղաղ ժպիտով գլուխ տալով դէպ ի Թուրանդօթը, ասաց).

Ձեր գեղեցկութիւնը միայն, երկնային իշխանուհի,
Ցանկարծ, հրաշափառապէս լուսափայլելով իմ չորս կողմը,
Մի քանի րոպէ խելքս տարաւ։ Ես յաղթված չէի։
Այդ բանը երկաթից է, որ յարգումեն սակաւ մարդիկ միայն,
Որ Չինաստանի կայսրը ինքը պատուելի է կացուցանում,
Ձեռք առնլով տարու առաջին օրումը։
Այդ գործին, որ աւելի անմնաս քան թէ սուրը լինելով,
Ենթարկել է բոլոր աշխարհը մի երկիւղած աշխատասիրութեան.
Ո՛ր մարդը Թաթարստանի աւեր ու անշէն անապատներից,
Ուր միայն թափառումէ որսորդը,
Հովիւը արածեցնումէ իւր ոչխարը,
Գալով այս ծաղկեալ աշխարհը
Եւ տեսանելով իւր չորս կողմումը
Թագաւորութեան կանաչ դաշտերը,
Եւ հարիւրաւոր բազմամարդ քաղաքների բաղդաւորութիւնը
Խաղաղաւէտ օրէնքների հովանաւորութեան տակ.
Ո՛ր մարդը պատուելու չէր այն պատուական գործին,
Որ այդքան օրհնութենների պատճառ է,
Այսինքն Արօրը (գութանը)։

ՊԱՆՏԱԼՕՆ.

Օրհնեա՛լ լինիս դու. թո՛ղ գրկախառնեմ քեզ.
Իմ ուրախութեան ու ցնծութեան բաժակը լցուած է։

ՏԱՐՏԱԼԻԱ.

Աստուած օրհնէ ձեր Մեծութիւնը.
Արդէն աւարտվեցաւ,
Եւ ամենայն լաց ու արտասուք վերջացաւ։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ

(Բացել են փակած տոմսակները).

Արօ՛րը, արօրը. արդարև արօրն է։

(Բոլոր նուագարանները սաստկապէս հնչեցնումեն իւրեանց ձայնը։ Թուրանդօթը աթոռի վերայ նստած կորուսել է իւր զգայութիւնը։)

ՍԵԼԻՄԱ·

(Զբաղված Թուրանդօթի չորս կողմումը)·

Դէպ ի վե՛ր նայեցէք, իշխանուհի· ժողովեցէ՛ք ձեր ուշը·
Յաղթութիւնը նորանն է· գեղեցիկ երիտասարդը յաղթել է։

ԱԴԵԼՄԱ

(Դարձուցանելով դէմքը դէպ ի բազմականքը)·

Յաղթութիւնը նորանն է· նա կորած է իմ սիրու համար։
—Ո՛չ, կորած չէ· յուսա՛, իմ սիրտ։

(Ալթումը անպատմելի ուրախութեան մէջ, ցած է իջնում աթոռից, սպասաւորելով նորան Պանտալօնը և Տարտալեան։ Բոլոր ուսումնականքը իւրեանց տեղերից բարձրանումեն և քարշվումեն դէպ ի յետ։ Բոլոր դռները բացվումեն· երևումէ ժողովրդի բազմութիւն։ Այս բոլորը կատարվումէ նուագարանների հնչողութեան միջոցին։)

ԱԼԹՈՒՄԸ (դէպ ի Թուրանդօթ)·

Այսուհետև չես այլևս տրտմեցնելու իմ ծերութիւնը,
Անողորմ զաւակ դու։ Օրէնքի պահանջողութիւնը
Լցուցվել է, բոլոր թշուառութիւնը վերջացաւ։
— Եկեցէ՛ք, գրկեմ ձեզ, իմ իշխանազն, սիրելի իշխանազն·
Ուրախութեամբ ողջունեմ ձեզ որպէս իմ փեսայ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

(Վերստին նորոգելով ուշը, անմիտ կատաղութեամբ գլորումէ իւր անձը աթոռից երկուքի մէջ տեղ)·

Դադարեցէ՛ք·
Թո՛ղ նա յոյս չունենայ դառնալ իմ ամուսին այր·
Փորձը շատ հեշտ եղաւ։ Նա պիտոյ է նոր ի նորոյ
Դիւանի մէջ մեկնէ երեք միւս առակ·
Ականկալ րոպէում վերայ հասան· ժամանակ
Չշնորհվեցաւ ինձ պատրաստվիլ, ինչպէս հարկ էր։

ԱԼԹՈՒՄ·

Անողորմ դուստր· քո ժամադրութիւնը լցուած է,
Այսուհետև մի՛ յուսա խորամանկութեամբ յիմարեցնել մեզ,
Օրէնքի պայմանը կատարվել է·
Իմ բոլոր դիւանը պիտոյ է վճիռ հաստատէ։

ՊԱՆՏԱԼՕՆ․

Թոյլ տուեցէք ինձ ասել, իշխանազնուհիդ Քարասիրտ,
Այսուհետև հարկաւոր չէ նոր նոր առակներ հնարել,
Եւ նորանոր գլուխներ կտրատել։ Ահա, այս տեղ
կանգնած է տղամարդը, որ մեկնեց բոլոր առակքը․
կարճ ասեմ․ Օրէնքը կատարվել է և կերակուրը
Դրած է սեղանի վերայ․ ի՛նչ ունի ասելու
Իմ պարոն պաշտօնակիցը․․․․․․․․

ՏԱՐՏԱԼԻԱ․

Օրէնքը լցուցվել է; ամենևին լցուցվել է և վերջակէտ․
Դուք ի՛նչ ունիք ասելու, պատուելի ուսումնականք։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՔ․

Օրէնքը լցուցվել է․ գլխատութիւնը վերջացաւ․
Ցաւից յետոյ լինում է ուրախութիւն․
Թող հարսն ու փեսան տան միմեանց ձեռքերը։

ԱԼԹՈՒՄ․

Ուրեմն, թո՛ղ բազմութիւնը դիմէ դէպ ի տաճարը․
Թո՛ղ ստարականը ասէ իւր անունը, և իսկոյն
կատարվի պսակի արարողութիւնը։

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

(կտրում է հօր ճանապարհը․)

Այդ բանը յետ ձգիր հայր․
Աղաչումեմ քեզ բոլոր աստուածների սիրով։

ԱԼԹՈՒՄ․

Ոչ՛․ կարելի չէ յետ ձգել․
Ես որոշել եմ արդէն։ Ապերախտ զաւակ դու․
Արդէն չափից դուրս երկար անարգվելով ու տանջվելով,
կամակատար եմ եղել քո անողորմ պահանջողութեանը։
Քո դատավճիռը պատրաստ է,
Տասն ղոհված մարդերի արիւնով գրած է դա,
Որ ես մորթել տուեցի հաճոյանալով քեզ․
Ես իմ խօսքս կատարեցի, կատարի՛ր և դու քոնը․
Ապա թէ ոչ, երդումն եմ ուտում Ֆօհի աստուածի
Ահաւոր գլխովը, թէ․․․․․․․․․․․․․․․․․

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

(Ընկնում է հօր ոտքերը·)

Ո՛վ իմ հայր,

Շնորհի՛ր ինձ միայն օրաչափ ժամանակ։

ԱԼԹՈՒՄ·

Ոչի՛նչ,

Ոչինչ չկամիմ ես այսուհետև լսել· դէպ ի տաճարը։

ԹՈՒՐԱՆԴՕԹ (յուսահատութեան մէջ·)

Ուրեմն թո՛ղ տաճարը լինի ինձ գերեզման,
Ես կարող չեմ և չկամիմ նորա ամուսին լինել·
Չեմ կարող· աւելի յանձն կ'առնում հազար անգամ մեռանել,
Քան թէ ստորադրել իմ անձը այդ հպարտ տղամարդին։
Այն մտածութիւնը միայն, այո՛ այն մտածութիւնը լոկ,
Թէ պիտոյ է հպատակ լինիմ նորան, քայքայում է իմ կեանքս։

ԽԱԼԱՖ·

Ընդո՛րմ, անողոքելի կին դու, վե՛ր կացէք·
Ո՛վ կարող էր ընդդիմանալ ձեր արտասուքին։

(Դէպ ի Ալթումը·)

Գթացէ՛ք նորան, տէ՛ր թագաւոր·
Ես ինքս աղաչումեմ ձեզ։
Շնորհեցէ՛ք նորան այն ժամանակը, որ պահանջում է նա։
Ի՛նչպէս կարող էի ես երջանիկ լինել, եթէ նա ատում է ինձ։
Շատ քնքուշ սիրով սիրումեմ ես նորան —
Ես կարող չեմ համբերել, տեսանելով նորա վիշտը, նորա ցաւը։
Անզգայ դու, եթէ ամենամտերիմ սրտի ջերմեռանդ սէրը
կարող չէ շարժել քո սիրտը, ուրեմն ցնծացի՛ր դու·
Ես երբէք լինելու չեմ քո ամուսին, հարկադրանքով·
Երանի՛ թէ կարողանայիր դու ներս նայել այս պատառուած
Սրտի մէջ· անտարակոյս ցաւակից կը լինէիր դու։ —
Դու ծարաւի ես իմ արիւնին········
Ուրեմն թո՛ղ շնորհվի, միւսանգամ նորոգել փորձը·
Տէր թագաւոր, պատրաստ եմ ես մեռանել·
Ես չկամիմ ապրել············

ԱԼԹՈՒՄ·

Բա՛ւ լեցի, քա՛ւ լեցի· որոշված է արդէն, դէպ ի տաճար·
Ոչի՛նչ միւս փորձ — անխոհեմ երիտասարդ դու։

ԹՈՒՐԱՆԴՕԹ (*վեր է թռչում զարհուրելով·*)

Ուրեմն դէպ ի տաճար·
Բայց սեղանի ոտքում ձեր դուստրը հնար կը գտանէ մեռանելու։
(*Նա դուրս է հանում մի դաշնակ և կամենումէ գնալ·*)

ԽԱԼԱՖ·

Մեռանե՜լ . . . կարող աստուածք։
Ո՛չ, մինչև բանը կը հասնի դորան — լսեցէ՛ք ինձ, իմ կայսր,
Շնորհեցէ՛ք ինձ մարդասիրաբար այս մի հատ խնդիրը·
— Երկրորդ անգամ կ'երևիմ ես այս դիւանումը,
Ես կ'առաջարկեմ նորան մի մեկնելի առակ·
Այսինքն, թէ ի՞նչ ցեղից է, և ի՞նչ է անունը
Այն իշխանազնի, որ իւր կեանքը պահպանելու համար,
Ստիպված էր սպասաւոր լինել որպէս հասարակ ստրուկ,
Եւ բեռնակիր լինել չնչին վարձատրութեամբ· որ և վերջումը,
Իւր յոյսերի կատարի վերայ կանգնած,
Եւս աւելի թշուառ է քան թէ երբ և իցէ յառաջ։
—Ընդունեթ հոգի· էգուց վաղ առաւօտուն, դիւանի մէջ
Ասացէ՛ք ինձ իշխանազնի և նորա հօր անունը։
Բայց եթէ չկարողացաք, ապա վերջացուցէք իմ չարչարանքը,
Իւ շնորհեցէ՛ք ինձ ձեր քաղցր հարսնութիւնը։
Բայց եթէ կ'ասէք ինձ խնդրած անունները,
Ապա թո՛ղ իմ գլուխս զոհ լինի ձեզ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Համաձայն եմ, իշխանազն։
Այդ պայմանով կը լինիմ ես ձեր սեփականը։

ՍԵԼԻՄԱ (*ինքը իւր մէջ·*)

Մի՛ թէ պիտոյ էր կրկին դողալ ինձ։

ԱԴԵԼՄԱ (*կողմնակի·*)

Վերստին կարող եմ ես յուսալ։

ԱԼԹՈՒՄ·

Ես համաձայն չեմ։
Ոչինչ միւս ևս շնորհում չեմ։ Ես կամենումեմ,
Որ կատարվի օրէնքը։

ԽԱԼԱՖ (*ընկնումէ կայսրի ոտքերը·*)

Կարող կայսր,
Եթէ խնդրուածքը կարող են շարժել ձեր սիրտը,

Եթէ դու սիրումես իմ և քո աղջկայ կեանքը,
Ապա թոյլ տուր այդ։ Եթէ աստուածքը կը պահպանեն ինձ
Այն մեղապարտութենից, որ նորա հոգին չյագենայ,
Այնուհետև թող ըմպյլվի նա, խնդալով իմ արիւնիս վերայ—
Թող մեկնէ նա գիւանումը իմ առակը, եթէ ունի սուր խելք։

ԹՈՒՐԱՆԴՕԹ (ինքը իւր մէջ.)

Հա, դեռ ևս ծաղր է առնում ինձ,
Համարձակվումէ ասպարէզ դանչել ինձ։

ԱԼԹՈՒՄ (դէպ ի Խալաֆը.)

Ընմիտ երիտասարդ. դուք չգիտէք թէ ի՛նչ էք խնդրում.
Չգիտէ՞ք դուք, ի՛նչ խելք ու հանճար ունի նա իւր մէջ.
Եւ ամենախորին բանին կարող է նա վերահասու լինել։
Թող լինի այդպէս. ես շնորհումեմ մի նոր փորձ.
Թող արձակվի նա ձեր հետ դրած դաշնաւորութենից,
Եթէ կարող է էգուց ասել մեզ խնդրելի անունները։
Բայց մի նոր արիւնհեղութեան տեսարան թոյլ չեմ տալու.
Կը դուշակէ՞ նա, ինչ՝ որ պարտ էր, այնուհետև դուք
Խաղաղութեամբ կ՚երթաք ձեր ճանապարհը։ Հերիք էր
Ինչքան արիւն թափվեցաւ մինչև այժմ։ Հետևեցէք ինձ, իշխանայք.
—Անխոհեմ երիտասարդ, այդ ի՛նչ ձեռնարկութիւն է։

(Հանդիսաւոր գնացքը լսվումէ կրկին. Ալթումը ծանրութեամբ քայլելով, իշխանաղնի, Պանտալօնի, Տարտալիայի, ուսումնականների և թիկնապահների հետ, դուրս է գնում այն դարպասից, որի միջով եկել էր։ Ադելմա և Զելիմա աղախինքը, և Թրուֆֆալդինը իւր ներքինի ընկերներով հեռանումեն միւս դարպասովը, կրկնելով իւրեանց առաջին հանդիսաւոր գնացքը.)

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ.

Մի սենեակ կանանոցի մէջ։

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՒՈՅԹ.

—

ԱԴԵԼՄԱ (*միայն*).

Կամ այժմ, կամ թէ երբէք ազատվելու չեմ իմ կապանքից.
Հինգ տարի արդէն կրումեմ ես այն վառուն ատելութիւնը
իմ սրտի մէջ փակած, կեղծաւորվումեմ բարեկամ
Եւ հաւատարիմ դէպ ի այն անգութ կինը, որ ինձանից
խլեց իմ եղբայրը, որ իմ բոլոր ազգատոհմը
Արմատախիլ արեց, ինձ այս ծառայական լծի տակ դրեց։
Այս երակների մէջ վազումէ նոյնպիսի արքայական արիւն,
Ինչպէս նորա երակների մէջ։ Եւ ինձ պիտոյ է ծառայել նորան,
Ծունր խոնարհեցնել նորան, որ իմ բոլոր ազգատոհմի սպանողն է,
Որ իմ կործանման արիւնոտ պատճառն է։
Չկամիմ այսուհետեւ այդ ատելի ստխպանքին տանել,
Սպառված է իմ զօրութիւնը, ես մեռանումեմ,
կեղծաւորութեան ծանրութիւնը այսքան երկար կրելով իմ վերայ.
Ահա հասել է րոպէն, որ պիտոյ է ազատէ ինձ.
Թող սէրը փրկութեան ճանապարհ բանայ ինձ.
Իմ բոլոր հնարները գործ կը դնեմ ես — կամ
Կ'իմանամ նորա գաղտնիքը կամ թէ խորամանգութեամբ
Դուրս կը վարեմ նորան այս պատերի միջից — ատելի կին դու.
Չէ նա լինելու քո փեսան։ Այս ծառայութիւնը
Դեռ ես կամիմ ցուցանել քեզ՝ դաւաճան սրտով.
Իմ յատուկ օգտիս կը ծառայեմ ես, մի քաղցր վրէժ կ'առնում ես,
Քո սիրտը կը պատառեմ ես, թէեւ քո ամբարտաւանութեանը
Ծառայումեմ դաւաճանութեամբ — ես քննեցի ու նկատեցի քեզ.
Դու սիրումես այն իշխանազն պատանին, բայց չկամիս խոստովանել.
Դու պիտոյ է հեռացնես նորան քեզանից եւ արհամարհես,

Քո սեփական սրտի ընդդէմ պիտոյ է յիմարաբար կատաղես դու,
Քո ծիծաղելի փառքը պահպանելու համար·
Բայց միշտ մնալու է քո սրտի մէջ այն խոցը·
Ես գիտեմ նորան· նա անբժշկելի է։
—Քո խաղաղութիւնը ջուրն է տարել· քո սիրտը զգացել է։

(Թուրանդօթը երեւում է յետնակողմումը թիկն տուած Սելիմային, որ աշխատում է հանգստացնել նորան·)

Ահա գալիս է նա· նա ինքն է,
Ամօթից ու կատաղութենից հալումաշ եղած,
Եւ ամբարտաւանութիւն ու սէրը
Միմեանց հետ կռուելով նորա սրտի մէջ·
Ի՛նչպէս ուրախ եմ ես նորա սրտի սառն ցաւի վերայ·
—Նա մօտենում է—թող լսենք, ինչ որ խօսում է նա։

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Թուրանդօթը խօսակցելով Սելիմայի հետ։

ԱԴԵԼՄԱ (*սկզբումը անտեսանելի*)·

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Օգնի՛ր, խորհուրդ տուր ինձ, Սելիմա· կարող չեմ համբերել,
Խոստովանելով ինձ յաղթված բոլոր դիւանի առաջեւ·
Այդ մտածութիւնը սպանում է ինձ։

ՍԵԼԻՄԱ·

Մի՛թէ կարելի է այդ, ով թագուհի·
Մի այդպիսի ազնիւ արքայազն,
Այդպէս սիրավառ, այդպէս սիրարժան,
Կարող չէր ոչինչ բան բաց ի ատելութենից ու զզուանքից —

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Զզուա՞նք, ատելութի՞ւն........

(Ուշը վերան է բերում)·

Ես ատում եմ նորան, այո· գարշելի է նա ինձ·
Նա դիւանի առաջեւ ոչնչացրել է իմ փառքը։
Ամենայն տեղ կ՚իմանան իմ խայտառակվիլը,
Կը ծիծաղեն իմ ձախորդութեան վերայ։

Ո՜վ, փրկի՛ր ինձ — Առաւօտուն վաղ կամենումէ
Իմ հայրը, որ դիւանը հաւաքվի·
Եւ եթէ չկարողանամ ես առաջարկած խնդիրը բացատրել,
Իսկոյն պիտոյ է հարսնանամ նորան։

«Ի՛նչ ազգից է այդ թագաւորազնը,
«Ի՛նչ է նորա անունը, որ իւր կեանքը պահպանելու համար,
«Ստիպված էր որպէս անարգ ստրուկ ծառայել,
«Եւ բեռն կրել չնչին վարձով·
«Որ վերջումը, իւր յոյսերի պսակին մօտեցած,
«Եւս աւելի անբաղդ է քան թէ յառաջ։»

— Թէ այդ արքայազնը նոյն ինքն է, տեսանումեմ հեշտ·
Բայց ի՛նչպէս դէպ ի լոյս հանել նորա անունը և ազգատոհմը,
Որովհետև ոչ ոք ծանօթ չէր նորան·
Նոյն իսկ կայսրը թոյլ է տալիս նորան անծանօթ մնալ։
Ահ ու դողի մէջ, վախեցած, հարկադրված,
Համաձայնեցայ ես վէճ մտանել առանց մտածելու·
Ես կամէի միայն միջոց գտանել — բայց
Ի՛նչ հնար կայ իմանալու այդ գաղտնիքը,
Ի՛նչ հետք, որ կարող էր մեզ հասուցանել այն տեղ։

ՍԵԼԻՄԱ·

Այս տեղ կան խելօք կանայք, ով թագուհի,
Որ մարգարէանումեն թէից և թէի մրուրից։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Դու ծաղր ես անում ինձ· մինչև այդ տեղ է հասել բանը։

ՍԵԼԻՄԱ·

Ի՛նչ հարկաւոր է միշտ ուրիշի հնարագործութիւնը·
—Տեսանո՞ւմէք ձեր առաջև այն գեղեցիկ արքայազնը·
Ի՛նչպէս սրտաշարժ էր նորա գանգատը· ի՛նչպէս սիրալից
Աղերսումէր նա դէպ ի քեզ պատառված սրտով·
Ձեր հօր ոտքումը աղաչումէր ձեր համար։
Ձեր համար, որ ոչինչ ողորմութիւն չարեցիք նորան,
Կրկին անգամ առաջարկեց իւր հազիւ թէ փրկած կեանքը,
Ձեր ցանկութիւնքը կատարելու համար։

ԹՈՒՐԱՆԴՕԹ (դարձուցանումէ իւր դէմքը)·

Լուռ կաց, լուռ կաց այդ մասին։

ՍԵԼԻՄԱ․

Դուք ձեր դէմքը դարձուցանումէք ինձանից․
Ձեր սիրտը շարժված է․ այո՛, այո՛։ Մի՛ ծածկէք այդ բանը․
Եւ մի արտասուք փայլումէ ձեր աչքումը —
Ո՜վ, մի՛ ամաչեցէք գթասիրտ մարդասիրութենից․
Երբէք չտեսայ ես ձեր դէմքը այդպէս գեղեցիկ,
Ո՜վ, վերջացրէք բանը․ եկեցէ՛ք։ —

(Ադելման կամենումէ դուրս երևել)․

ԹՈՒՐԱՆԴՕԹ․

Նշլէս մի՛ յիշիր նորան․
Նա այր մարդ է․ ես ատումեմ նորան, պարտ եմ ատել նորան․
Գիտեմ, որ բոլոր տղամարդիկը անհաւատարիմ են,
Ոչինչ կարող չեն սիրել, եթէ ոչ, իւր անձը միայն․
Կորած էր այդ դաւաճանների վերայ այն գեղեցիկ ձգտողութիւնը,
Այն գեղեցիկ հաւատարմութիւնը մեր կողմից։
Խոնարհ ստրուկներ, երբ որ խնդրումեն մեր հարսնութիւնը,
Բայց դառնումեն բռնակալներ, երբ որ ունին արդէն։
Իւրեանց կոյր կամեցողութիւնը, գրգռված հպարտութիւնը,
Իւրեանց ինքնահաճոյ սաստիկ ցանկութիւնը
Անուանումեն իւրեանց սիրել ու մեծարելը։
Այդ բանը քարշումէ, տանումէ նորանց դէպ ի անլսելի գործեր,
Այդ բանը ձգումէ նորանց մահու ճանապարհի վերայ․
Կին մարդը միայն գիտէ սիրու ճշմարիտ հաւատարմութիւնը։
—Ոչինչ աւելի չեմ ասում։ Եթէ նա էգուց յաղթեց,
Մահը ինձ աւելի զարհուրելի չէ, քան թէ նա․
Այնուհետև աշխարհը, որ ատումեմ ես;
Տեսանելու է ինձ անարգված մի հասարակ գրութեամբ,
Մի այր մարդու, մի հրամայողի կողքում։
Ո՛չ, ոչ․ Թուրանդօթին անարժան է այդքան խոր գլորվիլ։
— Ե՞ս լինիմ նորա հարսը․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․ ․
Աւելի լաւ էր ինձ ձգել իմ անձը բաց գերեզմանի մէջ,
Քան թէ մի այր մարդու գիրկը։

(Ադելման միւսանգամ յետ է քարշվել)։

ՍԵԼԻՄԱ․

Հաւատումեմ, այո, դժուար է ձեզ, ով թագուհի,
Ձեր մեծափառ բարձրութենից ներքև իջանել,

Այն տեղից, ուր աշխարհը զարմանալով նայել էր ձեր վերայ։
Բայց ի՛նչ է փառքը, երբ որ խօսում է սէրը,
Խոստովանեցէ՛ք. ձեր ժամանակը հասել է.
Գնայ, կորչի այդ հպարտութիւնը. տեղիք տուեցէք
Աւելի կարող զօրութեանը։ Ո՛չ, դուք չէք ատում նորան,
Դուք կարող չէք ատել նորան.
Ի՛նչ հարկաւոր է ընդդիմանալ իւր սրտին,
Անձնատուր եղէք ձեր սիրած տղամարդուն. այնուհետև
Թո՛ղ աշխարհը ծաղր անէ մի երջանիկ կնոջ վերայ։

ԱԴԵԼՄԱ.

(Ականջ դնելով, առ փոքր փոքր մօտեցել է և այժմ դուրս է գալիս).

Ով որ ծնած է աննշան ազգատոհմից,
Նորան արժան է այդպէս մտածել.
Բայց մի արքայական սիրտ զգում է արքայապէս.
—Ներէ՛ր ինձ, Սելիմա, քեզ տուած չէ
Հասկանալ մի արքայազն աղջկայ արժանաւորութիւն,
Որ ունէր այնպիսի բարձր աստիճան, ինչպէս մե՛ր Թագուհին,
Բայց այժմ բոլոր մարդերի առաջև, դիւանի մէջ
Պիտոյ է մինչև այդ տեղ ցած իջանէ,
Ցաղթվելով մի հասարակ օտարականից։
Իմ աչքով տեսայ ես այն յաղթութեան պարծանքը,
Այն հպարտ արհամարհանքը բոլոր տղամարդերի հայեացքի մէջ,
Երբ որ երիտասարդը մեր Թագուհու առակները
Խաղալով մեկնեց, որպէս թէ երեխայի հարցմունք էին,
Հպարտաբար վկայելով իւր մէջ իւր գերազանց իմացողութիւնը։
Ո՛վ. ես կամէի գետին մտանել ամօթից ու կատաղութենից—
Ինձ սիրելի է իմ գեղեցիկ Թագուհին, նորա փառքը քաղցր է ինձ.
—Նա, որ արհամարհել է տղամարդերի բոլոր ազգը,
Պիտո՞յ է այժմ լինի այս տղամարդի կին։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

Մի՛ դառնացրու իմ սիրտը աւելի։

ՍԵԼԻՄԱ.

Այն մե՜ծ վատաբաղդութիւնը, կին դառնալ։

ԱԴԵԼՄԱ.

Լուռ կաց, Սելիմա։ Ոչ ով քեզանից հարցանում չէ,
Թէ ինչով է մի ազնիւ սիրտ վիրաւորվում.

Ես կարող չեմ հաճոյախօսութիւն առնել·
Բայց անողորմութիւն կը լինէր այս տեղ,
Խնայել և թաքուցանել ճշմարտութիւնը։
Եթէ արդարև մի ծանր բան է, որ մեք տղամարդը,
Այդ մեծամիտ էակը ընդունումէինք մեր վերայ տէր,
Ապա թեթևանումէ այդ ցաւը, եթէ մեք ինքներս,
Ազատ ընտրութեամբ և շնորհով ընծայումենք նորան մեր անձը,
Եւ նորա վեհանձնութիւնը կապումէ նորա հպարտութիւնը։
Բայց ի՛նչ վիճակ է դուրս գալիս մեր թագուհուն,
Ի՛նչպէս աւերել է նա ինքը իւր բաղդը·
Ոչ թէ նորա ազատ շնորհը և քնքուշ սէրը
Պիտոյ է նորան հարսնացնէ այն տղամարդուն,
Այլ սա ինքնին, իւր յաղթող հանճարի զօրութեամբ
Պիտոյ է այդ հպարտ աղջիկը ստանայ իւր հարսն·
Որպէս իւր գերի կը տանէ նա աղջիկը —
Մի՛ թէ կարող է յարգել նորան —
Ազնուամտութեամբ վարվիլ նորա հետ,
Որ ինքը չէ վարվել այդպէս,
Այլ ստիպել է երիտասարդը կամ մեռանել,
Կամ թէ ձեռք բերել նորան վտանգի տակ դնելով իւր գլուխը·
Եւ այդպէս հասել է նորան որպէս յաղթութեան վարձ։
Մի՞ թէ տղամարդը համեստութեամբ գործ կը դնէ իւր իրաւունքը,
Որ պարտական էր իւր գերազանցութեանը։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

(Սիրտը սաստիկ շարժված).

Ադելմա, իմացի՛ր·
Եթէ չգտնեմ անունները, նոյն իսկ տաճարի մէջ
Կը կոխեմ այս կուրծքի մէջ մի դաշնակ։

ԱԴԵԼՄԱ·

Արիացէ՛ք, իմ իշխանուհի, մի՛ յուսահատվիք·
Ճարտարութիւն կամ խորամանկութիւն պիտոյ է
Բանալ մեզ բոլոր գաղտնիքը։

ՍԵԼԻՄԱ·

Լաւ է։ Եթէ Ադելման աւելի գիտէ քան թէ ես,
Եւ այնպէս անձնատուր է ձեզ, ինչպէս ասումէ,
Ուրեմն թո՛ղ օգնէ նա և հնար գտանէ։

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Ադելմա,

Սիրելի՛ բարեկամուհի. Օգնի՛ր ինձ, հնա՛ր գտիր·
Ես չեմ ճանաչում նորան, չգիտեմ ո՛ր տեղից է այդ եկւորը·
Ի՞նչպէս կարող եմ նորա ազգը և նորա անունը իմանալ։

ԱԴԵԼՄԱ (*մտածելով այդ բանի վերայ*)·

Հանգի՛ստ կացիր — Ահա գիտեմ ես, — մի՛ թէ նորա բերանից
Չլսեցաւ դիւանի մէջ, թէ այս տեղ, այս քաղաքումս,
Պեկինի մէջ ապրումէ մի մարդ, որ ճանաչումէր նորան·
Պիտոյ է քրքրել այդ բանը, պիտոյ է բոլոր քաղաքը
Վեր ի վայր առնել, ոչ ոսկի, ոչ արծաթ խնայել —

ԹՈՒՐԱՆԴՕԹ·

Մե՛ր առ արծաթ ու գոհարեղէնք, մի՛ խնայիր ոչինչ,
Ոչ մի գանձ թանգ չէ իմ աչքումը,
Միայն թէ իմանայի այդ բանը։

ՍԵԼԻՄԱ·

Ուսմի՛ն տանք այդ գանձը, որի՛ց խորհուրդ հարցանենք·
Եւ գիտուք թէ այդ ճանապարհով արդարև կ'իմանայինք,
Թէ որպիսի ոք էր նա, և ի՛նչպէս էր նորա անունը·
Բայց մի՛ թէ ծածուկ կը մնայ, որ կաշառքը,
Բայց ոչ Թուրանդօթի հանճարը մեկնած էր մեզ այդ առակը։

ԱԴԵԼՄԱ·

Մի՛ թէ Սելիման մատնելու էր մեզ։

ՍԵԼԻՄԱ·

Չէ, դա չափից դուրս բան է — խնայեցէ՛ք
Ձեր ոսկին, աղջիկ թագուհի· ես լուռ էի,
Ես յոյս ունէի ձեր սրտի մէջ գութ ձգել,
Ձեզ համոզել, որ այս ամենից արժանաւոր
Իշխանազնը, որին չէք ատում դուք,
Կամայապէս վարձատրէիք — բայց դուք այլապէս կամիք·
Ուրեմն թող իմ պարտականութիւնը և հնազանդութիւնը
Գործ կատարէ։ — Ուրեմն իմացէ՛ք,
Որ իմ մայր Սկիրինան մի փոքր յառաջ իմ մօտ էր,
Եւ հոգին զմայլված էր լսելով, թէ այս իշխանազնը
Նորան տուած առակները մեկնած էր,

Եւ դեռ ևս ոչինչ չգիտելով նորուց լինելու հանդէսի մասին,
Դուրս թողեց բերանից իւր առաջին ուրախութեան մէջ,
Թէ իւր ամուսին Հասանը շատ բարուք ծանօթ է նորան.
Ինչպէս իւր տէր և սիրելի բարեկամ յարգել է նորան.
Ես հարցրեցի, թէ ի՛նչ մարդ էր դա և ի՛նչ էր նորա անունը,
Բայց նա ասաց ինձ, որ այդ բանը անյայտ է և իւրեան,
Ըստ որում Հասանը մեծ զգաստութեամբ ծածուկ է պահում դորան.
Բայց նա յոյս ունէր, վերջումը տեղեկանալ այդ բանին։
—Եթէ արժանի եմ ես դեռ ևս, ապա երկմտիր դու,
Իմ Թագուհի, իմ հաւատարմութեան և սիրու վերայ։

(Հեռանում է սիրտը մի փոքր տհաճ.)

ԹՈՒՐԱՆԴՕԹ (շտապելով նորա քամակից.)

Կացի՛ր, Սելիմա. մի՞թէ վիրաւորված ես դու.
Կացի՛ր, թողութիւն արա քո բարեկամուհուն։

ԱԴԵԼՄԱ (յետ է պահում նորան.)

Թող հեռանայ, ով Թագուհի.
Սելիման բացել է մեզ մեր գնալու ճանապարհը,
Մեր գործը այն պիտի լինի այժմ,
Որ խոհեմութեամբ յառաջ գնանք.
Պատճառ, յիմարութիւն էր մտածել, թէ Հասանը
Կամայապէս խոստովանելու է իւր գաղտնիքը,
Եթէ գիտէր դորա բոլոր խորհուրդը.
Խորամանգ հնարագիտութիւնը, բայց եթէ սա չօգնեց,
Ապա բռնութիւնը պիտի դուրս քարշէ նորանից
Այն խոստովանութիւնը. ուրեմն շտապենք.
Չէ պիտոյ կորուսանել և ոչ մի րոպէ.
Թող գնան, բերեն Հասանը դէպ ի պալատ,
Յառաջ քան թէ նա կը զգուշանար և կը փախչէր մեր ձեռքից.
Եկեցէ՛ք. ու՞ր են ձեր ծառայքը։

ԹՈՒՐԱՆԴՕԹ.

(փաթաթվում է նորա վզին.)

Ինչպէս և կամիս դու,
Ադելմա. ես հաւան եմ ամենայն բանի;
Միայն թէ օտարականը չստանար յաղթութիւնը։
(Հեռանում է.)

ԱԴԵԼՄԱ·

Այժմ, ով սէր, օգնի՛ր ինձ։ Քեզ եմ գանչում,
Ո՛վ դու մեծազօրդ, որ ամենայն բան կարող ես հնազանդեցնել·
Թո՛ղ ինձ խնդութեամբ ազատվիլ ստրկութենից,
Թո՛ղ իմ թշնամուս հպարտութիւնը ճանապարհ բանայ ինձ,
Օգնի՛ր ինձ, որ խորամանգութեամբ խաբեմ այս ատելի աղջիկը,
Ձեռք բերեմ իմ սիրելիս և ուրախացնեմ իմ սիրտը։

ԵՐՐՈՐԴ ՆԵՐԵՒՈՅԹ·

Պալատի նախասրահը·

(Խալաֆ և Բարաք գալիս են խօսելով·)

ԽԱԼԱՖ·

Բայց եթէ ոչ ոք չկայ այս քաղաքիս մէջ,
Որ ծանօթ լինէր իմ որպիսութեանը, բայց ի քեզանից,
Ո՛վ հաւատարիմ հոգի — Եթէ իմ հայրենի թագաւորութիւնը
Շատ հարիւրաւոր մղոններ այս տեղից հեռի,
Եւ արդէն ութ տարի կորած էր, —
Այնու ամենայնիւ, գիտես դու, մեք ապրումէինք անյայտ,
Եւ համբաւը տարածումէ մեր մահը —
Ո՛չ, Բարաք· ով որ ընկնումէ անբաղդութեան մէջ,
Շատ հեշտ կորչումէ մարդերի յիշողութենից։

ԲԱՐԱՔ·

Ո՛չ, իշխանազն, ձեր արածը անխոհեմ բան էր·
Ներեցէ՛ք ինձ։ Անբաղդ մարդը պարտ է վախենալ
Եւ անկարելի բաներից։ Նորա ընդդէմ կը բարձրանան
Եւ անլեզու քարերը, որպէս վկաներ·
Պատը ունի ականջներ, որմերը մատնող են։
Ես կարող չեմ, կարող չեմ տալ իմ հաւանութիւնը·
Բաղդը յաջողել է ձեզ· ամենագեղեցիկ կինը,
Ստանումէք դուք ամենեւին անակնկալ,
Եւ նորա հետ միասին մի մեծ թագաւորութիւն·
Բայց ձեր կանացի քնքշասրտութիւնը դարձեալ
Միանգամայն խլումէ ձեզանից բոլորը։

ԽԱԼԱՖ·

Եթէ դու տեսած լինէիր
Աղջկայ վիշտը, նորա աղիողորմ ցաւը։

ԲԱՐԱՔ·

Ձեզ հարկաւոր էր ուշադիր լինել ձեր ծնողների ցաւին,
Որ դուք Բերլասումը թողեցիք անմխիթար,
Եւ ոչ թէ մի կին մարդու արտասուքի։

ԽԱԼԱՖ·

Մի՛ նախատեցէք իմ սէրը·
Ես կամէի հաճել նորա սիրտը·
Գուցէ իմ ազնուամտութիւնը շարժէ նորա գութը,
Գուցէ շնորհակալութիւն նորա սրտի մէջ·····

ԲԱՐԱՔ·

Այդ օձի սրտումը շնորհակալութի՞ւն····
Այդպիսի բան մի՛ յուսացէք։

ԽԱԼԱՖ·

Նա չէ կարող փախչել իմ ձեռքից·
Ի՛նչպէս կարող էր նա մեկնել իմ առակը։
Դու, Բարաք, այնպէս չէ՞։
Դու մատնել չես ինձ· ո՞չ·
Գուցէ՛ թէ ծածուկ հաւատացած լինիս
Քո կնոջը, թէ ես ով էի։

ԲԱՐԱՔ·

Ո՞չ· քաւ լիցի։
Բարաքը գիտէ հնազանդել ձեր ակնարկութեններին·
Բայց չգիտեմ ես, թէ ի՛նչ սև գուշակութիւն
Գիշերապատում իմ հոգիս և խեղդում իմ սիրտը։

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Առաջինքը։ Պանտալօն, Տարտալիա և Բրիգելլա զինուորների հետ միասին։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Տե՛ս, տես, աՀա նա։ Այս ի՛նչ բան է·
Ո՛ւր էիք դուք մինչև այժմ, իշխանազն պարոն,
Ի՛նչ ունիք այս տեղ որոնելու։

(Բարաքի վերայ մտն ածեցնելով աչքերը․)

Նու ո՞վ է այս մարդը, որի հետ զրոյց էք տալիս դուք։

ԲԱՐԱՔ (ինքը իւր համար․)

Վա՜յ մեզ, ի՛նչ կը լինի այս բանի վերջը։

ՏԱՐՏԱԼԻԱ․

Խօսեցէ՛ք, ո՛վ է այս մարդը։

ԽԱԼԱՓ․

Նս չգիտեմ նորան․
Ես գտայ նորան այս տեղ պատահմամբ,
Եւ որովհետեւ պարապ էի, հարցանումէի նորանից
Քաղաքի ու նորա սովորութենների մասին։

ՏԱՐՏԱԼԻԱ․

Ներեցէ՛ք համարձակութեանս, իշխանազն պարոն,
Դուք չափից դուրս ուղիղ էք այս խարդախ աշխարհի համար․
Բարի սիրտը գլխի հետ միասին կը թռչի ձեր ուսերից —
Այսօր առաւօտուն, դիւանի մէջ,
Ինչպէս մի դեւ յանձն առաք դուք այն յիմարական գործը,
Միւսանգամ դուրս թողուլ ձեռքից այն ծիտը։

ՊԱՆՏԱԼՕՆ․

Հանդարտ կացիր․ ինչ որ եղել է, եղել է․
Բայց դուք, սիրելի իշխանազն, չգիտէք,
Թէ ի՛նչպէս խոր կանգնած էք ջրի մէջ,
Թէ ի՛նչպէս ամենայն կողմից դարան է գործում ձեզ
Խաբեբայութիւնը, և մատնողների որոգայթքը.
Շրջապատել են ձեզ — Եթէ մեք աչքից թողունք ձեզ,
Ապա խաղալիք կը լինեն ձեզ որպէս մի թութակ։

(Դէպ ի Բարաքը խօսելով։)

Դու, անպարկեշտ դրացի, կոխեցէ՛ք ձեր քիթը մի այլ տեղ —
Ձեր մեծութիւն, բարեհաճեցէ՛ք ներս գնալ տունը․ —
Զինուորներ, առէ՛ք նորան ձեր մէջ — Դուք, Բրիգելլա,
Գիտէք ձեր պարտականութիւնը — պահեցէք նորա դուռը
Մինչեւ էգուց առաւօտ վաղ, երբ կը բացվի դիւանը․
Ո՛չ մի մարդ չունի համարձակութիւն մօտենալ նորան․
Այսպէս է կայսրի կամքը։

(Դէպ ի Խալաֆը խօսելով.)

Լսեցէ՛ք. Նա սիրահարված է ձեր վերայ և վախումէ,
Մի՛ գուցէ որ մի արգելք Ներս մտանէ գործի մէջ.
Եթէ դուք մինչև էգուց չէիք նորա փեսան,
Ապա երկիւղ ունիմ, մի՛ գուցէ ծեր թագաւորին
Տանէինք դէպ ի գերեզման. Զգժուարիք, իշխանազն պարոն,
Բայց ձեր արածը երեկ — ներեցէք համարձակութեանս,
Մի յիմարական ընթացք էր — խնդրեմ ու աղաչեմ զգոյշ լինել
Եւ չյայտնել ձեր անձը. մի՛ թողէք որ ձեր անունը որսան ձեր բերանից։

(Նորա ականջի մէջ շշնջելով.)

Բայց եթէ կամէիք ալեւոր Պանտալօնի ականջումը
կամաց, ամենևին կամաց շշնջել ձեր անունը,
Ապա շատ շնորհակալ կը լինէր ձեզ այդ մասին.
Կը ստանա՛մ ես այդ վարձատրութիւնը։

ԽԱԼԱՖ.

Ի՛նչ ես խօսում, ալեւոր դու,
Այդպէ՞ս է ձեր ծառայութիւնը կայսրին, ձեր տիրոջը։

ՊԱՆՏԱԼՕՆ.

Պատուակա՜ն, հրաշալի՜ գնա՛ ուրեմն, Բարօն Բրիգելլա,
Լսեցի՞ք. ուրեմն ի՛նչ էք կանգնած այս տեղ բերանը բաց արած։

ԲՐԻԳԵԼԼԱ.

Եթէ կամիք վերջ տալ ձեր շատախօսութեանը,
Ապա կը կատարեմ, ինչ որ իմ պարտականութիւնն է։

ՏԱՐՏԱԼԻԱ.

Լաւ զգոյշ կացէք, ձեր գլխովը կը հատուցանէք, Բրիգելլա։

ԲՐԻԳԵԼԼԱ.

Ինձ սիրելի է իմ գլուխը այնպէս, ինչպէս ձերը ձեզ,
Պարոն. այս տեղ հարկաւոր չէ յորդորանք։

ՏԱՐՏԱԼԻԱ.

Բոր ու կրակ է ընկել մէջս իմանալու ձեր անունը.
Եթէ կը բարեհաճիք ասել ինձ այդ, իշխանազն տէր,
Որպէս մի թանգագին գոհար, կամէի նորան իմ մօտ
Պահել ու պահպանել — այո՛ կամէի այդպէս։

ԽԱԼԱՖ·

Օ՛ւր է ձեր փորձելը ինձ· էգուց առաւօտուն,
Կ'իմանաք դուք իմ անունը, կ'իմանայ բոլոր աշխարհը։

ՏԱՐՏԱԼԻԱ·

Բրաւօ, բրավիսսիմօ· սատանայի բաժին լինիմ ես։

ՊԱՆՏԱԼՕՆ·

Ուրեմն, բարեաւ մնաս, իշխանազն տէր·
(խօսելով դէպ ի Բարաքը·)
Իսկ դուք, անպիտան պարոն,
Աւելի լաւ կ'առնէիք, գնալ ձեր գործին,
Քան թէ այս տեղ պալատումը աչք խաղացնել·
Հասկանո՞ւմէք ասածս..............
(Հեռանումէ·)

ՏԱՐՏԱԼԻԱ (խէթ աչքով նայումէ նորան·)

Այո՛, այո՛։
Դուք ունիք իմ աչքումս մի տեսակ կերպարանք —
Մի երես, որին ես այնքան շատ հաւան չէի։
Ես բարի խորհուրդ եմ տալիս ձեզ· գնացէք։
(Հետեւումէ Պանտալօնին·)

ԲՐԻԳԵԼԼԱ (դէպ ի Խալաֆը·)

Թո՛յլ տուեցէք ինձ, իշխանազն,
Որ ես կատարեմ իմ տիրոջ հրամանը·
Թող չծանրանայ ձեզ ներս մտանել տուն։

ԽԱԼԱՖ·

Յօժարութեամբ..........
(Դէպ ի Բարաքը մեղմաբար·)
Բարեաւ մնաս, մինչեւ կրկին տեսանենք միմեանց
Աւելի լաւ միջոցներում· բարեաւ մնաս։

ԲԱՐԱՔ·

Տէր, ես ձեր հնազանդ ծառան եմ։

ԲՐԻԳԵԼԼԱ·

Գնա՛, հեռացի՛ր·
Եւ վերջացրու երկար ու ձիգ արարողութիւնքը·
(Խալաֆը հետեւումէ զինուորներին, որ փակումեն նորան իւրեանց մէջ· Թիմուրը հակառակ կողմից հանդէս է գալիս, նկատումէ նորան և ցուցանումէ զարհուրանք ու հիացք·)

ԲԱՐԱՔ (*նայելով նորա քամակից*.)
Աստուած լինի քեզ օգնական, ով պարզամիտ անմեղութիւն.
իմ մասին, ես կը պահպանեմ իմ լեզուս։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ.

Թիմուր. մի ծերունի, աղքատի հանդերձով. Բարաք։

ԹԻՄՈՒՐ (*զարհուրած, խօսում է ինքը իւր հետ*.)
Վա՜յ ինձ. իմ որդի։ Զինուորները գերի են տանում նորան.
Նոքա տանում են նորան սպանելու.
Տարակոյս չկայ, որ Թիֆլիզի բռնակալը,
իմ Թագաւորութեան յափշտակողը,
Մինչև դեկին հրամայել է հալածել նորան
Եւ յագեցնում է իւր վրիժառութիւնը։
(*Շտապում է նորա քամակից և ձայն է տալիս*.)
Խալաֆ, Խալաֆ։

ԲԱՐԱՔ.
(*կտրում է նորա ճանապարհը և բռնում է սուրը նորա կուրծքի վերայ*.)
Կացի՛ր, ով Թշուառ դու. դու պիտոյ է մեռանիս։
(*Դադար. երկուքը զարմացած նայում են իրեարու վերայ. այս միջոցին Խալաֆը հեռացած էր զինուորների հետ*.)
Ո՛վ ես դու, ալևոր. ո՛ր տեղից ես գալիս, ասա,
Եւ ի՛նչպէս գիտես դու այս երիտասարդի անունը։

ԹԻՄՈՒՐ.
Ի՛նչ եմ տեսանում ես, Աստուած իմ.
Դու, Բարաք. դու դեկինի՞ մէջ.
Դու նորա մատնո՞ղը. մի ապստամբ մա՞րդ,
Եւ քարշում ես սուրը քո Թագաւորի՞ վերայ։

ԲԱՐԱՔ.
(*Զարմացած, վայր է Թողում սուրը*.)
Մեծ աստուածներ.
Ո՛վ սքանչելիք. Թիմո՞ւրը....

ԹԻՄՈՒՐ.
Այո՛, մատնիչ դու.
Թիմուրն եմ ես, քո անբաղդ Թագաւորը,
Որին բոլոր աշխարհը և դու մատնել ես.

Ի՛նչ ես յապաղում, առ ինձանից այս կեանքը,
Ատելի է դա ինձ, որովհետև իմ շատ հաւատարիմ ծառայքը,
Չնչին օգտի համար ապերախտութեամբ,
Եւ իմ որդին զոհած եմ տեսանում մահուն .

ԲԱՐԱՔ.

Տէր, — տէր — ով Աստուած .
Դա իմ իշխանն է, իմ Թագաւորը .
Դա ինքն է . Տարակոյս չկայ .

(Ընկնումէ նորա ոտքերը .)

Այս մոխրի մէ՞ջ, այս անարգութեա՞ն մէջ
Պիտոյ է տեսանեմ քեզ . ով աստուածք,
Այս օրի՞ն պիտոյ էր ինձ ականատես լինել .
—Ներեցէ՛ք, Թագաւոր, իմ կոյր կատաղութեանը .
Ձեր որդու սէրն է, ահ ու դողը, հաւատարիմ
Հոգաբարձութիւնն է, որ խելքս տարաւ .
Եթէ սիրելի է ձեզ, ձեր որդու փրկութիւնը,
Թող անունս խալֆ երբէք դուրս չգայ ձեր բերանից .
—Ես ասումեմ ինձ այս տեղ Հասան, և ոչ Բարաք —
—Ախ, վայ ինձ . եթէ մի մարդ ականջ էր դնում ինձ այս տեղ,
Ասացէ՛ք, արդեօք Էլմասը, իմ Թագուհին,
Նո՞յնպէս գտանվումէ ձեր հետ այս քաղաքի մէջ .

ԹԻՄՈՒՐ.

Լուռ կաց, Բարաք, լուռ կաց . մի՛ խօսիր նորա մասին,
Մեր տխուր կեցութեան միջոցին Բերլասումը,
Հալումաշ եղաւ նա մեր որդու ցաւից .
—Նա մեռաւ այս, կեանքից վաստակած ձեռքերի մէջ .

ԲԱՐԱՔ.

Ո՜վ իմ արտասուելի Թագուհի ։

ԹԻՄՈՒՐ.

Ես փախստական եղայ .
Ես չկարացի համբերել այն տեղ իմ անմխիթար միայնութեանը,
Որդուս քամակից ման գալով հարց ու փորձ արեցի
Աշխարհից աշխարհ, քաղաքից դէպ ի քաղաք .
Եւ այժմ, երբ որ երկարատև Թափառանքից յետոյ
Վերջապէս աստուածների ձեռքը առաջնորդել է ինձ

Այս տեղ· իմ աչքիս առաջին տեսանելի բանը է
Իմ գերի ընկած որդիս, որ տանումեն դէպ ի մահ։

ԲԱՐԱՔ·

Եկեցէք, եկեցէք, իմ Թագաւոր·
Մի՛ տրտմեցէք ձեր որդու մասին· գուցէ Թէ մի ամենամեծ
Բաղդի, յառաջ քան Թէ վաղուեան օրը անցանելու էր,
Կը հասանէ նա և դու՛ք նորա հետ միասին,
Միայն Թէ ո՛չ նորա անունը և ոչ ձերը
Դուրս չգար ձեր բերանից — այս մասին զգո՛յշ կացէք·
Ես այս տեղ ասումեմ ինձ Հասան և ո՛չ Բարաք։

ԹԻՄՈՒՐ·

Այդ ի՛նչ գաղտնիք է — Պատմի՛ր ինձ այդ բանը։

ԲԱՐԱՔ·

Եկեցէք· այս տեղ անպատշաճ է խօսել դորա մասին։
Եկեցէք իմ հետ իմ օԹևանս — բայց ի՛նչ եմ տեսանում ես։

(Սքիրինան դուրս է գալիս ապարանքից·)

Իմ կինս ապարանքի միջի՞ց· վա՜յ ինձ·
Մեր գաղտնիքը յայտնված է։

(Դէպ ի Սքիրինան սաստկուԹեամբ·)

Ի՛նչ ունիս դու այս տեղ որոնելու,
Թշուառ կին դու, ինչո՞ւ ես եկած այս տեղ։

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Սքիրինան դէպ ի առաջինքը·

ՍՔԻՐԻՆԱ·

Այո, այո·
Արքունական պալատից եմ գալիս, իմ աղջկայ մօտից·
Սրտիս ուրախուԹիւնը տարաւ ինձ այն տեղ, ըստ որում
Մեր հիւրը, այն օտարական իշխանազնը յաղԹող է գտանվել·
Եւ նորասիրուԹիւնը նոյնպէս։ — Արդարև կամէի ես
Տեսանել — ինչպէս այս տղամարդերից խրտնող, հպարտ աղջկան
Յարմարվումէր հարսնական վիճակը — և դորա վերայ
Ուրախանումէի իմ աղջիկ Սելիմայի հետ միասին.

ԲԱՐԱԿ․

Այդպէս և մտածումէի ես․
Կին դու, կին․․․Դու չգիտես բոլորը, և որպէս շատախօս
Թութակ վազումես դու դէպ ի պալատը․
Ես որոնումէի քեզ, որ պատուիրեմ լռութեան մասին,
Բայց ի զուր․ բանը բանից անցել է․ Կին մարդու անմտութիւնը
Տղամարդու իմաստուն խորհրդից յառաջ է վազում միշտ—
Շատ վեր ի վայր բաներ պիտոյ է դու խօսած լինիս այն տեղ․
Ուղի՛ղը ասա․ ինձ երևումէ որ դու քո անմիտ խնդութեան մէջ
Ասած էիր այսպէս․ «Այս անծանօթը մեր հիւրն է,
Նա բնակումէ մեր մօտ․ իմ տղամարդս գիտէ նորան
Եւ շատ մեծարումէ նորան։»—Խօսի՛ր,
Ասա՞ծ ես դու այդ բաները․․․․․․․․․

ՍԿԻՐԻՆԱ․

Գիտցուք թէ ասած էի, ի՛նչ կայ դորա մէջ․

ԲԱՐԱԿ․

Ո՛չ, ոչ․ խոստովանիր—ասա՞ծ ես դու այդպէս․

ՍԿԻՐԻՆԱ․

Ասած եմ․ ինչո՞ւ պիտոյ էր ինձ թաքցնել այդ բանը․
Նոքա կամեցան և անունը իմանալ ինձանից,
Եւ, թող խոստովանեմ, խոստացայ ես այդ․

ԲԱՐԱԿ․

Վա՜յ ինձ․ մեք կորած ենք — խելագա՛ր դու․
(Դառնալով դէպ ի Թիմուրը․)
Մեզ պիտոյ է հեռանալ․ մեզ պիտոյ է փախչել․

ԹԻՄՈՒՐ․

Ասա՛ ինձ միանգամ, այդ ի՞նչ գաղտնիք են —

ԲԱՐԱԿ․

Դո՛ւրս, դուրս պեկինից․ պիտոյ չէ ժամանակ կորուսանել։
(Թրուֆֆալդինը երևումէ յետնակողմումը իւր սևամօրթ ծառաների հետ․)
—Վա՜յ մեզ․ անագան է արդէն․ նոքա գալիս են ահա․
Նոքա որոնումեն ինձ, ահաւոր Թուրանդօթի սև ծառայքը,
Ներքինիքը — Անմիտ կին դու, ինչ թշուառութեան մէջ
Ձգեց մեզ քո չար լեզուն․․․․․․․․․․․․․․․․․

(Թրուֆֆալդինը նկատել է Բարաքին և նշանացի է անում ներքինի ծառաներին, որ ըմբռնեն նորան·)

Այժմ կարելի չէ ինձ փախչել — փախի՛ր դու,
Թաք կացիր, փրկել քեզ և այս ծերունին։

ԹԻՄՈՒՐ·

Ասա՛ դու ինձ միայն։

ԲԱՐԱՔ·

Դո՛ւրս· առանց հակառակութեան դո՛ւրս·
Ինձ մատնել են — փակ որպէս գերեզման
Թող մնայ ձեր բերանը· երբէք ձեր անունը,
Երբէք նորա անունը դուրս չգայ ձեր բերանից։
—Եւ դու, թշուառ կին, եթէ կամիս դարձուցանել
Այն ձախորդութիւնը, որ քո լեզուդ բերել է մեր վերայ,
Թաք կացիր, ոչ թէ քո, այլ մի ուրիշ տան մէջ· Թաքցրու
Սորան, մինչև վաղուեան օրը անցած էր կիսով չափ։

ՍՔԻՐԻՆԱ·

Չկամի՞ս դու ասել ինձ։

ԹԻՄՈՒՐ·

Չկամի՞ս դու փախչել մեր հետ։

ԲԱՐԱՔ·

Արեցէ՛ք, ինչ որ ես ասումեմ·
Թող պատահի ինձ, ինչ որ պատահումէ,
Միայն թէ դուք փրկէիք ձեր անձը։

ՍՔԻՐԻՆԱ·

Խօսի՛ր, Հասան, ի՞նչ բանի մէջ սխալվել եմ ես։

ԹԻՄՈՒՐ·

Բացայայտի՛ր ինձ այս գաղտնիքը։

ԲԱՐԱՔ (սաստկութեամբ·)

Այս ի՞նչ տանջանք է·
Թէ աստուածքը կը սիրէք, հեռացէք և մի՛ հարցրէք
Աւելի· Նոքա շրջապատումեն մեզ· տարաժամ է·
Եւ բոլոր փախուստը անօգուտ է արդէն·
—Անունները, ալևոր դու, անունները միայն
Պահեցէ՛ք լռութեամբ, և բոլորը կարող է
Դեռ ևս յաջողութեամբ վերջանալ։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԵՐԵՒՈՅԹ·

Առաջինքը· Թրուֆֆալդին ներքինի ծառաների հետ միասին։

—

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

(Փոքր առ փոքր մօտեցել է, և ելումուտքը փակել է և այժմ դուրս է գալիս, չափազանց ծամածռութեամբ բռնելով սուրը Բարաքի կուրծքի վերայ·)

Կացէ՛ք, դադարեցէ՛ք· տեղից չշարժվի՛ք· նենգաւորութիւն
Չլինի· մահով կը մեռանի նա, որ շարժվել է տեղից։

ՍՔԻՐԻՆԱ·

Վա՜յ ինձ········

ԲԱՐԱՔ·

Գիտեմ, դուք որոնումէք Հասանին·
Այս տեղ եմ ես։ Առէք, տարէ՛ք ինձ։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Ըստ··· ձայն մի՛ հանէք·
Բարի է խորհուրդը։ Ձեզ պիտոյ է հանդիպի
Մի ամենևին առանձին շնորհ և պատիւ։

ԲԱՐԱՔ·

Այո՛, դուք կամիք տանել ինձ դէպ ի արքայական կանանոցը։
Եկեցէ՛ք············

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

Հանդա՛րտ, հանդարտ։ Տեսէ՛ք, տեսէք, ի՛նչ շնորհ
Հանդիպումէ ձեզ· մտանել Թագուհու առանձնարանը,
Պալատը — Ո՛հ, ի՛նչպէս բաղդաւոր մարդ էք·
Ոչ մի ճանճ մուտք չունի պալատի մէջ· նախ և յառաջ
Զննում ու քննումեն նորան, արդեօք արու է թէ էգ· եթէ արու է
Ապա առանց ողորմութեան խաչվումէ նա կամ թէ ցցակոխ է լինում։
—Ո՞վ է այդ ալևորը այն տեղ։

ԲԱՐԱՔ·

Մի՛ աղքատ մուրացկան,
Որ անծանօթ է ինձ — Եկեցէք գնանք։

ԹՐՈՒՖՖԱԼԴԻՆ·

(Նայումէ Թիմուրի վերայ մի ծիծաղելի ճշդութեամբ·)
Հանդա՛րտ, հանդարտ· մի աղքա՞տ մուրացկան, այդպէ՞ս·
—Մեք ազնուամտաբար դիտաւորութիւն ունինք
Եւ այս աղքատ մուրացկանը բաղդաւոր կացուցանել։

(Նկատում և նայում Սկիրինայի վերայ.)

—Ո՞վ է այդ կնամարդը։

ԲԱՐԱՔ.

Ի՛նչ ես յապաղում.

Գիտեմ, որ քո թագուհին սպասում ինձ.
Թո՛ղ այդ ծերունին. այդ կնամարդը ծանօթ չէ ինձ.
Ես դորան երբէք տեսած չեմ և չգիտեմ՝ թէ ով էր։

ԹՐՈՒՔՖԱԼԴԻՆ (բարկութեամբ.)

Դու չե՞ս ճանաչում դորան. դու նորան երբէք տեսած չե՞ս.
Անիծեալ ստախօսութիւն. մի՛ թէ ես չգիտեմ նորան
Որպէս քո ամուսին և որպէս մայր Սելիմն աղախնուն.
Տեսած չե՞մ նորան հարիւր անգամ պալատի մէջ,
Երբ որ նա բերումէր մաքուր կտաւիք իւր աղջկայ համար։

(Ծիծաղելի ծանրութեամբ դէպ ի ներքինիքը.)

Լսեցէ՛ք, ստրուկներ, այն հրամանը, որ տալիս եմ ձեզ.
Այս երեք մարդիկս ահա տարէք, դրեցէք բանտ,
Լաւ պահեցէք նորանց, լսո՞ւմէք, մի՛ թողէք նոցա
Խօսել մի կենդանի հոգու հետ, և գիշերային պահուն,
Երբ որ հանդարտ էր, բերէք նորանց պալատ։

ԹԻՄՈՒՐ.

Ո՛վ Աստուած, ի՛նչ կը լինի իմ վերջը։

ՍՔԻՐԻՆԱ.

Ընտանելի է այս։

ԲԱՐԱՔ (դէպ ի Թիմուրը.)

Թէ ի՛նչ պիտի լինի քո և իմ վերջը.
Ես կը համբերեմ ամենայն բանի, համբերի՛ր և դու.
Մի՛ մոռացիր ինչ որ պատուիրեցի քեզ. և ինչ որ
Հանդիպելու է լինի քեզ, զգուշացի՛ր լեզուիդ։
—Ահա քեզ, յիմար կին դու, ինչ որ կամեցած էիր։

ՍՔԻՐԻՆԱ.

Աստուած լինի մեզ օգնական։

ԹՐՈՒՔՖԱԼԴԻՆ (դէպ ի ներքինիքը.)

Ըմբռնեցէ՛ք նորանց։ Տարէ՛ք նորանց։

(Հեռանումեն։)

(Շարունակութիւնը մի այլ տետրակում։)

Ս. Նազարեանց։

ԳԻՒՏՔ ԵՒ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ։

ԺԷՄՍ ՈՒԱԹ.

Յակոբ Ուաթը, երկրորդ Նապոլէոն խաղաղ ազգաշինութեան խորհրդով, մի քաջանձնական յեղաշրջող աշխարհային բաների դէպ ի լաւը, որ իւր շոգեշարժ մեքենայովը բոլոր եւրոպական կեանքը հիմնովին կերպարանափոխ է արել և աւելի տեւողապէս, քան թէ այն պատերազմի աստուածը պահպանել է իւր համար իւր տիրապետութիւնքը: — Յակոբ Ուաթը 1736 թուականի Յունվարի 19-ին ծնել է Գրինօքումը Շոտլանդիայի մէջ, ուր նորա հայրը նոյն միջոցին պարապումէր համբարակետի գործով, հոգալով նաւարկութեան հանդերձանք և անօթներ, այլև հոգաբարձու էր շինութիւնների և գործակատար որպէս վաճառական: Ուաթի հայրը մեռաւ 1782-ին, 84 տարեկան հասակում. նա նշանաւոր է կացուցել իւր անձը ջերմութեամբ յառաջ տանելով հասարակօգուտ ձեռնարկութիւններ: Ջէմսը լինելով նորա երկու որդիներից անդրանիկը, այնպիսի քնքուշ կազմուածքով տղայ էր, որ նորա ծնողքը խղճմտեցին պահանջել նորանից որ և լցէ ծանր աշխատութիւն, և ուսուցանումէին նորան ըստ մեծի մասին ինքեանք, թէպէտ նա երբեմն գնումէր քաղաքի ժողովրդական դպրոցը: Իւր հիւանդութեան պատճառով գրեթէ միշտ տան մէջ նստած, պիտոյ է մանուկը մտածէր որ և լցէ կերպով պարապեցնել իւր անձը. լինելով մի զգաստ և արթուն հոգով մանուկ, սկսեց նա իւր խաղարկութիւնքը շինել իւր համար ուսանելիք, և հազիւ թէ վեց տարեկան էր նա, և ահա մի օր տեսան նորան գետնի վերայ տարածված գծագրել կաւիճով մի երկրաչափական առածի ձեւակերպութիւն: Երբ որ նա ձեռք բերեց հարկաւոր գործիքը,

պէտք ածեց դորանից ամենամեծ յաջողակութեամբ, իւր ընկերների խաղալիքը ուղղելու և իւր համար նորերը շինելու։ Մի ճշմարիտ տօնախմբութիւն էր նորան և նորա խաղընկերներին, երբ որ յաջողվեցաւ նորան կազմել մի փոքրիկ ելեքտրական մեքենայ, որ զարմանք բերեց այն և չափահասների վերայ։ Մի երեկոյ նստած էր նա թէյըմպութեան սեղանի մօտ իւր մօրաքուեր կողքին, բայց ոչ տեսանում էր և ո՛չ լսում էր իւր շրջակայ մարդիկը, այնպէս, որ նորա մօրաքոյրը ստիպվեցաւ ասել նորան մի փոքր տհաճութեամբ. «Վե՛ր առ դու գոնեայ մի գիրք ձեռքդ, Ջէմս դու. պատճառ, մի ժամ է ահա, որ դու ոչինչ չես արած. եթէ ո՛չ, թէյամանի խուփը բարձրացնելով և կրկին ցած դնելով. ո՛վ այդպէս դատարկութեամբ անցուցանելու էր ժամանակը։» Բայց մանուկը չէր կորուսել իւր ժամանակը արթնութեան երազի մէջ, այլ ամենամեծ ուշադրութեամբ քննել էր ներգործականութիւնը այն շոգիների, որ թէյամանից դէպ ի վեր էին բարձրանում, և մերթ մի պնակ և մերթ մի դգալ պահելով շոգիների հոսանքի մէջ, զարմացած էր այն կաթիլների վերայ, որ յախճապակու կամ փայլուն մետաղի կոկ մակերևութի վերայ կերպաւորվումէին։ Այս րոպէիս ընկել էին նորա հոգու մէջ այն գաղափարի առաջին սերմերը, որ նորա յատուկ բաղդաւորութիւնը հաստատելուց յետոյ, պիտոյ է միլիոնաւոր մարդերի վիճակը սահմանէր — այսինքն գոլորշու շոգեներէ [illegible] մէջ։

Նորա ծնողքը փոխեցին նորա հետ դէպ ի կենդանագիր ջրեղերեայքը Լօխ-Լօմօնի ծովակի, այն խորհրդով, որ իւրեանց մանուկի առողջութիւնը պնդացնեն. այն տեղ մի հոյակապ լեռնային աշխարհի մէջ, մանուկը պատեհ միջոց գտաւ ծանօթանալու տունկերի և քարերի հետ, այլև հաղորդակցութեամբ լեռնաբնակ Շոտլանդացոց հետ ուշադիր լինելու այդ լեռնաբնակ ժողովրդի զրոյցներին և վիպասանութեններին։ Նորոգված ու ամրացած վերադարձաւ նա դէպ ի Գրինօք, և այնուհետև ամենամեծ ջերմութեամբ նուիրեց իւր անձը ճիշդ գիտութեանների ուսումնասիրութեանը։ Բնական և քիմիական փորձակատարութիւնքը զբաղեցնում էին նորա ժամանակի առաւել մեծ մասը։ «Մաթեմատիկական տարերքը բնապատում գիտութեանների» Լէյդենեան պրօֆեսոր Գրավեզանդի գործը, բացեցին

նորա համար մուտքը դէպ ի Գիտէքայի ամենայն մասունքը, և տուեցին նորան անսպառելի մտածութեան նիւթ։ Լինելով հիւանդոտ, նոյնպէս զգումէր նա իւր մէջ մեծ ձգտողութիւն դէպ ի բժշկականութիւն և վիրաբուժութիւն և պարապումէր դոցանով, ինչքան որ ժամանակ էր թողում նորան այլ բաներից յետոյ։ Մխանդամ անակնկալ վերայ հասան նորան, երբ որ նա մի անյայտ հիւանդութեամբ մեռած երեխայի գլուխ տանումէր իւր օթեւանը, բանալու և քննելու նորան։

Միտ դնելով նորա այդպիսի գերօրինակ ձգտողութեանը դէպ ի գիտութիւն, պէտք էր սպասել, որ Ուաթը նուիրելու էր իւր անձը որ և իցէ գիտնական ուսումնասիրութեան, բայց այդպէս չեղաւ գործը։ Շուտով կրկին զարթեցաւ նորա մէջ իւր հին սէրը դէպ ի մեքենականութիւնը, և յաղթող հանդիսացաւ գիտութեան վերայ։ Պատանին ամենայն խոնարհամտութեամբ վճռեց իւր մէջ, պարապել մաթեմատիկական անօթների պատրաստութեամբ, և այս պաշտօնի մէջ յառաջադէմ լինելու համար, գնաց նա իւր ազգական Կապիտէն Մուրի հովանաւորութեան և ուղեկցութեան տակ դէպ ի Լոնդոն, 1755 թուակ. Յունիսի 7-ին։ Երկուքին ճանապարհորդքը էին ձիով և իւրեանց գրպանքը չկամենալով չափից դուրս աշխատեցնել, գործ դրեցին նոքա տասերկու ամբողջ օր մինչև կը հասանէին մայրաքաղաքին։ Նորընծայ ճարտարապետը ճանապարհների դեռ ևս գուշակում չէր, թէ նորա հնարագիտութեամբը այս ճանապարհը պէտք է մի օր կատարուի տասերկու ժամի մէջ։

Լոնդոնումը դժուարացաւ նորան սկզբումը մի վարժապետ ճարել իւր համար. վերջումը հաւանեցաւ մի մեքենագործ, Ջոն-Մօրգան անունով, ընդունել նորան որպէս աշակերտ 20 գինէի հատուցմամբ Ուաթի կողմից։ Ուաթը այնպէս քաջ գործ դրեց իւր ժամանակը, որ իւր, թէև նեղ ու մութ արուեստանոցի մէջ կարողանումէր պատրաստել այն ամենանուրբ անօթները, որ գործ է ածում գիտութիւնը, և մի տարուց յետոյ վերադարձաւ նա, ինչպէս եկել էր, ձիով դէպ ի իւր շոտլանդեան հայրենիքը, լինելով ամենևին կարող հաստատելու մի մեքենագործական արուեստանոց։

Ամենից յառաջ գործ գտաւ նա Գլասկովումը, ուր պատւիրեցին նորան վերստին պիտանի կացուցանել այն աստղաբաշխական գործիքը, որ մի ճանապարհորդութեան միջոցում դէպ ի Ճամայկա կղզին փչացած էին, որ և նոցա տէրը բաշխած էր համալսարանին: Ուաթը կատարեց իւր գործը այնպիսի բանագիտութեամբ, որ այն ուսումնական ընկերութիւնը շատ բաւական կացաւ նորանից. և այսպէս Ուաթը որոշեց իւր մեքենագործական արուեստանոցը բանալ Գլասկովի մէջ: Բայց որովհետև նա ոչ մի գլասկովեան քաղաքացու որդի էր, և ոչ իսկ որպէս աշակերտ մասնակից էր որ և իցէ արուեստաւորների ընկերութեան, այս պատճառով ընդդիմացան նորա դիտաւորութեանը առանձնաշնորհ արուեստաւորքը, և դժուարութեամբ կարողացան համալսարանի պրոֆեսորքը ճարել նորան մի գործատուն նոյն իսկ համալսարանի շինութեան մէջ: Այնուհետև աշխատումէր նա որպէս համալսարանի մեքենագործ լուռ և խաղաղ, շատ տարիներ պարապելով մաթեմատիկական և աստղաբաշխական գործիք պատրաստելու: Գլասկովի համալսարանի ուսանողների մէջ գտանվումէր մի նշանաւոր մարդ, Ջօն-Ռօբինսօն անունով, որ մի առանձին սիրով պարապումէր աստղաբաշխութեան, որ և հիանալով ու զմայլելով Ուաթի շինած պատուական գործիքների վերայ, ցանկացաւ ծանօթանալ մեքենագործի հետ: Դա այցելութիւն արեց Ուաթին իւր յատուկ արուեստանոցի մէջ, և փոքր չեղաւ նորա զարմանքը նկատելով, թէ այս մեքենագործ մարդը ոչ թէ միայն գիտնականապէս հաւասարակշիռ էր նորան, այլև գերազանց: Այդ ուսանողը պատմումէ այսպէս. «Բոլոր երիտասարդ մարդիկը, որ հողխացած էին սիրով դէպ ի գիտնական կրթութիւն, ծանօթացել էին պարոն Ուաթի հետ: Երբ որ հանդիպումէր մեզ որ և իցէ դժուարութիւն, որպիսի և լինէր դա, իսկոյն դիմումէինք մեր ճարտարապետին: Եթէ նա միանգամ մօտեցել էր մի առարկայի, այնուհետև չունէր նա հանգիստ ու դադար, մինչև ամենաշատ ուսումնասիրութեամբ խորամուխ չէր եղած նորա մէջ: Խօսք խօսակցութիւնը դարձուցանվէր լեզուագիտութեան, հին պատմութեան, բնապատում գիտութեան, բանաստեղծութեան կամ ճաշակաբանութեան վերայ, կամ թէ քաղաքական և զինուորական մեքենագործի պաշտօնի վերայ, ամենայն բանի մէջ քաջ

փորձառու էր նա և կարող էր ուսուցանել մեզ: Շատ փոքր ձեռնարկութիւնք լինումէին, զոր օրինակ ջրանցքների շինութիւնք, գետերի կարգաւորութիւնք և սոցա նմանք, որոնց մէջ խորհուրդ չհարցանէին պարոն Ուաթից, թէպէտ դոքա յատկապէս չէին պատկանում նորա արուեստին:»

Այսպէս ահա, այն հանդիպմունքից մինի մէջ պատահեցաւ, որ վարդապետ Ռօբինսօնը յայտնեց իւր գաղափարը, որ էր շոգիների զօրութիւնը գործ դնել անիւների շարժողութեան համար. սա մի կայծ էր, որ Ուաթի գլխի մէջ իսկոյն լուսաւորեց մի ամբողջ համակարգութիւն մտքերի և շարժութիւն տուեց նոցա: Վարդապետ Ռօբինսօնը հրաւիրուեցաւ դէպ ի Պետերբուրգ և ժամանակ չունէր յառաջ տանելու իւր գաղափարը, բայց մեքենագործը սկսեալ 1761-ից մինչև 1762-ը, իսկոյն ձեռնամուխ եղաւ գործին և պատրաստեց մի մեքենայի գաղափար: Ռօբինսօնը յայտնել էր մեքենայի պատրաստութեան եղանակը, այնպէս, որ եթէ շարժեցուցիչ շոգիքը կապակցէին անիւների հետ, շոգելից գլանակը (ցիլինդրը) պիտոյ է այնպէս տեղաւորվէր, որ նորա բացուածը ունենար իւր գլուխը յետնակողմեան ծայրումը, որ հարկաւոր չլինէր լծակի (balancier) գործադրութիւնը: «Ես սկսեցի այս պատճառով — գրում է Ուաթը — պատրաստել մի կաղապար երկու երկաթաթերթեայ գլանակներից, որ փոխ առ փոխ դէպ ի վեր ու վայր ներգործէի երկու հաստատուն ձողերի վերայ, որ ամրացած էին սայլի անիւների առանցքի վերայ: Բայց կաղապարը շինած լինելով շատ թոյլ և փոքրաշխատ ջանադրութեամբ չարդարացրեց իմ ակընկալութիւնքը: Յառաջացան նորանոր դժուարութիւնք: Ռօբինսօնը և ես ստացանք այլ աշխատութիւնք, որ կարելի չէր զանց առնել, և որովհետև մեքենայի ճիշդ հիմնական կանոնը դեռ ևս յայտնի չէր, այդ պատճառով բարձի թողի եղաւ խորհուրդը:»

Երկու անգլիացիների, որոնց մինը էր դարբին Թօմաս Նիւքօմէն և միւսը ատաղձագործ Ջօն-Քաուլէ, յաջողել էր Պապինիանեան կճոյճը (որի մէջ, եթէ օդակից փակէիր նորան, շոգիացուցած ջուրը եփելով խիստ է շինում ոսկրներ) կերպարանափոխելով շինել մի մեքենայ, որ ներգործումէր հաստատուն ձողեր վեր ի վայր խաղացնելով: Այնու ամենայնիւ

Նիւկոմէնեան մեքենան մնաց դեռ ևս շատ անկատար, որովհետև շոգիների թանձրանալովը գլանակի մէջ, կորչում էր շատ ջերմութիւն և այնու ամենայնիւ անհնարելի էր մի կատարեալ հովացուցումն շոգիների:

Այնուհետև պատահեցաւ, որ Ուաթը գլասկովեան համալսարանից ստացաւ մի այդպիսի շոգեմեքենայի կաղապար նորոգելու: Նա նկատեց, որ դորանով միայն կորչում էր այնքան շատ ջերմութիւն, ուրեմն և այնքան վառելի նիւթ վատնվում էր, ըստ որում շոգիքը թանձրացնում էին նոյն գլանակի մէջ, ուր շարժվում էր հաստագլուխ ձողը: Նոյն ջուրը որ թանձրացնում էր շոգիքը, պիտոյ է հովացնէր նոյնպէս հալած երկաթից շինած գլանակը. բայց երբ որ սորա մէջ ներս էին թողվում նոր շոգիք, այնուհետև դոցա ջերմութեան մի մասը մաշվում էր, հովացած գլանակը ջերմացնելու համար: Այս վատնողութիւնը հեռացնելու համար, գործ դրեց Ուաթը մի փայտեայ գլանակ, երբ որ նորան տոգորել էր կտաւատի իւղով: Սորանով ի հարկէ խափանեց նա շոգիների շուտով հովանալը, այնու ամենայնիւ վատնվում էին դեռ ևս շատ ու շատ շոգիք, և փայտը երևեցաւ որպէս մի անյարմար նիւթ դորա համար: Այնուհետև մտածեց նա մի յաջող ճանապարհ, այսինքն մի պահարանի մէջ, որ բաժանած էր գլանակից (ուր ջուրը փոխվում էր շոգիք) թանձրացնել շոգիքը, այնպէս, որ այսուհետև հարկաւոր չէր հովացնել գլանակը պաղ ջրով: Վարդապետ Ռօբինսօնը ներս մտաւ նորա արուեստանոցի մէջ նոյն րոպէին, երբ որ Ուաթը պատրաստել էր իւր երկրորդ երկաթաթիթեղեայ պահարանը, և ճշդապէս քննելով նորան բռնած էր դողումը: Երկարատև մտածութենից յետոյ ձայն արձակեց նա ուրախութեամբ. «Այսուհետև հարկաւոր չէ ձեզ, իմ սիրելի, գլուխ կոտրել, թէ ինչպէս պիտոյ էր տնտեսաբար գործ դնել շոգիքը: Ահա պատրաստել եմ ես մի մեքենայ, որի մէջ ոչ մի հիւլէ շոգի կորչելու չէ: Դորա մէջ գոյանալու է մի այրեցած ջերմութիւն, այլ ջերմ ջրի թացութիւն:»

Սորանով արած էր առաջին վճռական քայլափոխը, որ պիտոյ է անմահացնէր Ուաթի անունը: Նա 1768 թուականին ստացաւ մի թագաւորական ապահովագիր իւր նոր գիւտի համար և միաբանվեցաւ բազմագէտ ուսումնական Ռօէբուքի

հետ, որ կամէին մի ընկերութիւն պատրաստելու այս նոր կրակամեքենայքը, ինչպէս դոքա ասումէին: Բայց շուտով բացայայտվեցաւ, որ նոցա արծաթի հնարքը անբաւական էին, և Ուաթը կամէր ահա հրաժարվիլ իւր գիւտաւորութենից, բայց այն միջոցիս դուրս եկաւ Բուլթօն ամենամեծ մանուֆակտուրիստը Բիրմինգամի: Սորա պատեւ հայեացքից ծածուկ չէր մնացել նոր գիւտի մեծակշիռ խորհուրդը. նա ունէր և հնարք և վստահութիւն ոչինչ ծախքից յետ չքաշվելու, որ հարկաւոր էին այդ գիւտը պիտանի կացուցանելու համար: Նա վճարեց ուսումնական Ռօէբուքին իւր մէջ դրած արծաթը, փոխադրեց նորա վնասը և տեղափոխեց Ուաթին դէպ ի Բիրմինգամ: Սօհօ գիւղումը, Բիրմինգամի մօտ, ունէր Բուլթօնը իւր մեծ գործատունը, ուր պատրաստվումէին զանազան տեսակ մետաղեղէն անօթներ: Նոր գիւտը պիտոյ է անմիջապէս օգտակար լինէր լեռնահանք ունեցողներին, որ մինչև այն միջոցը մեծ ծախքով դուրս էին հանում իւրեանց ածխաքարը: Որովհետև մինչև այժմ գործ դրած մեքենայքը կարող չէին փոխվիլ, ուրեմն հարկաւոր էր պատրաստել նոր անօթներ, մտա դնելով Ուաթի գաղափարներին: Առաջին պատրաստութիւնքը գործ դրվեցան Կօռնվալլի մէջ, ուր շատ թանգ էր ածխաքարը, և երևեցան շատ պիտանի: Հնարողին պիտոյ է հասանէր նորա մեքենայի զօրութեամբ յետ ձգած ածխաքարի երրորդամասի արդիւնքը: Ուաթը ամենայն կողմից, այս և օտար աշխարհներից յանձնարարութիւնք առացաւ. այնուհետև թէ Ուաթին և թէ Բուլթօնին հարկաւոր էր ոչ թէ միայն թոյլտուութիւն առնել և աւելի երկար գործ դնելու իւրեանց առանձնաշնորհութիւնը, այլև մտածել աւելի կատարելագործել իւրեանց մեքենայքը, որ սոքա գերազանց լինէին միւսներից, որ այլ մարդիկ շինած էին նմանելով Ուաթին: Պարլամենտը մի քննութենից յետոյ, որ սկզբումը երևումէր թէ ձեռնտու չէ Ուաթի գիւտին, վերջումը պարգևեց նորան մի առանձնաշնորհութիւն 25 տարի ժամանակով: Նաև Ֆրանսիայի թագաւոր Լուդովիկոս տասնևվեցերորդը շնորհեց նորան 1778-ին մի ապահովագիր մեքենայք պատրաստելու և վաճառելու դէպ ի Ֆրանսիա, և 1779-ին երկու եղբարք Պերրիէ անուն, բերեցին Փարիզ Սօհոյի մէջ պատրաստած մի մեքենայ և գործ դրեցին նորան ջրմղութեան համար:

Գլանախական մեքենագործքը հնարեցին զանազան կատարելագործութիւնք և այնուհետև սեփականեցին իւրեանց բոլոր մեքենայի գլխաւոր պարծանքը։

Բայց Ուատը դադար չառաւ իւր առաջին քայլափոխի մէջ, այլ արեց մի երկրորդ և աւելի խորհրդաւոր յառաջադիմութիւն։ Մինչև 1780 թուականը գործ էր դրվում շոգեմեքենան ջուրը բարձրացնելու համար, և եթէ կամէին նորան պէտք ածել ջրաղացների համար, ապա պիտոյ է նորանով բարձրացուցած ջուրը նախ և յառաջ բերվէր մի վերևից զարկող անիւի վերայ, և այսպէս դարձեալ կորչումէր շատ զօրութիւն։ Ուատը հնարեց այն երկրորդ մեծ կատարելագործութիւնը, որ անմիջապէս պիտոյ է յառաջացնէր մի յեղափոխութիւն բոլոր մեքենագործութեան մէջ և ապա, բոլոր ընկերական աշխարհի մէջ, այն գերօրինակ արդիւնաբերութեամբ, որ այնուհետև երեք միլիոն մարդերի զօրութիւն փոխարինվեցաւ շոգիների ուժով, և շոգիների միջնորդութեամբ գոյացնվումեն այժմ այնպիսի ներգործութիւնք, որ ոչինչ այլ կերպով կարող չէին գոյանալ։ Խնդիրը այն էր, որ հաստագլուխ ձողի ուղղաձիգ վեր և վայր շարժողութեան հետ լծորդվէր (կապակցվէր) մի անդադար անուաշարժութիւն, և Ուատը վճռեց այդ խնդիրը, ըստ որում օրինակ առնլով սովորական մանող անիւը, հնարագործեց «մոլորակային» ասած անիւը, երբ որ արդէն յառաջուց փորձել էր միայն պտուտակովը։ Ինքը Ուատը խօսումէ այսպէս. «Շատ ու շատ առաջարկութիւնք անցանումէին գլխիցս, բայց ոչ մինը դոցանից երևումէր ինձ յարմարաւոր հատուցանելու ինձ այն նպատակին որ դրած էր աչքիս առաջև, այսինքն գործ դնելով մի հասարակ պտուտակ, մկրատ սրող անիւի, ինչս որ շարժվումէ ոտքով, յառաջացնել մի անուաշարժութիւն։ Յեսանաքարը (սրոցը) յառաջ է վազում և այն միջոցին, երբ որ դարձեալ բարձրացրել էր ոտքը, հետևելով այն թափին (ուժգին բերմանը) որ ստացել էր քարը, որ և ներգործումէ որպէս պտուտական անիւ։ Այս պատճառով առաջարկեցի ես գործ դնել երկու մեքենայք, որ ներգործումէին երկու պտուտակների վերայ, որ ամրացրած էին մի և նոյն առանցքի վերայ, այնպէս, որ այդ մեքենայքը կերպաւորէին մի անկիւն 120 աստիճանի մեծութեամբ։ «Փորձը յաջողվեցաւ կատարելապէս, այլև գերազանց

գտանվեցաւ քան թէ իւր ունեցած անկատարութիւնքն էին։ Բայց որովհետև հնարողը զանցառու էր եղած մի առանձնաշնորհական թուղթ առնուլ այդ մասին, մի աշխատաւոր, որ օգնական էր գտանվել կաղապարի պատրաստութեանը, խաբեց Ուաթին և փոքր մի յետոյ դուրս երևեցաւ մի առանձնաշնորհական թուղթ ձեռքումը իւր անունով (Ստաէլ), որպէս թէ նորա գիւտն էր պտուտակի գործադրութիւնը շոգեմեքենաների վերայ։

Ուաթը զրկվելով այսպէս իւր, թէև արդարև շատ հասարակ հնարագործութեան արդիւնքից, սկսեց անդադար ինքնին կատարելագործել իւր գիւտը արդէն յիշեալ «մեքենաշարժութեամբը մոլորակային անիւների» կամ, թէ ինչպէս ասվում է «Արեգակի ու մոլորակների», այլև յաւելացրեց դորա վերայ «Պարալելօգրամ» ասած բանը, կամ թէ աղխսակաձև կապակցութիւնը կարճ երկաթաձողերի, որով հաստատգլուխ ձողը ինչքան կարելի է ուղղահայեաց տարուբերվում է։ Իսկ շոգիների հետ ըղհետէ հոսանքը կաթսայի միջից դէպ ի մեքենան կանոնաւորելու համար, ինչպէս պահանջում էին հանգամանքը, Ուաթը նորա բերեց կենտրոնախոյս պենդուլան, այլև յարակցեց շոգիների թանձրաչափը, և միւս յայտարար նշաններ, թէ կաթսայի, թէ կօնդենսատորի (թանձրացուցիչ ամանի) և թէ գլանակի մէջ եղած շոգիների ճնշականութիւնը չափելու համար, այնպէս, որ այժմուս շատ կատարեալ մեքենաների մէջ չկայ ոչ մի կարգադրութիւն, որ կարելի չլինէր վերածել դէպ ի որ և իցէ գաղափարը Ուաթի։ (*)

(*) Ուաթի առաջին մեքենայքը այնպէս էին, որոնց մէջ շոգիքը յառաջացնում էին միայն հաստատգլուխ ձողի ցած իջանելը, կամ թէ «պարզապէս ներգործող» մեքենայք. բայց վեր բարձրանալը յառաջանում էր նորանով, որ հաստատգլուխ ձողը գլանակի յատակին հասած լինելով, փակում էին շոգիների հոսանքը, մինչ յառաջուց ներս թողած շոգիքը տարածվում էին. հաստատգլուխ ձողի թէ վերայ և թէ տակ, ուրեմն և վերանում էր ճնշողութիւնը։ Մի հակակշիռ ծանրութիւն, որ կախ էր տուած լծակի միւս ծայրումը, ուր և նոյնպէս գտանվում էին երկու ջրահան ձողեր, կարող էր և հեշտութեամբ յառաջացնել հաստատգլուխ ձողի դէպ ի վեր բարձրանալը։

Այս պարզապէս ներգործող շոգեմեքենայի թերութիւնքը լցրեց Ուաթը իւր «Կրկնակի ներգործող» մեքենայով, որի վերայ շոգիքը յառաջացնումէն հաստագլուխ ձողի վեր և վայր խաղալը և առանց մի հակակշիռ ծանրութեան։

Այն միջոցին, երբ որ Ուաթի հանճարը նշանաւոր հանդիտացաւ շոգեմեքենայքը կատարելագործելով, չդադարեց նորա մշտավառ հոգին և այլ բաների մէջ նորանոր գիւտեր գործել: 1765 թուակ. հնարել էր նա մի մեքենայ, հեռաւոր առարկայքը նկարելու համար. 60 մինչև 80 այսպիսի անօթներ պատրաստեց նա ինքը, ընծայելու համար: 1770 թուակ. հնարեց նա այն շատ մեծահանճար մանրաչափ գործին, որով կարելի է չափել հեռաւորութիւնքը: 1780 թուակ. դուրս երևեցաւ նա իւր օրինակող մեքենայովը: Հռչակաւոր Դարվինը մի գիտնական ընկերութեան մէջ, որին անդամակից էր և Ուաթը, յայտնեց, թէ ինքը հնարատեղծել է մի գրիչ, որ ունենալով երկու կտուց, կարող էր երկու բան միասին գրել, այնպէս, որ կարելի էր մի նամակ գրելու միջոցին պատրաստել նորա և բնագիրը և օրինակը: Ուաթը իսկոյն պատասխանեց «Ես յոյս ունիմ ցոյց տալ ձեզ, թէ այդ խնդիրը կարելի է աւելի բարւոքապէս վճռել.» և միւս օրին գլուխ էր բերել արդէն իւր օրինակող մեքենան:

Գլասկովումը յառաջացել էր մի հասարակութիւն, որ Կլայդ գետի աջ կողմումը հաստատել էր մի ջրաբաշխութիւն, բոլոր քաղաքի տներին ջուր հասուցանելու համար: Երբ որ շինութիւնքը կառուցած էին արդէն, հանդիպակաց եզրի վերայ յայտնագործեցին մի աղբիւր, շատ պատուական ջրով: Բայց շինութիւնքը դրած էին միանգամ գետի այն կողմը, և այսպէս, մտածեցին մի ընդաձիգ փողովակով, որի բերանը պիտոյ է ներս ծծէր աղբիւրաբուղխ ջուրը, այս կողմը փոխադրել: Բայց այն գետինը, որ պիտոյ է կրէր մի այդպիսի փողովակ, դժուար էր ամրացնել ճախնային յատակի վերայ, որ շատ անգամ ծածկած էր շատ ոտնաչափ բարձր ջրով: Ուաթից խորհուրդ հարցրեցին, և սա իսկոյն վճռեց հարցանողի տարակոյսը: Ուաթը մի քանի օր յառաջ սեղանի վերայ քննած էր մի ծովային խեցգետին, որի բազմանդամեայ պոչը արկեց նորա մէջ այն գաղափարը, թէ պիտոյ էր կազմել երկաթից մի մեծ, ծովախեցգետնեայ պոչ, որով կարող էր ջուրը տեղափոխուիլ ուր կամէին: Այս անպամաւոր փողովակաձգութիւնը կարող էր տեղի տալ գետատաշտի որպիսի և իցէ փոփոխութեանը ատագայի մէջ և իսկոյն գործ դրվեցաւ:

Ամերիկացի Ֆուլտոնը որ շինեց առաջին շոգենաւը, հոգացել էր մեքենայի շինութիւնը Սօհօյումը 1803 թուականի Օգոստոսի 8-ին. նա գլուխ եկաւ 1805-ին, լինելով այնքան զօրաւոր, որ հաւասար էր 19 ձիու ուժի: Ուաթին շատ քաղցր էր նկատել շոգենաւարկութեան յառաջադիմութիւնքը. նա 1804-ին գնեց Կալեդոնիա անունով շոգենաւը, որ կրում էր 100 կառասի ծանրութիւն և ունէր 32 ձիու ոյժ. և երբ որ արդէն նորա մնացած մեքենան փոխարինել էր երկու նոր մեքենաներով (ամէն մինը դոցանից ունէր 14 ձիու ոյժ), գործ դրեց իւր նաւը ճանապարհորդութիւն կատարելու դէպ ի Հոլլանդիա, և Րէյն գետը դէպ ի վեր մինչև Կօբլենց յառաջ խաղալով. 48 ժամի և 52 մինուտի մէջ շոգենաւը թնդալմուկ գնացքով հասաւ Րոթթերդամից դէպ ի Կէօլն: Վերադառնալուց յետոյ, Կալեդոնիան կատարեց Թէմզի վերայ 250 փորձական ճանապարհորդութիւնք, որոնցից օգուտ քաղեց Ուաթը, էական կատարելութիւնք տալով շոգենաւի կազմութեանը (*):

Թէպէտ և այն մեծ շոտլանդացի ճարտարագործը ևս ազատ չգտանուեցաւ կեանքի տրտում պատահարներից (նա զրկուեցաւ իւր առաջին ամուսնուց և մի շնորհալի զաւակից), բայց նորա կեանքը ճոխ էր բաղդաւոր յաջողութեամբք և շատ ազնիւ ուրախութեամբք, որ պատրաստեց նորա համար բարեկամութիւնը ամենապատուական մարդերի հետ: Նորա համբաւը տարածուեցաւ շատ հեռի քան թէ Սօհօյի և Բիրմինգամի սահմանքը: Արքայական ընկերութիւնը Էդինբուրգի մէջ 1784-ին ընտրեց նորան իւր անդամակից, 1785-ին — արքայական ընկերութիւնը

(*) Մինչև 1854 թուականը Սօհօյի գործատունը հասուցել էր արդէն 319 մեքենայք, որ բաղկացնում էին մի ճշմարիտ զօրութիւն 52,314 ձիու ուժի: Ամենամեծ շոգեշարժ հսկայանաւը, որ մինչև այժմ լող է տուել ծովի ալիքների վերայ, է 1853 թուականին բաց թողածը ծովի մէջ, դուքս Վելլինգտոն, (Duke of Vellington) հաւասար 700 ձիու ուժի իւր մեքենաների զօրութեամբ, որ տուգութեամբ ցուցանում է մօտ 6,600 ձիու ոյժ: Այս ամենամեծ շոգենաւի երկայնութիւնը չափում է 292 անգլիական ոտնաչափ, նորա լայնութիւնը 60 ոտն. և նորա ուղղահայեաց բարձրութիւնը նաւի յատակից մինչև նաւի խելքի ամենավերին մասը — 78 ոտնաչափ, մի մեծութիւն, որ գերազանց էր առաւել շատ ապարանքներից մեծ մեծ քաղաքների մէջ: Անունովս Ուաթ, մի քանի տարի յառաջ, մեծարվել է մի փոքրիկ շոգենաւ անգլիական նաւաժողովի մէջ. Վելլինգտոն անունով նաւի մեքենաների պատրաստութեամբը ամենամեծ պարծանք է ճարել իւր համար Սօհօյի գործատունը. բայց այդ պարծանքին չեղաւ ակնատես մեծանուն Ուաթը:

Լօնդոնի մէջ։ Բիրմինգամումը գտնվումէր մի գիտնական ժողով «Լուսնեան ընկերութիւն» անունով, որին պատկանումէր նոյնպէս հռչակաւոր բնագէտն Պրիստլէյը, որ իւր յիշատակարաններ ի մէջ առաւել բաղդաւոր անցքը իւր կեանքի մէջ համարում է այն բանը, որ նորա բարի բաղդը հանդիպեցրեց իւրեան այնպիսի մարդկերի, որ նորա գիտնական աշխատութիւններին ամենայն կերպով յառաջադիմութիւն տուեցին։ Այս մարդկերի շարքումն բարձրագոյնս դրած է Ուատի անունը։ Յիշեալ ժողովը, որին պատկանումէր և դօքտոր Դարվինը, ամենայն ամիս լուսնի լրութեան միջոցին հաւաքվումէր։ 1781-ին Ուատը այս ժողովին առաջարկեց իւր յայտնագործութիւնը, թէ ինչպէս էին ջրի բաղադրական մասները, և հրապարակութիւնը նորա գրուածի այս առարկայի վերայ, ծանօթացրեց նորան լօնդոնեան ուսումնական ընկերութեան առաւել հռչակաւոր անդամակիցների հետ։ Այն գաղափարը, թէ կարելի էր գործ դնել պտուտակը փոխանակ թիաձև անիւների, շոգենաւեր շարժելու համար, արդէն 1770 թուակ. զարթեցաւ Ուատի սրա-հայեաց հոգու մէջ, և բացայայտ ասած կայ մի նամակի մէջ (Սեպտ. 30-ից) առ դօքտոր Սմօլը, որին ուղարկել էր Ուատը և իւր յատուկ ձեռքով պատրաստած կերպաձևութիւնը։ 1785 թուակ. հռչակաւոր Կավենդիշը այցելութիւն գնաց Բիրմինգամին և Սօհօյին, ճշտապէս ծանօթանալու այն տեղերի առաւել նշանաւոր մեքենագործական արուեստանոցներին։ Սորանից յետոյ Ուատը այցելութիւն արեց Լօնդոնին, և այս տեղ, ինչպէս Փարիզումը ուր երկու անգամ եղած էր, ընդունվեցաւ շատ փառաւոր կերպով։ 1787-ին վիճակվեցաւ նորան այն պարծանքը, որ էր իւր շոգեմեքենայի կազմուածքը մեկնաբանել Անգլիու թագաւորին ու թագուհուն։ Թէև նա շատ թոյլ ու հիւանդոտ էր իւր մանկութեան օրերումը, բայց շատ զուարթ ու գործունեայ էր որպէս ծերունի։ Վալտեր Սկօտը իւր «Մենաստան» անուն գրուածի յառաջաբանի մէջ խօսում է իւր հայրենակցի մասին, այսպիսի ծանօթաբար կերպով։

«Ուատը ոչ թէ միայն շատ հմտաւոր գիտնական էր, մի այնպիսի մարդ, որ ամենամեծ յաջողութեամբ խմնումէր կապակցել միմեանց հետ թիւեր ու զօրութիւնք, որ հասարակ կեցութեան մէջ գործ էին դրվում. նա ոչ թէ միայն մի նախա-

պատիւ տեղ ունէր այն մարդերի կարգումը, որ նշանաւոր են կացուցանում իւրեանց անձը մի մեծապարունակ ուսումնականութեամբ, այլ էր նա մի շատ պատուական ու սիրարժան մարդ: Այն մի անգամը, որ ես հանդիպեցայ նորան, գտայ ես նորան ոչ բազմաթիւ, հիւսիսային ուսումնականներից շրջապատած: Այն տեղ տեսայ ու լսեցի բաներ, որ մոռանալ ոչ տեսանելու և ոչ լսելու եմ: Ուաթը իւր 81 տարեկան հասակում այնպէս զգաստ, սիրարժան, բարեացակամ էր, որ ամենամեծ յօժարութեամբ ուշադիր էր բոլոր խնդիրներին որոնց վերայ խօսք կար, և իւր քանքարի ու երևակայութեան գանձերը դուրս էր թափում բոլոր առարկաների վերայ. նորա գիտութիւնը միշտ պատրաստ էր ծառայել ամենայն մարդու: Ներկայ պարոնների մէջ գտանվումէր մի քաջ լեզուաբան: Ուաթը խօսումէր նորա հետ այբուբենքի սկզբնաւորութեան վերայ, որպէս թէ Կադմոսի ժամանակակից էր: Երբ որ մի հռչակաւոր կրիտիկոս ներս խառնվեցաւ խօսակցութեան մէջ, կը կարծէիր դու, թէ այն ծերունին իւր բոլոր կեանքը նուիրած էր գեղեցիկ հըմտութեանների ուսումնասիրութեանը: Մեք զարմանալով վերահասու եղանք, որ ոչ մի փոքր ի շատէ նշանաւոր ուսման մնացել էր չկարդացած նորանից, և թէ նա այսպիսի գրուածների այնպիսի ջերմութեամբ ուշադիր էր, ինչպէս մի սիրահար պատանի 18 տարեկան հասակում:

Եթէ միտ դնենք այդ տղամարդի արդարև մեծապարունակ աշխատասիրութեանը, ապա մի ծիծաղելի տպաւորութիւն է գործում մարդու վերայ, երբ որ նա ամենայն ծանրութեամբ հաւատացնումէր, թէ նորա կեանքի գլխաւոր վայելչութիւնը էր ծուլութիւն և քուն:»

1817 թուականին, Ուաթը դարձեալ այցելութիւն գնաց իւր շոտլանդեան հայրենիքին. նորա առողջութիւնը երևումէր պինդ ու ամուր, քան թէ երբ և իցէ եղած էր: Բայց 1819 թուականի ամառումը երևեցան առանձին նշաններ հիւանդութեան, որ անհանգստութիւն պատճառեցին նորա գերդաստանին և բժշկին: Նա ինքը չծածկեց իւր հիւանդութիւնը և ասաց իւր բարեկամներին. «Իմ սիրտս շատ շարժված է այն սիրու և բարեկամութեան վերայ, որ դուք ցուցանումէք ինձ. և շտապումեմ շնորհակալ լինել ձեզանից. պատճառ, ես ահա մօտեցել

եմ իմ վախճանին:» Այնուհետև յայտնեց նա իւր շնորհակալու սրտի զգայութիւնքը դէպ ի Ամենակարողը, որ շնորհել էր նորան այդքան երկար օրեր և օրհնել էր նորան պատուով ու հարստութեամբ: Որովհետև նորա որդին երևումէր վհատ-ված, աշխատեց ծերունին ամենայն կերպով արմատացնել նորա սրտի մէջ ամենալաւ մխիթարական պատճառներ: Նա վախճանվեցաւ 1819-ին, Օգոստ. 19-ին, 84 տարեկան հասակում իւր ագարակումը Հէթֆիլդի մէջ:

Նորա հողեղէն նշխարքը ամփոփվեցան Հէնդսվօրթի Թեմական եկեղեցումը, նորա հաւատարիմ բարեկամ Բուլթօնի գերեզմանի մօտ. Նորա որդի Ջէմս Ուաթը (որ միայն աւելի երկարակեաց եղաւ քան թէ իւր հայրը) կառուցանել տուեց նորա գերեզմանի վերայ մի գօթական մատուռ, որի մէջ տեղաւորվեցաւ մի գեղեցիկ մարմարինեայ կիսարձան, գործ Չէնթրէ քանդակագործի, որ մեծ հարազատութեամբ պատկերացնումէր ծերունի Ուաթի ազնիւ կերպարանքը: Մի մեծամարմին արձան բրօնզից, նոյն ճարտարապետի ձեռքով շինած, կանգնած է Գլասկովի գէորգեան հրապարակի անկիւնումը, և ցուցանումէ թէ շօտլանդեան վաստակաւորութեան մայրաքաղաքը ինչքան պարծենումէր այն բանով, թէ եղած է Ուաթի մեծամեծ յաջողութիւնների խանձարուրքը: Վերջապէս 1827-ին մի գեղեցիկ արձան կառուցվեցաւ նորան, նոյն Չէնթրէ ճարտարապետի ձեռքով Բիրմինգամ քաղաքումը, և յետոյ պատրաստեց նոյն արուեստաւորը իւր ճարտարապետական գործը մի հսկայաձև արձան կարրարեան մարմարինից, անգլիական պանթէօնի համար Վեստմինստրեան մենաստանումը: Տապանագիրը պատուանդանի վերայ շարադրվել է Լօրդ Բրուհմի ձեռքով, և այսպէս է ահա.

«Ոչ թէ մի անուն մշտնջենաւորելու համար, որ միշտ անմահ պիտի մնայ, քանի որ խաղաղաւէտ ճարտարութիւնքը ծաղկելու են, այլ մանաւանդ թէ ցոյց տալու համար, թէ մարդկային ազգը ուսել է պատուել այն մարդիկը, որ առաւելապէս արժանի են նորա շնորհակալութեանը. Թագաւորը, նորա գործակալքը և շատերը ազնուականների կարգից և թագաւորութեան քաղաքացիներից կառուցել են այս յիշատակարանը Յակոբ Ուաթին, որ իւր անդուգական հանճարի զօրութիւնը,

որ կանուխ վարժվել էր փիլիսոփայական հետազօտութիւնների մէջ, պարծուց դէպ ի շոգեմեքենայի կատարելագործութիւնը, ընդարձակեց իւր աշխարհի պարարտութեան աղբիւրքը, մարդու կարողութիւնը մեծացրեց և վեր հանեց իւր անձը դէպ ի մի գերագոյն աստիճան, գլխաւոր մարդերի շարքումը և աշխարհի ճշմարիտ բարերարների կարգումը:»

Պ. Նահապետեանց:

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ,

Անցեալ օրերումը այցելութիւն էի գնացել իմ բարեկամներիս մինի մօտ, որ մի պատուական ծերունի է ռուս ազգով, շատ բարեացակամ մարդ, և պատրաստ միշտ բարի անել իւր ընկերին, ինչքան կարող էր: Ես գործ ունէի այդ ծերունու հետ, և մեր խօսակցութեան մէջ վերայ հասաւ մի մեծաւոր անձն այն պաշտօնի վիճակից, որին պատկանումէր և ծերունին: Խօսակցութիւնը ընդհատվեցաւ, որովհետև եկւոր անձը սկսեց հարցափորձ անել ծերունուց ներկայ 1859 Թուականի Մոսկովեան լրագրի (Московскія вѣдомости) 17 Թերթի մասին, որ իբրև թէ ստացած էր, բայց կորուսել է մի գիրուածով, և կամէր այդ թերթից մի օրինակ կրկին ստանալ, և խնդրումէր ծերունուց, եթէ կարելի է, ընծայել նորան այդ թերթը իւր ստացած օրինակից: Տանուտէրը իսկոյն հրամայեց բերել խնդրած թերթը, որ և եկւորը ձեռք առաւ, և նկատելով իմ երեսի վերայ սրտիս հարցասիրութիւնը, սկսեց ձայնով կարդալ մի նամակ, որի բովանդակութիւնը արժան եմ համարում հայկական թարգմանութեամբ ուղարկել ձեզ և խոնարհաբար խնդրել, որ բարեհաճէիք տպել դորան ձեր գեղեցիկ օրագրի մէջ: Նամակի նիւթը վերաբերվումէ մի հասարակական ցաւի, և այն մտածութիւնքը, որ հրատարակել է յիշեալ նամակի ռուս հեղինակը, ամենեին արժանի են և մեր Հայերիս ընթերցանութեանը: Իբրև երկրորդական բան այս գիրուածի մէջ, կամէի ծանուցանել ձեզ, թէ այն ազդու տպաւորութիւնը, որ արեց իմ վերայ նամակի ընթեր-

ցանողը, ամենևին պայծառապէս հասկացրեց ինձ, որ մեք Հայերս շատ յետ ենք ձայնով ընթերցանութեան արուեստի մէջ, կամ ուղիղն ասեմ, դեռ ևս ընթեռնուլ չգիտենք։ Հոգիս փառաւորվեցաւ այդ մարդու ընթերցանութեան վերայ. Նորա մէջ ասես թէ կարդումէր հոգին ու սիրտը, և ոչ թէ մենակ շրթունքը։

Ահա նամակի բովանդակութիւնը.

---

17 Փետրվարի. Մոսկովեան լրագիր, Երեքշաբաթի, համար 41։

Իրկուտսկ. Յունվարի 14-ին։ Մի ստորոտի լուր հասաւ մեզ։ Մեք չգիտենք դեռ ևս, արդեօք պիտոյ էր, թէ պիտոյ չէր հաւատալ այդ համբաւին — բայց գիտենք որ եթէ դա ըստոյգ է, եթէ գործը կատարվել է, ապա հասարակաց կարծիքը մեր մէջ կարող չէր գովասանել դորան։

Ասումեն, թէ այն դարշելի բռնութիւնը, որ յայտնի է մեզանում կապալի (օտկուպի) անուամբ, մի տեսակ հրէական մենութիւն տալով պայմանադրութեանը, մտօ է ահա, որ տարածվի նոր ձևով բերած Ամուրեան սահմանի մէջ, որ հազիւ թէ մտել էր Ռուսաց թագաւորութեան շրջանակի մէջ։ Խանալ՝ ընծայ նորան, 1859 նոր տարու համար։

Ի՛նչպէս. մի՞թէ այսուհետև, երբ որ արդէն հասարակաց կարծիքը միապէս բացայայտվելով Ռուսաց բոլոր հրապարակախօս դրուածների մէջ, ողջունել է այդ նոր սահմանի միաւորութիւնը Ռուսաստանի հետ, այն միակ ցանկութեամբը, այն միակ խորհրդով, այն միակ պատուիրակը հրամանի, որ լինի այդ տեղ ազատութիւն, ազատութիւն դաղթաշինութեան, ազատութիւն աշխատութեան, ազատութիւն վաճառականութեան և փոխադարձութեան, ազատութիւն ամենայն շարժողութիւնների մէջ նորաստաց սահմանի օգտի համար, որին, ինչպէս մի մանուկի համար, ամենայն բանի մէջ և հարկաւոր է միայն ազատութիւն, որ աճէ, զօրանայ և ծաղկի — մի՛ թէ այսուհետև, այս դեռ ևս կուսական հողի վերայ, որ պատրաստ է ընդունել իւր մէջ բոլոր սերմերը բարութեան, պիտոյ էր նախ և յառաջ աշխատել,

տնկել մենոպոլեոնի մոլախոտերը: Մի՛ թէ այս տեղ ևս պիտոյ էր տնկել և սերմանել այն օտարաթոյն բոյսը — կապալական կարգը (откупная система), որ դուրս է ծծում ամենապատուական հիւթերը ժողովրդի միջից, որ չորացնում և հալումաշ է առնում այն աշխարհը, ուր թոյլ են տալիս նորան արմատանալ:—Կապալ. դորա անունը լսելով միայն, եռումէ ահաճութիւնը քաղաքական տնտեսագէտի սրտում: Եւ եթէ կապալային կարգի կորստաբեր հետևանքները, նորա, ամենայն մոքով տապալանիչ ազդեցութիւնը չլինէին մեր մէջ այնքան բացայայտ, մինչև այն աստիճան անտարակուսելի, որ ոչ ոք համարձակութիւն չունի ձայն բարձրացնել և պաշտպանել նորան: Եւ երբ կամէին դորան ներս բերել այն նոր սահմանի մէջ. երբ որ դա, ամենայն կողմից անէծքով բեռնաւորված, և մեր մէջ, ինչպէս լսումենք, այս վերջին չորս տարիքը քարշ քարշվելով ապրում է, այս ժամանակիս ահա, արուեստական, բռնակալական կերպով, հաճոյանալով մի հատ մարդու, թէ արդարութեամբ և թէ անարդարութեամբ հարստացած մի ղօշաքաղի (ростовщикъ), բայց բոլոր սահմանին վնասելով, կամենումեն ներս բերել կապալը մի աշխարհի մէջ, որ դեռ ևս վարակված չէր այս հասարակական ցաւովը: Ո՛չ. այս բանը ոչ թէ միայն ժամանակից դուրս, կամ թէ պարզապէս մի սխալմունք է, այլ դա կը լինէր մի յանցանք ընդդէմ հասարակաց բարոյականութեան:

Զարմանալի՜ գործ: Մեք սովոր ենք հաւատալ, թէ աւելի քան թէ միւս եւրոպական տէրութեններին, սահմանված էր մանաւանդ Ռուսաստանին կատարել Ասիայի մէջ լուսաւորչի, քրիստոնէական և եւրոպական աշխարհաշինութեան տարածողի պաշտօն: Ռուսաստանի վերայ ամենից յառաջ պարտք կայ դրած, քրիստոնէութեան և գիտութեան լուսովը լուսաւորել այն ազգերը, որ դեռ ևս նստած էին «մահու ստուերների մէջ» մանաւորել նոցա, վաստակարարութեան, քաղաքական և թագաւորական բարեկարգութեան բարիքը: Գոնեայ այսպէս էր մինչև այժմ Ռուսաստանի գլխաւոր լցուցանելի պաշտօնը Ասիայի մէջ, այդպէս է նորա կատարելի գործը այս տեղ, գործ ոչ առանց փառքի, որովհետև չէ առանց մարդկութեան օգտի, որ և արժան չէր նորան թող տալ մի այլ ազգի: Եւ արդէն լսումենք, որ Գերմանիան դուրս է ուղարկում դէպ ի Չինա-

տան տասնաւոր մարդիկ իւր առաւել հանճարեղ քարոզիչներից, Անգլիան հարիւրաւոր նաւեր իւր լայնարձակ մանուֆակտուրական յօրինուածներով բեռնաւորված — բայց մեք, Ռուսերս, մի՞թէ լայն ու ջրառատ Ամուրի բարեյարմար շրջակայքումը պէտք է ջանադիր լինինք հաստատելու այս կուսական երկրի մէջ կապալային գինետունք (կաբակներ) և գինեվաճառք:

Բայց ոչ. մեք հաւատում չենք, չկամինք հաւատալ մեզ հասած համբաւի ստուգութեանը: Մեք յոյս ունինք, որ Ամուրի մերձակայ սահմանը ազատ կը լինի կապալից. մեր կառավարութիւնը, որ ապացուցել է թէ խնամատար էր իւր հպատակների բարօրութեանը, անտարակոյս դադարեցնելու է իսկոյն այս անիրաւ ձգտողութիւնը մի անյագելի ագահութեան. և ի՞նչ մի անհրաժարելի հարկաւորութիւն դրդումէ ստիպագին, որ ոչ մի անկիւն մեր ընդարձակ Ռուսաստանի մէջ չմնար անազատ այս գարշելի ժանտախտից — կապալային բորոտութենից:

(Իրկ. Գ. Բ.)

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ,

Մնամ՝ յարգութեամբ

Ձեր անձնանուէր

Թէոդորոս Լալազարեանց:

Մարտի 2-ին, 1859 Թ.

Մոսկվա:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

ԽՏՐԱԴԻՄԱՑՈՒԹԵԱՆ (ՖԻԶԻՈԳՆՈՄԻԱՅԻ) ՎԵՐԱՅ․

Խտրադիմայութիւնը մի հմտութիւն է, որով կարելի է մարդու ներքինը իմանալ նորա արտաքին պատկերից, և մի մարդու բնաւորութիւնը և ձգտողութիւնը դատել, միտ դնելով նորա կերպարանքի բացատրութեանը։

«Բայց ֆիզիոգնոմիան» ասումեն շատ մարդիկ, «է մի խաբողական գիտութիւն․ նա տալիս միշտ անհաստատ կամ թէ տարապայման դատողութիւնք։ Եթէ մի մարդ տեղիք տար դորան, ապա կարող էր պատահել նորան, որ նա մի պատուելի մարդու հետ վարվէր, որպէս մի վատթարաբարոյ մարդու հետ, և մի շողոմարար, կեղծաւոր մարդ համարել շատ առաքինի անձն։»

Այս յանդիմանութիւնքը, ամենևին բան չունին ճշմարիտ ֆիզիոգնոմիկական գիտութեան հետ․ պատճառ, նա ոչինչ դատողութիւն չէ գործում մարդերի լաւ կամ վատ բարք ու վարքի մասին։

Ուրեմն ուղիղ չէ այն առաջարկութիւնը, թէ կարելի է, միտ դնելով ֆիզիոգնոմիայի կանոններին, դատել, արդեօք այս կամ այն մարդը բարեպաշտ է կամ թէ ոչ․ այդ կանոններից առաջնորդվելով կարելի է միայն եզրակացուցանել, արդեօք մի մարդ բարկացկոտ է թէ մեղմ, տխրամիտ է թէ խնդամիտ, զուարթ թէ մեղկ և դանդաղ, և այլն։

Մարդկային երեսը, որի վերայ մտածութեան փոփոխականութիւնը այնպէս պայծառ պատկերանումէ, գուցէ թէ աւելի զարմանալու արժանի էր իւր կազմածի պատճառով, որ հնարաւոր է կացուցանում հոգու ամեն մի շարժողութիւնը պատկերացնել նորա երեսի վերայ, որպէս մի հայելու մէջ։

Ինչ որ մեզ պիտոյ էր յուսալ կամ կասկածել որ և իցէ մարդուց, որ մեք տեսանումենք առաջին անգամը, յայտնվումէ առաջին

հայեացքից մի որոշեալ անպատմելի տպաւորութեամբ մեր վերայ, մի յատկութեամբ, որ գրաւում է մեր ուշադրութիւնը, բայց մեք կարող չենք վերլուծանել նորան, որ և մի անդամազննութեան տեղեակ խորագիտայ (Փիզիօգնոմիկ) համարում է միայն որպէս մինը այն անձնաւորական բազմազանութեններից, որ երեսի մէջ կերպարանագործվում են այն մկանների ձևաւորութեամբը, որ շարժվում են, երբ որ յաճախ կըրկնվում էր բարեացակամութեան, խստութեան, հպարտութեան կամ թէ արհամարհութեան յայտարարութիւնը:

Կան մարդիկ, որ բնութենից ստացել են այնպիսի մեծ սրատեսութիւն, որ չգիտելով և ոչ Փիզիօգնոմիայի կամ Անատոմիայի (անդամազննութեան) անունը անգամ, նայած չնայած մի մարդու երեսի, իսկոյն ըմբռնում են այն նուրբ գծագրութիւնքը, այն ձևակերպութիւնքը և նշանները բնաւորութիւն պատկերացնող շարժողութենների որ լինում են սրտում, և կեանքի խորհրդաւոր դրութենների մէջ ուղղում են իւրեանց ընթացքը միտ դնելով այս նշաններին, կամ, համարեա թէ միշտ պատճառ ունէին ապաշաւելու, եթէ չէին հնազանդված այս բնական ազդեցութեան նմանապիսի յորդորանքներին:

Այրացի ու կանացի սեռքը նախ և յառաջ քննում են միմեանց, արդեօք սիրու մասին յարմարաւոր էին նոքա իրեարու. այս բանի մէջ մինը կշռում էր միւսի պատուականութիւնը մանկութեան ու գեղեցկութեան կշռով: Տղամարդիկը իւրեանց մէջ, նախ և յառաջ համեմատում են փոխադարձաբար իւրեանց քաղաքական դրութիւնը կամ իւրեանց գոյքը, կամ թէ իւրեանց արդիւնաբերութիւնքը: Կանայքը քննում են իրեարու վերայ առաւելապէս, թէ ի՛նչ հագուստ ունէր այս և այն կինը, կամ թէ ի՛նչպէս էր կրում իւր անձը, և միւս յատկութիւնքը, որով կարող էին նոքա հաճոյանալ և սիրելի երևել:

Ընդհանրապէս, այն յատկութիւնքը, որ համեմատ էին մերոյիններին — ենթադրելով որ դոքա չէին բարձրացնում մի թշնամական նախանձաւորութեան վէճ — քարշում են մեզ դէպ ի այն անձինքը, որ նման են մեզ, և զարթեցնում են մեր մէջ ձգտողութիւն և սէր դէպ ի նոցա կողմը, մինչ ներհակ յատկութիւնքը մեզ բաց են խեթկում միմեանցից:

Միմեանց նման մարդիկը որոնում են միմեանց մէջ այն բանը, որով նոքա զանազանվում են, և միմեանցից զանազանները որոնում են այն բանը, որով նման են միմեանց։ Այր մարդը պատվում է կամ արհամարհում է. կին մարդը սիրում է կամ ատում է։

Ինչ որ վերաբերվում է դէպ ի Ֆիզիոգնոմիան, ապա պիտոյ է ասել, որ մարմնի մի առանձին անդամի յայտարար նշանները, ինքն ըստ ինքեան այն ժամանակը միայն խորհուրդ ունին, երբ որ միւս անդամների հետ ունին համաձայնութիւն, ըստ որում բոլոր մարդկային մարմինը բաղկացնում է մի ամբողջ բան, և որովհետև ամենայն տեսակ զուգաչափութիւն (սիմետրիա) ունի իւր առանձին բնաւորութիւնը և իւր առանձին յարակցութիւնքը։

Չկայ համարձակութիւն մի հատ նշանացոյցի հիման վերայ դատողութիւն հիմնել, ըստ որում անպայմանաբար հարկաւոր է համահաւաքում նշանացոյցների, որ կարողանայինք առնել մի ուղիղ եզրակացութիւն։ Այլև չկայ համարձակութիւն այս նշանացոյցների հիման վերայ եզրակացուցանել վերջին իսկական ընդունակութիւնքը հոգու, այլ միայն, ինչպէս յիշեցինք վերևումը, այն ձգտողութիւնքը և սովորութիւնքը, որ կախ են ընդհանուր կազմուածքից։

Ուրեմն պիտոյ է մեծ զգուշութեամբ վարվիլ Ֆիզիոգնոմիկական քննութենների մէջ, եթէ կամէինք մեր անձը ազատ կացուցանել այն սխալանքներից, որ կարող էին յառաջանալ սուտ և տարապայման եզրակացութենից։

Ս. Նազարեանց։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ·

Մոսկվայաբնակ քրիստոնեայ հասարակութիւնը Հայոց, անցեալ Փետրվարի 10-ին, զրկվեցաւ իւր դաւանակից անդամների մինից, Աննա տիկնոջից Փանեանց, որ քսանեւհինգ տարեկան հասակում աւարտեց իւր երկրաւոր կեանքի ասպարեզը, տրտմութեամբ լցուցանելով իւր սիրելի ամուսնու և գերդաստանի սիրտը ։ Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի ։ Հանգուցելոյ դագաղի վերայ եկեղեցու մէջ ասվեցաւ դամբանական ճառ, որ և պատուելի ունկնդիրների խնդրանքով հրատարակվում Հիւսիսափայլի մէջ, բացակայ հասարակութիւնը տպագրութեամբ մասնակից կացուցանելու ճառի բովանդակութեանը ։

ԵՂԲԱՐՔ ԵՒ ՔՈՅՐՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ·

Եթէ աչք ածելով նայումեմ ես այն հասարակութեան վերայ, որ հաւաքվել է այժմ մի վաղամահ սիրելու դագաղի չորս կողմը, ապա չեմ ես աւելի մօտաւոր անձը, որ ունէր իրաւունք հրատարակելու մեր հասարակաց զգացողութիւնքը մխիթարական ու քաջալերական խօսքերով ։ Ես չեմ աւելի մօտաւորը, որովհետև այս տեղ ներկայ են մարդիկ, որոնց հետ հանգուցեալը զուգաւորված էր բնութեան անմիջական կապերովը, ազգակցութեամբ ու արենակցութեամբ ։ Բայց և ես բաղդաւոր եմ եղած երկար տարիներով ճանաչել ու պատուել այն

գերդաստանը, որին պատկանում էր յաւերժացեալը. և ես բարեկամութեան սուրբ կապերով մօտ եմ եղած նորա ընտանեկան կեանքին, նորա գերդաստանի մէջ վայելելով գեղեցիկ ընկերական րոպէներ ու ժամեր շատ։ Ահա, այս բարոյական հիմքերի վերայ կամիմ այժմ, Աստուծոյ տաճարի մէջ մի քանի բառ խօսել ձեր հետ, եղբարք և քորք ի Քրիստոս։

Մեր քրիստոնեայ քոյրը, որի հողեղէն նշխարքը պատրաստվումենք այժմ տանել դէպ ի հանգիստ գերեզմանի, եղած է մի երկիւղած քրիստոնեայ կին, մի առաքինի, սիրող և սիրելի ամուսին, մի ազնիւ մայրասէր դուստր, մի քաղցր և սրտակից քոյր դէպ ի իւր հարազատքը, մի նազելի ու սիրելի անձն իւր ծանօթների և բարեկամների հետ։ Աստուծոյ անքննելի կամքը պարգևելով մի արու զաւակ երկու ամուսնակիցներին, կարճատև ծնողական բաղդաւորութեամբ ուրախացրեց նոցա սիրտը. բայց պատուելի ամուսնակիցքը անտրտունջ խոնարհելով Աստուծոյ տնօրէնութեանը, միշտ գոհաբանել են նորա սուրբ անունը, և ինչ որ պակաս էր նոցա ընտանեկան երջանկութեան համար, աշխատել են նոքա լցուցանել բարեգործութեամբ դէպ ի իւրեանց քրիստոնէական ընկերքը։ Այս երկու առաքինի ամուսնակիցների կեանքը անցանում էր մեղմ ու խաղաղ ընթացքով, և ամենայն ոք մեզանից նայելով մեր հանգուցեալ քուեր ծաղկափթիթ հասակին, ուրախանում էր այն յուսովը, թէ դեռ ևս շատ օրեր երջանկանալու են երկու ամուսինները այս աշխարհի վերայ։ Բայց ահա մի դժուար բժշկելի ցաւ, յանկարծ ձգում է հանգուցեալը հիւանդութեան մահճի մէջ, արագութեամբ զօրանում է օրէ օր, և մարդկային ճարտարութիւնը կարող է միայն քանի մի ժամանակ մեղմացնել հիւանդի չարչարանքը, առանց հնարաւորելու մի յաջող և ցանկալի վերջ. և այսպէս մահը քսանևհինգ տարու հասակում յափշտակում է մեր քրիստոնեայ քոյրը մեր սիրուց, մեր յոյսերից, մեր բարեկամութենից։

Ի՛նչ պիտոյ է մեզ ասել այս տեղ. ի՛նչ մի այլ խօսք, եթէ ոչ. «Տէր ետ և Տէր էառ. եղիցի անուն Տեառն օրհնեալ։» Եւ արդարև, մեզ տկար մահկանացուներիս, անարժան էր մարդկային իմաստութեամբ համարձակվիլ քննել Աստուծոյ ճանապարհները և խորհուրդները. պատճառ, «Ո՛չ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ոչ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր» ասում է Տէրը։ Սա ո՛չ թէ միայն մի փրկաւէտ խրատ է, որով պիտոյ է մեզ մխիթարվիլ այսպիսի դիպուածներում, ուր մեք հասկանում չենք Ամենաբարձրեալ էակի խորհուրդը մարդկեղէն բաների տնտեսութեան մէջ, այլև մի խոստովանութիւն սրտի, որ մեզ մահկանացուներիս, որոնց յայտնի է

միայն անցեալն ու ներկան, բայց գալոցը մնում է ծածուկ, պիտոյ է միշտ առաջնորդէ երկրաւոր կեանքի մէջ և ամենևին զուգախառնվի մեր հաւատի հետ: Ուրեմն մեք, որ կարող չենք երկրաւոր իմաստութեամբ վերահասու լինել տիրոջ խորհուրդներին, որովհետև մեր տրտմութեան նիւթի համար չկայ այսուհետև ոչինչ երկրաւոր գալոցք, ուրեմն, ասումեմ, արժան է մեզ ոչ թէ միայն երկիւղածութեամբ լռել ու հանդարտել, այլև յուսով և հաւատով դէպ ի վեր ուղղել մեր հայեացքը: Այսպիսի քրիստոնէական կանոնների վերայ հիմնաւորվելով, կարող ենք մեր հանգուցեալ քուերը բարի համարել այն հանգիստը, ուր այնքան վաղ հրաւիրել է նորան Աստուած, և քաջայոյս մխիթարութեամբ ձայն արձակել. «Տէր ետ և Տէր էառ:»

Բայց ես տեսանումեմ այս տեղ մի խորին տրտմութեամբ յաղթահարված մօր աղիողորմ արտասուք. այս տեղ կանգնած են լալագին ազնիւ քոյրեր, որ այնքան տարիք սիրով ու խաղաղութեամբ կենակից էին հանգուցելոյ հետ, և պատվումէին նորան իբրև իւրեանց նախամեծար քոյր, խորհրդակից բարեկամ և սրտակից օգնական կեանքի ասպարիզում. այս տեղ կանգնած է մի պատուելի տղամարդ, որ այդքան տարի նուիրել է հանգուցելուն իւր ամուսնական քնքուշ սէրը, որ իւր կեանքի ուրախութիւն ու տրտմութիւնը բաժանել է նորա հետ իբրև իւր հոգու սիրականի հետ, որ և հիւանդի չարչարանքի միջոցին եղել է անմեկնելի ընկեր, օգնական ու մխիթարիչ — Սոցանի՞ց ևս պիտոյ է մեզ պահանջել, որ համաձայնելով մեր հետ, ասէին. «Տէր ետ և Տէր էառ.» ի հարկէ, իմ քրիստոնեայ եղբարք ու քոյրեր. ի հարկէ: Սոքա ևս օրհնումեն Տէրը նորա շնորհի համար. պատճառ, մեր յաւերժացեալը մի շնորհ էր իւր բոլոր գերդաստանի համար: Բայց եթէ Տէրը այդպէս վաղ առել է նոցանից իւրեանց քաղցր սիրելին, այնու ամենայնիւ չէ առել բոլորովին. նորա յիշատակը միշտ կանաչ ու դալար, միշտ ծաղկափթիթ մնալու է իւր գերդաստանի և նորա բոլոր ծանօթների ու բարեկամների սրտում. ամէն:

Ս. Նազարեանց:

1859 Թ. Փետրվարի 12-ին

Մոսկվա:

1. *Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։*

2. *Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութենների, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութենների մասին։*

3. *Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրօպական մատենագրութենից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։*

Յանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. *կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով.* въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 *տետրակների գինը է* 8 *մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար* 9½ *մանէթ։*

Печатать позволяется. С. Петербургъ, Марта 5-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.